Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1380

83
L-41

83
Լ-41
Ա-ց

ՆԱԹԱՆ ԻՄԱՍՏՈՒՆ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

հեղինակութիւն

ԼԷՍՍԻՆԳԻ

LESSING'S

NATHAN DER WEISE.

Թարգմանեց

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

1878

ԹԻՖԼԻՍ

Հ. Լենֆրատեանցի եւ Ընկ. տպարանում.

20 03

Дозволено цензурою. Тифлисъ. 3 ноября 1877 г.

95433-42

1000-54 Բ

ԼԷՍՍԻՆԳԻ

ՆԱԹԱՆ ԻՄԱՍՏՈՒՆ

(ՆՈՒԷՐ Գ. ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑԻՆ)

LESSING'S

NATHAN DER WEISE

ARMENISCHE UEBERSETZUNG

VON

GEORG BARCHUDARIANZ

SEPARATABDRUCK AUS DER ZEITSCHRIFT «PORDZ»

ՆԱԹԱՆ ԻՄԱՍՏՈՒՆ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԼԷՍՍԻՆԳԻ

Introiate, nam et heic dii sunt!
Apud Gellium.

Մտէք, և այստեղ կան աստուածներ։
Գէլիուս։

(ՆՈՒԷՐ Գ. ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆԻՆ)

ԱՆՁԻՆՔ

ՍՈՒԼԹԱՆ ՍԱԼԱԴԻՆ։
ԶԻՏՏԱ, *նորա քոյրը։*
ՆԱԹԱՆ, *մի հարուստ հրէայ Երուսաղէմում։*
ՐԷԽԱ, *նորա որդեգիր դուստրը։*
ԴԱՅԱ, *մի քրիստոնէայ կին, որ ապրում է հրէայի տանը իբրև Ռէխայի ընկեր։*
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՃԱՐԱԿԱՆ ԱՍՊԵՏ։
ԴԷՐՎԻՇ։
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ։
ՄԻ ՎԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐ։
ԷՄԻՐ և Սալադինի ՄԱՄԷԼՈՒԿՆԵՐ։

Գործողութիւնը կատարվում է Երուսաղէմում։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

Նաթանի տան գաւիթը:

ՆԱԹԱՆ վերադառնալով ճանապարհորդութիւնից, ԴԱՑԱ դիմաւորում է նորան։

ԴԱՑԱ

Այս նա է: Նաթան:—Գոհութիւն Աստծոյ,
Որ դուք վերջապէս վերադառնում էք:

ՆԱԹԱՆ

Այո՛, գոհութիւն Աստուծոյ, Դա՛յա:
Բայց ե՞ր վերջապէս: Մի՞թէ աւելի
Շուտ էլ ուզում ես վերադառնալ,
Կամ կարո՞ղ էլ աւելի շուտ դալ:
Բաբելոն քաղաքն Երուսաղէմից
Մօտ երկու հարիւր մղոն հեռու է,
Երբ մարդ ստիպուած է իւր ճանապարհը
Ծըռել երբեմն աջ և երբեմն ձախ.
Այլ և հեշտ գործ չէ պարտքեր ժողովել,
Եւ շուտ չէ լինում:

ԴԱՑԱ

Բայց այդ միջոցին
Որքան տարաբաղդ պիտի դառնայիք,
Նաթան: Ձեր տունը....

ՆԱԹԱՆ

Այրվում էր: Արդէն

ZUUR ԱԲՆ ՍՍՌ

Ես այդ լսել եմ:—Աստուած տայ, որ ես
Արդէն ամեն բան իմացած լինիմ:

ԴԱՑԱ

Կարողէր շատ հեշտ բոլորը այրուել:

ՆԱԹԱՆ

Այն ժամանակը մենք կը շինէինք,
Դա՛յա, մի նոր և յարմարաւոր տուն:

ԴԱՑԱ

Ճշմարիտ է:—Բայց Ռէխան մաղ պրծաւ,
Որ մէջը այրուէր:

ՆԱԹԱՆ

Այրուէ՞ր: Ո՞վ, Ռէ՞խաս:—
Ո՛չ, այդ չեմ լսել:—Այն ժամանակը
Էլ պէտք չէր լինձ տուն:—Մաղ պրծաւ, այրուէր:—
Գուցէ և իրաւ արդէն այրուել է:
Ուղիղը ասա՛:—Սպանի՞ր լինձ, միայն
Երկար մի՛ տանջէր:—Այո՛ այրուել է:

ԴԱՑԱ

Թէ այրուած լինէր, մի՞թէ լինձանից
Կըլսէիք այդ:

ՆԱԹԱՆ

Ուրեմն լինչի՞
Վախեցնում ես լինձ:—Ռէ՞խա, իմ Ռէխա:

ԴԱՑԱ

Ձե՞ր, ձեր Ռէխա՞:

ՆԱԹԱՆ

Ո՛հ, թէ ստիպուէի
Կրկին յետ տալով նորան հարազատ
Զաւակս անուանել:

ԴԱՑԱ

Մի՞թէ բոլորը,
Ինչ որ դուք ունիք, ձերն էք անուանում
Նոյն իրաւունքով:

ՆԱԹԱՆ

Ոչինչ աւելի
Մեծ իրաւունքով: Բոլոր մնացածը
Բնութեան ու բաղդի է պարգևածը:
Միայն այս մի հատ սեփականութիւնն
Պարգևել է ինձ առաքինութիւնն:

ԴԱՑԱ

Ո՛հ, որքան թանկ էք վճարել տալիս
Ինձ ձեր բարութիւնն, եթէ բարութիւնն
Այդ նպատակով գործած, կարող է
Բարութիւն կոչուիլ:

ՆԱԹԱՆ

Այդ նպատակո՞վ:
Ի՞նչ նպատակով:

ԴԱՑԱ

Իմ խիղճը....

ՆԱԹԱՆ

Դա՛յա,
Թող առաջ պատմեմ....

ԴԱՑԱ

Խիղճս, ասումեմ....

ՆԱԹԱՆ

Ի՞նչ սիրուն կերպաս եմ գնել քեզ համար
Ես Բաբելոնում. շքեղ, ճաշակով:
Բէխայի համար անգամ չեմ բերել
Նորանից լաւը:

ԴԱՑԱ

Ի՞նչ օգուտ: Խիղճս,
Ասումեմ ես ձեզ, էլ չէ հանդարտվում:

ՆԱԹԱՆ

Շատ ցանկանումեմ տեսնել, թէ արդեօք
Կը հաւանի՞ս դու Դամասկոսումը
Քեզ համար ընտրած մատանին, կինդեր,
Կապերն ու շղթան:

ԴԱՑԱ

Դուք միշտ այդպէս էք:
Միայն թէ ընծայէք, միայն ընծայէք:

ՆԱԹԱՆ

Ընդունիր ինձնից նոյն յօժարութեամբ,
Ինչ յօժարութեամբ տալիս եմ ես քեզ—
Եւ լռիր:

ԴԱՑԱ

Լռիր: Ո՞վ է կասկածում,
Նաթան, որ ազնիւ և վեհաձն էք դուք:
Բայց սակայն....

ՆԱԹԱՆ

Սակայն ես մի հրէայ եմ:—
Անպատճառ այս ես ուզում դու ասել:

ԴԱՑԱ

Դուք աւելի լաւ գիտէք, ինչ որ ես
Ուզումեմ ասել:

ՆԱԹԱՆ

Ուրեմն լռիր:

ԴԱՑԱ

Ես լուռ եմ: Բայց թէ Աստծուն հակառակ
Բան դուրս գայ սրանից, որ ես չեմ կարող
Խափանել, փոխել—թող գայ ձեր գլխին:

ՆԱԹԱՆ

Թող իմ գլխին գայ:—Բայց ո՞ւր է Բէխան,
Ինչի՞ չէ գալիս:—Դա՛յա, մի՛ գուցէ
Խաբումես դու ինձ:—Արդեօք գիտէ՞նա,
Որ ես եկել եմ:

ԴԱՑԱ

Այդ ձեզ եմ հարցնում:
Դեռ ևս երկիւղից գողումեն նորա
Բոլոր ջղերը: Նորան ամեն տեղ
Կրակ է երևում: Քընի մէջ արթուն
Եւ արթնութեան մէջ քնած է նրա հոգին.

Նա մէկ անզգայ է անասունից
Եւ մէկ աւելի զգայուն քան հրեշտակ։

ՆԱԹԱՆ

Իմ խե՛ղճ երեխայ։ Այդ չենք մենք մարդիկ։

ԴԱՑԱ

Նա այս առաւօտ երկար պարկած էր
Խրփած աչքերով, ինչպէս մի մեռել։
Ցանկարծ վեր թռաւ և աղաղակեց.
«Լսի՛ր, այ լսի՛ր, ահա՛ գալիս են
Իմ հօր ուղտերը, լսի՛ր ահա և
Նրա անոյշ ձայնը»—ցետոյ աչքերը
Կրկին խառնուեցան և նորա գլուխը,
Որին էլ նեցուկ չէր նորա ձեռը,
Ընկաւ բարձի՞վրայ։ — Ես դուրս եմ վազում,
Եւ ինչ եմ տեսնում. իրաւ գալիս էք։
Եւ ի՞նչ զարմանք։ Նա բոլոր ժամանակ
Հոգով ձեզ մօտ էր — և նորա մօտ էր։ —

ՆԱԹԱՆ

Նորա մօ՞տ։ Ո՞ւմ մօտ։

ԴԱՑԱ

Նորա մօտ, որ Նրան
Կրակից ազատեց։

ՆԱԹԱՆ

Այդ ո՞վ էր, ո՞վ էր։—
Ո՞ւր է։ Ո՞վ փրկեց իմ Ռէխային, ո՞վ։

ԴԱՑԱ

Մի երիտասարդ տաճարական է,
Որ քանի մի օր սորանից առաջ
Դերի բերուեցաւ, և որի կեանքը
Խնայեց Սալադինն։

ՆԱԹԱՆ

Մի տաճարակա՞ն,
Որին խընայեց սուլթան Սալադին։

Մի պակաս հրաշք չէր կարող փրկել
Ռէխային, Աստուա՛ծ։

ԴԱՑԱ

Այո՛, կորած էր
Ռէխան, եթէ նա իւր անակնկալ
Ազատած կեանքը վստահ չենթարկէր
Կրկին վըտանգի։

ՆԱԹԱՆ

Ո՞ւր է նա, ո՞ւր է
Այդ ազնիւ մարդը։ Տա՛ր ինձ նրա ոտը։—
Անշուշտ տուիք նորան ձեզ մօտ մընացած
Գանձերից մի բան, բոլորը տուիք.
Եւ դեռ աւելի ևս խօստացաք։

ԴԱՑԱ

Ի՞նչպէս պիտ՝ տայինք։

ՆԱԹԱՆ

Ո՞չ, ո՞չ. չըտուիք։

ԴԱՑԱ

Եկաւ, ի՞նչտեղից, ոչ ոք չըգիտէ.
Գընաց և ոչ ոք չըգիտէ, թէ ո՞ւր։—
Տունը անծանօթ, միայն հետևելով
Մեր աղաղակին, վերարկուն ծածկած
Աներկիւղ վազեց ծուխ ու բոցի մէջ
Դէպի այն ձայնը, որ մեզ օգնութեան
Կանչում էր իւր մօտ։ Արդէն ամենքիս
Կորած էր թըւում, որ ծուխ ու բոցից
Դուրս գալով, յանկարծ կանգնեց մեր առաջ,
Հըզօր թևերի վերայ կըրելով
Իւր ազատածին։ Եւ մեր ցնծութեան,
Շնորհակալութեան ուշ չը դարձնելով,
Սառնութեամբ վայր դրեց իւր կողպուտը—
Եւ անյայտացաւ նա ամբոխի մէջ։

ՆԱԹԱՆ

Սակայն յոյս ունիմ, որ ոչ յաւիտեան։

ԴԱՑԱ

Ցետոյ առաջին օրերում տեսանք
Նորան ճեմելիս այն արմաւենի
Ծառերի տակը, որոնք կանգնած են
Ցարուցեալի սուրբ գերեզմանի շուրջ։
Մօտեցայ Նորան, շնորհակալութիւն
Արի, խնդրեցի և պահանջեցի,
Եւ աղերսեցի—էլի մի անգամ
Տեսնել այն անմեղ ու հեզ էակը,
Որ հանգստութիւն չունի, մինչև որ
Նորա առաջը ընկած չը յայտնէ
Լալով իւր սրտի շնորհակալութիւնն։

ՆԱԹԱՆ

Ցետոյ։

ԴԱՑԱ

Ի զուր։ Նա մեր աղաչանքին
Միշտ համբերը մընում. և դառը կատակ
Թափում էր նա միշտ, մանաւանդ ինձ վրայ...

ՆԱԹԱՆ

Մինչև այդպէսով նա ձեզ վախեցրեց....

ԴԱՑԱ

Ամենևին ոչ։ Ամեն օր կրկին
Խնդրում էի ես, ամեն օր նորից
Ծաղրում էր նա ինձ։ Ո՛րքան նեղութիւն
Կրեցի Նորանից։ Որքան նեղութեան
Ես էլի սիրով տանելու էի։—
Բայց վաղուց արդէն էլ չէ ճեմում նա
Այն արմաւենի ծառերի տակը,
Որոնք հովանի են մեր Քրիստոսի
Սուրբ գերեզմանին. և մարդ չը գիտէ,
Թէ ինչտեղ է նա։—Ի՞նչ էք զարմանում։
Ի՞նչ էք մտածում։

ՆԱԹԱՆ

Ես մտածում եմ

Արդեօք ինչպիսի տպաւորութիւն
Պիտի ունենայ այդ Բէխայի պէս
Մէկի հոգու վրայ։ Այդպէս անարգած
Տեսնել իւր անձը այն մարդուց, որին
Ստիպուած ես յարգել, և այդպէս մերժուիլ
Նորանից, որին ձգտում է սիրտդ։—
Իրաւ որ այդտեղ պէտք է իրար հետ
Երկար մնքառին գըլուխն ու սիրտը,
Ատելութիւնը արդեօք կը յաղթէ,
Թէ տրտմութիւնը։ Գուցէ ոչ մէկը.
Եւ այդ կռուի մէջ միջամտելով
Երևակայութիւնն ծընում է ցնորքներ,
Երբ մէկ գըլուխն է սրտի տեղ ըզգում
Եւ մէկ գլխի տեղ սիրտը մտածում։—
Վա՛յ փոփոխութիւն։—Եւ, թէ չեմ սխալվում,
Բէխան այդ վերջին դըրութեան մէջն է.
Նա երազում է։

ԴԱՑԱ

Բայց այնպէս պարկեշտ,
Այնպէս գեղեցիկ։

ՆԱԹԱՆ

Այո՛, բայց էլի
Երազում է նա։

ԴԱՑԱ

Մանաւանդ շատ թանկ
Է Նորա համար, եթէ ուզում էք—
Մի հաճոյք։ Նա իւր տաճարականին
Չէ համարում մի հողեղէն էակ,
Այլ հրեշտակ, որի պահպանութեանը
Մանուկ օրերից սիրով յանձնել էր
Իւր փոքրիկ սիրտը, որ ամպով պատած
Շրջում էր հետը նաև կրակի մէջ,
Եւ յանկարծ իբրև մի տաճարական
Ասպետ յայտնուեցաւ։—Ոչ, մի՛ ծիծաղէք—
Ո՞վ գիտէ։—Գոնէ ժպտելով թողէք

Նորան մի ցընորք, որով իրար հետ
Սերտ միացած են հրէան, քրիստոնէան
եւ մուսուլմանը—մի քաղցր ցընորք։

ՆԱԹԱՆ

Այո՛, ինձ համար նոյնպէս շատ քաղցր։—
Գնա՛, աղնի՛ւ Դայա, տես ինչ է անում
Րէխան. իմացիր արդեօք կարող եմ
Նորա հետ խօսիլ։—Ցետոյ կորոնեմ
Ես այն վայրենի եւ ինքնահաճոյ
Պաշտպան հրեշտակին։ Թէ նա դեռ ևս
Շրջում է մեր մէջ իբրև բիրտ ասպետ,
Անշուշտ կը գտնեմ նորան և հետս
Կը բերեմ այստեղ։

ԴԱՅԱ

Շատ էք խօստանում։

ՆԱԹԱՆ

Այն ժամանակ թող քաղցր ցընորքը
Ցեղի տայ քաղցր ճշմարտութեանը։—
Հաւատա՛, Դա՛յա, որ մարդու համար
Մարդը աւելի թանկ է հրեշտակից։—
Ի հարկէ ժիգոհ չես լինի ինձնից,
Որ առողջանայ Ռէխան այդ ցնորքից։

ԴԱՅԱ

Դուք շատ բարի էք և շատ էլ չար էք։
Գընում եմ։—Ահա՛ ինքը գալիս է։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ՌԷԽԱՆ և ԱՌԱՋԻՆՆԵՐԸ.

ՌԷԽԱ

Ուրեմն դո՞ւք էք, դուք, սիրելի՛ հայր։
Ես կարծում էի, թէ միայն ձեր ձայնն էք
Ուղարկել առաջ։ Ո՞ւր էք։ Ի՞նչ լեռներ,

Ի՞նչ անապատներ, էլի ի՞նչ գետեր
Բաժանում են մեզ։ Միայն մէկ պատ կայ
Մեր երկուսի մէջ, և չէք շտապում ձեր
Ռէխային գրկել, այն խեղճ Ռէխային,
Որ փոքր մընաց այրուէր առանց ձեզ։—
Դուք մի՛ սարսափիք—միայն փոքր մընաց։
Ո՛հ, ինչ զզուելի մահ է այրուիլը։

ՆԱԹԱՆ

Որդեակ, իմ որդեակ։

ՌԷԽԱ

Դուք պիտի՛ անցնէիք
Եփրատն ու Տիգրիս և Ցորդանանը—
Ո՞վ գիտէ էլի ուրիշ ինչ ջրեր։—
Ի՛նչպէս դողում էր սիրտս ձեզ համար,
Քանի որ կրակը այնպէս մօտ չէր ինձ։
Բայց այն օրից, երբ կրակն ինձ մօտեցաւ,
Զրի մէջ մեռնիլը ես համարում եմ
Իբրև զովութիւն, իբրև քաղցրութիւն,
Իբրև փրկութիւն։—Բայց դուք չէք խեղդուել,
Ես էլ չեմ այրուել։ Ուրեմն օրհնենք
Աստծոյ անունը և ուրախանանք։
Նա՛, նա՛ անցկացրեց ձեզ ձեր նաւակով
Այն նենգ գետերից իւր աներևոյթ
Սուրբ հրեշտակների թեւերի վերայ,
Նա՛, նա՛ պատուիրեց և իմ հրեշտակին,
Որ տեսանելի կերպով իւր սպիտակ
Թեւերի վերայ հանէր ինձ կրակից։—

ՆԱԹԱՆ (ինքն իրան.)

Հը՛, սպիտակ թեւեր։ Տաճարականի
Սպիտակ տարաձաձ վերարկուն է այդ։

ՌԷԽԱ

Որ տեսանելի կերպով հանէր ինձ
Նա կրակի միջից, իւր թեւերովը
Բոցը ճեղքելով։—Այսպէս ուրեմն

Ես հրեշտակ տեսայ երես առ երես,
Եւ իմ հրեշտակին։

ՆԱԹԱՆ

Արժանի էիր,
Ռէխա, այդ բանին. և դու նորա մէջ
Տեսնելու չէիր ոչինչ աւելի
Գեղեցիկ մի բան, քան թէ նա քո մէջ։

ՌԷԽԱ (ժպտելով)

Ո՞ւմն էք դորանով շողոքորթում, հայր,
Հրեշտակի՞ն, թէ ձեզ։

ՆԱԹԱՆ

Բայց եթէ մի մարդ,
Մի մարդ, ինչպիսի որ բընութիւնը
Ցոյց է տալիս մեզ իւրաքանչիւր օր,
Արել է քեզ այդ ծառայութիւնը,
Պէտք է քեզ համար մի հրեշտակ լինէր,
Պէտք է լինէր և լինելու էլ էր։

ՌԷԽԱ

Ոչ թէ այդպիսի, այլ մի իսկական,
Իրաւ իսկական մի հրեշտակ էր նա։—
Չէ՞ որ, հայր, դուք ինձ սովորեցրել էք,
Թէ կան հրեշտակներ, թէ Աստուած հրաշքներ
Կարող է գործել այն անձանց համար,
Որոնք սիրում են իրան։ Եւ ես էլ
Սիրում եմ նորան։

ՆԱԹԱՆ

Նա էլ սիրում է
Քեզ և ամեն ժամ հրաշքներ է գործում
Քեզ համար և քեզ նմանների համար,
Միշտ էլ գործել է աշխարհի սկզբից։

ՌԷԽԱ

Ինձ շատ ախորժ է լսել այդ բանը։

ՆԱԹԱՆ

Ի՞նչ։ Որովհետև շատ բընական է,

Սովորական է, որ քեզ փրկել է
Մի տաճարական, մի՞թէ այդպիսով
Դա պակաս հրաշք է։—Մեծ հրաշքը այն է,
Երբ որ ճշմարիտ, իսկական հրաշքը
Այդպէս առօրեայ կարող է լինել,
Եւ պէտք է լինի։ Առանց հանրական
Այդ հրաշքի դժուար թէ մի խոհական
Անձն համարէր այն բանը հրաշք,
Ինչ որ մանուկներն են միայն հրաշք կանչում,
Որոնց այն, ինչ որ միայն անսովոր է,
Միայն ինչ որ նոր է, այն է զարմացնում։

ԴԱՑԱ

Ուզում էք դուք այդ նրբութիւններով
Խպառ խանգարել նորա ուղեղը,
Որ առանց դորան արդէն խառնուած է։

ՆԱԹԱՆ

Թող, Դաչա։—Մի՞թէ պակաս հրաշք է
Ռէխայիս համար, որ նորան փրկեց
Մի այնպիսի մարդ, որ ինքը նոյնպէս
Նախ պիտի փրկուէր ոչ փոքր հրաշքով։
Այո՛, մեծ հրաշք է։ Որովհետև ո՞վ
Արդեօք լսել է, որ Սալադինը
Խընայած լինի երբէք կեանքը մի
Տաճարականի, որ երբ և իցէ
Մի տաճարական նրանից գթութիւն
Պահանջած լինի, կամ սպասած լինի.
Որ առաջարկել կարող չէ նորան
Իւր ազատութեան համար ոչ ինչ բան,
Բացի իւր մաշկէ գօտուց ու սրբից։

ՌԷԽԱ

Այդպէս է մտածում հայրս իմ մասին։—
Այդ պատճառով իսկ նա մի ասպետ չէր,
Այլ միայն այդպէս երևում էր մեզ։—
Որ տաճարականն է գալիս այստեղ
Ուրիշ կերպ, եթէ ոչ մահ ստանալու.

Ո՞ր է նոցանից Երուսաղէմում
Ազատ պտտում. ուրեմն ի՞նչպէս
Նոցանից մէկը գիշեր ժամանակ
Ինքնակամ կարող էր գալ ինձ փրկել։

ՆԱԹԱՆ

Տես ինչ սրամիտ է։ Այժմ դու խօսիր,
Դա՛յա, քեզանից լսեցի, որ նա
Բերուել է այստեղ իբրև մի գերի։
Անշուշտ աւելի բան կը գիտենաս։

ԴԱՑԱ

Այո՛—իհարկէ այդպէս են ասում։—
Բայց նոյն ժամանակ այս էլ են ասում,
Որ Սալադինը տաճարականի
Կեանքը խնայել է, որովհետև նա
Իբր նման է իւր եղբայրներից
Մէկին, որ նորան շատ սիրելի էր։
Բայց որովհետև քսան տարի շատ է,
Ինչ որ մեռել է։—Ի՞նչ էր անունը,
Ես այդ չըգիտեմ, կամ ի՞նչ եղաւ նա—
Այդ էլ չըգիտեմ։—Եւ այդ բոլորը
Թըվում է այնքան անհաւատալի,
Որ գուցէ ոչ ինչ հիմնաւոր բան չէ։

ՆԱԹԱՆ

Դա՛յա, ինչի՞ է անհաւատալի։
Արդեօք պատճառը մի՞ն է—ինչպէս որ
Դա պատահում է—որ մի աւելի
Անհաւատալի բանին հաւատանք։—
Ինչի՞ չէր կարող Սալադինը, որ
Այնպէս սիրում է առհասարակ իւր
Բոլոր քոյրերին և եղբայրներին,
Փոքր ժամանակ առանձին սիրել
Իւր մէկ եղբորը։—Միթէ երկու դէմք
Չեն կարող լինել իրարու նման։—
Միթէ ոչ ինչ հետք չէ թողնում մի հին
Տպաւորութիւնն։—Ո՞ր օրից է, որ

Նոյնը չէ ազդում մի և նոյն բանը։—
Էլ ո՞ւր է այստեղ անհաւատալին։—
Այո՛, իհարկէ, իմաստուն Դա՛յա,
Դու չես համարում այդ բանը հրաշք։
Եւ քո հրաշքերը միայն կարօտ են....
Ուզում եմ ասել, միայն արժանի են,
Որ հրաշք համարուին։

ԴԱՑԱ

Դուք ծաղրում էք ինձ։

ՆԱԹԱՆ

Որովհետև դու էլ ինձ ես ծաղրում։—
Բայց էլի, Ռէխա, քո փրկութիւնը
Այնպիսի հրաշք է, որ հնարաւոր է
Միմիայն Նորան, որ արքաների
Ամենասաստիկ որոշումները,
Ամենաանդուսպ նախագիծները
Կառավարում է բարակ թելերով,
Խաղալով—գուցէ և կատակելով։

ՌԷԽԱ

Հա՛յր, թէ սխալվում եմ, ապա դուք գիտէք,
Որ ես ակամայ եմ միայն սխալվում։

ՆԱԹԱՆ

Ընդհակառակը, դու իմ խրատները
Ուզում ես լսել։—Տես, ահա՛ ճակատ
Այսպէս կամ այնպէս կամարած, մի քիթ
Աւելի այսպէս, քան այնպէս ծռած,
Ցոնքեր, ոլորած մի սուր կամ թէ բութ
Ոսկոռի վերայ, մի անկիւն, մի ծալ,
Մի բերան, չնչին մի նշան կոպիտ
Մի Եւրոպացու երեսի վերայ—
Կրակից փրկում է քեզ Ասիայում։
Մի՞թէ սա հրաշք չէ, թերահաւատնե՛ր։
Էլ ի՞նչ է ի զուր անհանգիստ անում
Դուք հրեշտակներին։

ԴԱՅԱ

Վնասն ի՞նչ է. Նաթան—
Եթէ իրաւունք կըտաք ինձ ասել—
Մեզ մի հրեշտակից փրկուած համարել,
Քան թէ մի մարդուց։ Արդեօք այդպէսով
Աւելի մոտիկ չէ ըզգում իրան
Մարդ իւր փրկութեան անիմանալի
Սկզբնապատճառին։

ՆԱԹԱՆ

Մեծամտութիւն,
Մեծամտութիւն, աւելի ոչ ինչ։
Երկաթէ կաթսան ուզում է հանուիլ
Կրակից արծաթէ մի ունելիքով,
Կարծելով այդպէս ինքն էլ կը դառնայ
Արծաթէ կաթսայ։—Վնասն ի՞նչ է. Դա՛յա,
Հարցնում ես դու ինձ, վնասն ի՞նչ է։ Ես էլ
Կարող եմ հարցնել, օգուտը ի՞նչ է։—
Որովհետև քո ասած խօսքերը.
«Այդպէս ըզգում է մարդ իրան Աստծուն
Աւելի մօտիկ,» անմտութիւն են
Կամ հայհոյութիւն։—Բայց և վնաս կայ,
Անշուշտ կայ վնաս։—Ահա՛ լսեցէք։—
Չէ՞ որ ուզում էք դուք այն էակին,
Որ քեզ ազատեց—հրեշտակ է, թէ մարդ—
Փոխարէն անել աւելի մեծ մեծ
Ծառայութիւններ, մանաւանդ թէ դու։
—Բայց մի հրեշտակին, ասացէք, ի՞նչ մեծ
Ծառայութիւններ կարող էք անել։
Կարող էք նրանից շնորհակալ լինել,
Ուղարկել նորան ձեր հառաչանքը,
Աղօթել նորան, զմայլած արտասուք
Թափել առաջը, կարող էք նորա
Տօնին ծոմ պահել, ողորմութիւն տալ։—
Բայց այդ ոչինչ է։—Ես կարծում եմ, որ
Դորանով դուք և մարդիկ աւելի

Կօգտուիք, քան թէ նա։ Ձեր ծոմ պահելով
Նա չի գերանայ, չի հարստանայ
Ձեր ողորմութեամբ, ձեր զմայլմամբ
Փառքը չի աւելանայ, ոչ էլ աւելի
Հըզօր կըդառնայ նա ձեր հաւատով։—
Այնպէս չէ՞։—Սակայն մի մարդ։

ԴԱՅԱ

Ի հարկէ,
Մարդը աւելի միջոց կը տար մեզ,
Որ փոխարէնը մենք էլ նրա համար
Մի բան անէինք։ Եւ, գիտէ Աստուած,
Թէ ինչպէս սրտով ցանկանում էինք։
Բայց նա չէր ուզում, նա չէր կարօտում.
Նա այնպէս գոհ էր ինքը իրանով,
Ինչպէս մի հրեշտակ, ինչպէս կարող է
Լինել միայն հրեշտակ։

ՐԷԽԱ

Բայց երբ վերջապէս
Նա անյայտացաւ....

ՆԱԹԱՆ

Ի՞նչ, անյայտացա՞ւ—
Անյայտացա՞ւ նա։—Էլ չերևեցա՞ւ
Նա արմաւենի ծառերի տակը։—
Ի՞նչ, դուցէ և աւելի հեռու
Որոնել էք նրան։

ԴԱՅԱ

Ո՛չ, այդ չենք արել։

ՆԱԹԱՆ

Ո՞չ, Դա՛յա։ Ապա հիմա տես վնասը։—
Ո՛վ դուք քարասիրտ, ցնորասէր կանայք։
Եթէ որ հիմա ձեր այդ հրեշտակը
Հիւանդացած է.....

ՐԷԽԱ

Հիւանդացա՞ծ է.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ ԱԿԱԴԵՄԻԱ
1000-ԵԿ

ԴԱՑԱ

Հիւանդացած է։ Ո՛չ, այդ չի լինի։

ՐԷԽԱ

Ո՛հ, ինչ սարսուր է բռնում ինձ, Դայա —
Ճակատս միշտ տաք, կարծես թէ յանկարծ
Սառուց փոխուեցաւ։

ՆԱԹԱՆ

Նա ֆրանկ է, տեղիս
Օդին անսովոր։ Երիտասարդ է.
Նա սովորած չէ ծանր աշխատանքին,
Սովին, անքնութեան։

ՐԷԽԱ

Հիւանդ է, հիւանդ։

ԴԱՑԱ

Նաթանն ասում է, որ կարելի է։

ՆԱԹԱՆ

Հիմա պարկած է հիւանդ և չունի
Նա ոչ բարեկամ և ոչ էլ դրրամ,
Որ բարեկամներ վարձէ իւր համար։

ՐԷԽԱ

Ո՛հ, հայր։

ՆԱԹԱՆ

Ընկած է, անխնամ, անհանգիստ
Եւ անմխիթար, ցաւերով տանջուած
Եւ մահուան աւար։

ՐԷԽԱ

Ի՞նչտեղ, այդ ի՞նչտեղ։

ՆԱԹԱՆ

Նա, որ քեզ համար, քեզ համար, որին
Երբէք չէր տեսել — հերիք է ասել
Մի մարդու համար — իրան կրակը ձգեց.....

ԴԱՑԱ

Նաթան, խնայեցէք։

ՆԱԹԱՆ

Որ իւր փրկածին
Զուզեց աւելի մօտիկ ճանաչել,
Զուզեց էլ տեսնել, որ չը լսէր նրա
Շնորհակալութիւնն....

ԴԱՑԱ

Խնայեցէք սորան։

ՆԱԹԱՆ

Եւ այսուհետև տեսնել չէ ուզում,
Եթէ ոչ կրկին ազատել նորան —
Որովհետև նա մի մարդ է....

ԴԱՑԱ

Նաթան,
Հերիք է, տեսէք։

ՆԱԹԱՆ

Եւ նա մեռնելով
Բընաւին չունի մխիթարութիւն,
Բացի այդ գործի գիտակցութենից։

ԴԱՑԱ

Հերիք է, Նաթան, սպանում է՛ք սորան։

ՆԱԹԱՆ

Եւ դու սպանեցիր նորան, այդպէսով
Կը սպանէիք նրան։ — Րէխա, տուաջս
Դեղ է և ոչ թոյն։ Նա կենդանի է։ —
Ուշքի ե՛կ, Ր՛էխա։ — Դուցէ հիւանդ չէ
Նա մինչև անգամ։

ՐԷԽԱ

Իրաւ մեռած չէ՞։ —
Իրաւ հիւանդ չէ՞։

ՆԱԹԱՆ

Անշուշտ մեռած չէ։

Աստուած վարձատրում է բարի գործը.
Արդէն իսկ այստեղ։—Այժմ հասկանում ես,
Թէ որքան հեշտ է երկիւղած լինել,
Քան բարի գործել, թէ ինչպէս դանդաղ
Մարդը յօժար է երկիւղած լինել—
Երբեմն որոշ չը հասկանալով
Իւր նպատակը—որ կարողանայ
Բարի չը գործել։

ՐԷԽԱ

Ո՛հ, հայր, մի՛ թողնէք
Էլ այսուհետև Ռէխային մենակ։—
Գուցէ ուրիշ տեղէ գընացել նա։—

ՆԱԹԱՆ

Այո՛—անկասկած։—Ահա տեսնում եմ
Հետաքրքրութեամբ զննում է այնտեղ
Մի մահմէդական բարձած ուղտերս։
Զը գիտէք, ո՞վ է։

ԴԱՑԱ

Ձեր դէրվիշն է։

ՆԱԹԱՆ

Ո՞վ։

ԴԱՑԱ

Դա ձեր դէրվիշն է, շախ խաղացողը։

ՆԱԹԱՆ

Ալ—հաճիւն, մի՞թէ։

ԴԱՑԱ

Այժմ Սուլթանի
Գանձապահն է նա։

ՆԱԹԱՆ

Ի՞նչպէս, Ալ—հաճիւն։
Մի՞ գուցէ կրկին երազում ես դու։—
Նա է—այո՛ նա—այստեղ է գալիս։—
Շուտ ներս գընացէք։—Ի՞նչ պիտի լսեմ։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵԽՈՅԹ

ՆԱԹԱՆ և ԴԷՐՎԻՇ

ԴԷՐՎԻՇ

Դէ՛հ, լաւ բաց արէք դուք ձեր աչքերը,
Որքան կարողէք։

ՆԱԹԱՆ

Դո՞ւ ես, թէ դու չես։—
Դէրվիշ, ինչ շքեղ հանդերձ ես հագել....

ԴԷՐՎԻՇ

Հ՛ը, ի՞նչ է։ Մի՞թէ դէրվիշը ոչինչ
Բան չէ դառնալու։

ՆԱԹԱՆ

Ինչի չէ։—Միայն
Ես միշտ կարծում եմ, որ մի ճշմարիտ—
Ճշմարիտ դէրվիշ—ինքն էլ չի ուզի,
Որ մի բան դառնայ։

ԴԷՐՎԻՇ

Մարգարէն վըկայ,
Գուցէ իրաւ է, որ իսկ դէրվիշ չեմ։—
Բայց երբ ստիպուած ես—

ՆԱԹԱՆ

Ստիպուա՞ծ ես, դէրվիշ։
Դէրվիշը ստիպուա՞ծ։ Ոչ ոք ստիպուած չէ
Ստիպուած լինելու։ Դէրվիշը ստիպուա՞ծ։
Բայց ի՞նչ բանի մէջ։

ԴԷՐՎԻՇ

Ինչ որ խնդրում են
Նորան և ինչ որ ինքը դէրվիշը
Լաւ է համարում. այ ինչ բանի մէջ։

ՆԱԹԱՆ

Վըկայ է Աստուած, ուղիղ ես ասում։—

Մարդ, թող գրկեմ քեզ։— Ի հարկէ դու դեռ
իմ բարեկամն ես։

ԳԷՐՎԻՇ

Բայց դեռ չէք հարցնում,
թէ ի՞նչ եմ դառել։

ՆԱԹԱՆ

Ինձ համար մէկ է,
թէ ինչ ես դառել։

ԴԷՐՎԻՇ

Մի՞թէ չէի կարող
Ստանալ այնպիսի մի պաշտօն, որ իմ
Բարեկամութիւնը յարմար չէ ձեզ։

ՆԱԹԱՆ

Թէ քո սիրտը դեռ դէրվիշի սիրտ է,
Կը վստահանամ բարեկամանալ։
Ի՞նչ է պաշտօնդ, հագիդ հանդէրձը։

ԴԷՐՎԻՇ

Հանդերձին նոյնպէս պէտք է պատիւ տալ։—
Ասացէք տեսնեմ, ի՞նչ կարող էի
Ես ձեր կարծիքով լինել ձեր տանը։

ՆԱԹԱՆ

Աւելի ոչինչ, այլ միայն դէրվիշ։
Եւ նոյն ժամանակ գուցէ — խոհարար։

ԴԷՐՎԻՇ

Հա՛, որ կորցնեմ արհեստս ձեզ մօտ։—
Խոհարա՞ր։— Այո՛։ Գուցէ և ծառայ։—
Խոստովանեցէք, Սալադինը ինձ
Աւելի լաւ է ճանաչում ձեզնից։ —
Այժմ նորա մօտ գանձապահ եմ ես։

ՆԱԹԱՆ

Դո՞ւ — նորա մօտ ես։

ԴԷՐՎԻՇ

Հասկացէք, միայն

Փոքր գանձինը, տընականինը,
Որովհետև մեծ գանձը դեռ ևս
Կառավարում է սուլթանի հայրը։

ՆԱԹԱՆ

Նրա տունը մեծ է։

ԴԷՐՎԻՇ

Աւելի մեծ է,
Քան թէ կարծում էք։ Ամեն աղքատ էլ
Նորա տանից է։

ՆԱԹԱՆ

Բայց Սալադինը
Այնպէս թշնամի է աղքատներին։—

ԴԷՐՎԻՇ

Որ կամենում է բոլորին ջնջել,—
Թէև այդպէսով ինքն աղքատանար։

ՆԱԹԱՆ

Շատ լաւ է։ Ես էլ այդպէս եմ մտածում։

ԴԷՐՎԻՇ

Առանց դորան էլ նա մի աղքատ է։—
Ամեն երեկոյ նրա գանձարանը
Աւելի դատարկ է, քան դատարկը։
Մակընթացութիւնը առաւօտը
Որքան և բարձր է, կէսօրին արդէն
Իսպառ իջել է։—

ՆԱԹԱՆ

Մեծ մասը գնում է
Խողովակներով, որոնց — հընար չէ
Լցնել, կամ փակել։

ԴԷՐՎԻՇ

Այդպէս է։

ՆԱԹԱՆ

Գիտեմ։

ԴԷՐՎԻՇ

Ի հարկէ վատ է, երբ իշխանները
Անգղեր են և շուրջ նոցա գեշեր են.
Բայց երբ իրանք են գեշեր անգղերով
Պատած, տան անգամ աւելի վատ է։

ՆԱԹԱՆ

Ո՛հ, ո՛չ, ո՛չ, դէրվիշ։

ԴԷՐՎԻՇ

Շատ լաւ է ք խօսում։—
Կուզէք, ի՞նչ կը տաք, ձեզ տամ իմ տեղը։

ՆԱԹԱՆ

Քեզ ի՞նչ է տալիս, դէրվիշ, քո տեղը։

ԴԷՐՎԻՇ

Ի՞նձ։ Շատ չէ։ Բայց ձեզ, ձեզ մեծ օգուտներ
Կարող է բերել։ Երբ գանձարանում
Տեղատուութիւն է — և այդ բանը շատ
Շուտ շուտ է լինում — ապա բայց կանէք
Ձեր փականքները. փոխ կը տաք, կառնէք
Ուզած տոկոսը։

ՆԱԹԱՆ

Յետոյ տոկոսի

Տոկոսը։

ԴԷՐՎԻՇ

Անշուշտ։

ՆԱԹԱՆ

Մինչև գումարը

Տոկոսի փոխուի։

ԴԷՐՎԻՇ

Այդ ձեզ չէ գրաւում։
Ուրեմն իսկոյն վերջ տանք փոխադարձ
Բարեկամութեան։ Իրա՛ւ, ես մեծ յոյս
Ունէի ձեզ վրայ։

ՆԱԹԱՆ

Իրա՞ւ։ Այդ ի՞նչպէս։

ԴԷՐՎԻՇ

Որ դուք կօգնէք ինձ պատուով կատարել
Պաշտօնս, որ միշտ բաց է լինելու
Ձեր արկղն ինձ համար։ — Տարակուսո՞ւմ էք։

ՆԱԹԱՆ

Հասկանանք միմեանց։ Պէտք է որոշել։—
Դու, դու կարող ես։ Դէրվիշ Ալ-Հաֆին
Կարող է ինձ վրայ միշտ վստահ լինել։—
Սակայն սուլթանի գանձապահ Հաֆին,
Որ—որի համար։

ԴԷՐՎԻՇ

Զիմացայ արդեօք։
Դուք միշտ բարի էք, որքան և խելօք.
Դուք միշտ խելօք էք, որքան իմաստուն։
Բայց համբերութիւն։ Այն, ինչով Հաֆին
Զանազանվում է, շուտով չի լինի։—
Տեսէք այս զգեստը, որ պարգևել է
Ինձ Սալադինը։ Առաջ քան թէ սա
Գոյնը կը փոխէ և կը հընանայ,
Ինչպէս վայելուչ է մի դէրվիշին,
Կը կախուի գամից Երուսաղէմում,
Եւ ես կը լինիմ գանգէսի ափին,
Ուր բոբիկ ոտով տաք աւազի վրայ
Ուսուցիչներիս հետ կը թափառեմ։

ՆԱԹԱՆ

Այդ քեզ յարմար է։

ԴԷՐՎԻՇ

Եւ շախ կը խաղամ։

ՆԱԹԱՆ

Քո ամենամեծ հարստութիւնն է։

ԴԷՐՎԻՇ

Տեսէք թէ ինչով հրապուրեցին ինձ։—

Որ հնար ունենամ ես էլ չը մուրալ,
Հարուստ երևիլ աղքատների մոտ,
Մի ակնթարթում հարուստ աղքատին
Ամենաաղքատ հարստի փոխել:

ՆԱԹԱՆ

Մի՞թէ դորանով:—

ԴԷՐՎԻՇ

Աւելի ևս
Մի անհամ բանով: Առաջին անգամ
Ազդեց ինձ վերայ շողոքորթութիւնն:
Ինձ շողոքորթեց Սալադինը իւր
Բարեսիրտ ցնորքով:—

ՆԱԹԱՆ

Ա՞յն է:

ԴԷՐՎԻՇ

«Աղքատը
« Միայն գիտէ, ինչէ աղքատութիւնը,
« Աղքատը գիտէ աղքատին տալու
« Լաւ եղանակը: Նախորդդ, ասաց,
« Հետս անչափ կոշտ ու սառն էր վարվում.
« Տալիս էր, սակայն այնպէս ակամայ.
« Այնպէս խստութեամբ հարց ու փորձ անում
« Ստացողի մասին. բաւական չէ, որ
« Ծանօթանում էր կարօտութեան հետ,
« Ուզում էր նաև պատճառն իմանալ,
« Որ այդ պատճառին համեմատ կշռէր
« Ողորմութիւնը: Այդպէս չի լինի
« Ալ-Հաֆին: Այդպէս անդութ գթասիրտ
« Չի ներկայացնի նա Սալադինին:
« Ալ-Հաֆին նման չէ կեղտով լցուած
« Խողովակներին, որոնք ընդունած
« Պարզ ջուրը պղտոր վերադարձնում են:
« Ալ-Հաֆին ևս ինձ պէս է ըզգում,
« Ալ-Հաֆին ևս ինձ պէս մրտածում:»—
Այնպէս անոյշ էր սալում որսորդը,

Մինչև թռչունը ընկաւ ցանցի մէջ:—
Ո՛հ, ես խեղկատակ:—Մի խեղկատակի
Խեղկատակն եմ ես:

ՆԱԹԱՆ

Հանդարտ, իմ դէրվիշ
Հանդարտ:

ԴԷՐՎԻՇ

Ի՞նչ:—Մի՞թէ խեղկատակութիւն
Չէ հաղարաւոր մարդկանց նեղացնել
Գրգռել, կողոպտել, տանջել ու խեղդել
Եւ մի քանիսի համար մարդասէր
Երևիլ ուզել: Խեղկատակութիւն
Չէ, ապա ի՞նչէ Աստուած ճեանալ,
Որի գթութիւնն առանց խտրութեան
Թէ չար, թէ բարի արարածներին,
Թէ կանաչ դաշտին, թէ անապատին
Տալիս է անձրև ու պայծառ արև—
Երբ չունիս նորա անսպառ ձեռը:
Խեղկատակութիւն չէ՞, հարցնում եմ ձեզ....

ՆԱԹԱՆ

Լա՛ւ, բաւական է:

ԴԷՐՎԻՇ

Ո՛չ, թողէք յիշեմ
Նմանապէս և իմ խեղկատակութիւնն:—
Խեղկատակութիւն չէ՞, այդ բանի մէջ
Լաւ կողմը տեսնել, և այդ պատճառով
Մասնակից լինել: Հ՞ը, ի՞նչէք ասում:

ՆԱԹԱՆ

Ալ-Հաֆի, շտապիր շուտով հեռանալ
Քո անապատը: Ես վախենում եմ,
Որ դու մարդկանց մէջ գուցէ մոռանաս
Քո մարդ լինելը:

ԴԷՐՎԻՇ

Ուղիղ է: Ինքս էլ

Վախենումեմ ես։ Մընացէք բարով։

ՆԱԹԱՆ

Կաց, ի՞նչ ես շտապում։—Մի՞թէ կը փախչի
Քո անապատը։—Ալ-Հաֆի, սպասի՛ր։
Չէ լսում—գընաց։ Ուզումէի մեր
Տաճարականի մասին բան հարցնել։
Անշուշտ ճանաչում կը լինի նորան։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ԴԱՑԱ շտապով ներս մտնելով, ՆԱԹԱՆ։

ԴԱՑԱ

Նաթա՛ն, Նաթա՛ն։

ՆԱԹԱՆ

Հ՞ը։ Ի՞նչէ պատահել։

ԴԱՑԱ

Ահա՛ նա էլի երևեցաւ մեզ։

ՆԱԹԱՆ

Այդ ո՞վ, Դա՛յա, ո՞վ։

ԴԱՑԱ

Նա ինքը։

ՆԱԹԱՆ

Նա՞, նա՞։

Ո՞վ էր երևում։—Այո՛, հասկացայ։—
Ոչ, նա չըպէտք է երևէր, թէև
Հրեշտակ իսկ լինէր։

ԴԱՑԱ

Էլի ճեմումէ
Նա արմաւենի ծառերի տակը.
Արմաւ է քաղում։

ՆԱԹԱՆ

Եւ ուտո՞ւմ—ինչպէս
Մի տաճարական։

ԴԱՑԱ

Ի՞նչէ՛ք տանջում ինձ։—
Արդէն ճանաչեց նորան Ռէխայի
Ագահ հայեացքը խիտ ծառերի մէջ,
Եւ հետևումէ նորան անդադար։
Նա ձեզ խնդրումէ, աղաչումէ ձեզ,
Որ իսկոյն, իսկոյն գընաք նորա մօտ։
Նա պատուհանից նշան կըտայ ձեզ,
Թէ ո՞ր կողմը գնաց։ Ո՛հ, շո՛ւտ, շտապեցէ՛ք։

ՆԱԹԱՆ

Նոր ուղտից իջա՞ծ։—Արդեո՞ք յարմար է։—
Շո՛ւտ, ինքդ գընա և յայտնիր նորան
Իմ վերադարձը։ Կըտեսնես, որ այն
Ազնիւ տղամարդը չէր ուզում մտնել
Իմ տունը, մինչդեռ բացակայ էի,
Եւ ուրախութեամբ կըգայ, երբ հայրը
Խնդրումէ նորան։ Գնա՛, ասա նորան,
Որ ես խնդրումեմ, սրտանց խնդրումեմ։....

ԴԱՑԱ

Բոլորն ի զուր է։ Նա չի գայ ձեզ մօտ։—
Կարծ ասեմ, չի գայ նա հրէայի մօտ։

ՆԱԹԱՆ

Ուրեմն գընա, գընա գոնեա,
Որ պահես նորան, որ գոնեա աչքով
Հետևես նորան։—Ես էլ շուտ կըգամ։
(Նաթանը մտնում է տուն, Դայան հեռանում է։)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

Մի հրապարակ արմաւենիներով,

որոնց տակը ման է գալիս ՏԱՃԱՐԱԿԱՆԸ։ ՄԻ ՎԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐ, *կողքից նետում է նորան փոքր ինչ հեռու, կարծես ուզում է բան ասել նորան։*

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Նա չէ հետևում ինձ աննպատակ։—
Ինչպէս շլում է ձիաներիս կողմը

Նա իւր աչքերը։—Ո՛վ բարի եղբայր....
Գուցէ կարող եմ և հայր կանչել ձեզ։

ՎԱՆԱԿԱՆ

Ո՛չ, միայն եղբայր, վանական եղբայր։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ո՛վ բարի եղբայր, եթէ ես ինքս
Բան ունենայի։ Վկայ է Աստուած,
Որ ոչ ինչ չունիմ։—

ՎԱՆԱԿԱՆ

Շատ շնորհակալ եմ։
Հազարապատիկ թող տայ ձեզ Աստուած,
Ինչ որ դուք ինձ տալ կամենումէիք։
Կամքը, ոչ թէ տուրքն է ողորմութիւն։—
Այլ և ուղարկուած չեմ պարոնի մօտ,
Որ ողորմութիւն խնդրեմ նորանից։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց ուղարկուած էք։

ՎԱՆԱԿԱՆ

Այո՛, մեր վանքից։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ուր իսկոյն ահա յոյս ունէի ես
Կերակուր գտնել։

ՎԱՆԱԿԱՆ

Սեղանների շուրջ
Ազատ տեղ չըկար։—Բայց եթէ, պարոն,
Կըգաք դուք ինձ հետ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ հարկաւոր է։
Վաղուց է, ինչ որ էլ միս չեմ կերել,
Եւ արմաւները արդէն հասել են։

ՎԱՆԱԿԱՆ

Պէտք է զգուշանաք, պարոն, այդ պտղից։
Շատ ուտել ինաս է. դա պղտորում է
Մարդու արիւնը և մելամաղձոտ
Է անում նորան։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Իսկ եթէ ի՞նքս
Ուզում եմ լինել ես մելամաղձոտ։
Ինձ զգուշացնելու համար չէր անշուշտ,
Որ իմ եւեթիս ուղարկեցին ձեզ։

ՎԱՆԱԿԱՆ

Ո՛չ։—Ուղարկած եմ, որ ձեզ ճանաչեմ,
Ձեր համը առնեմ։—

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ այդպէս ուղիղ
Ասումէք ինձ այդ։

ՎԱՆԱԿԱՆ

Ի՞նչէ, ինչի՞ չէ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ (*Ինքն իրան.*)

Խորամանկ եղբայր։—

(*Վանականին.*)

Շա՞տ կան ձեր վանքում
Ձեր նմանները։

ՎԱՆԱԿԱՆ

Չըգիտեմ։ Ես միայն
Պէտք է հնազանդիմ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ հնազանդումէք,
Ի հարկէ, առանց երկար քննելու։

ՎԱՆԱԿԱՆ

Ի հարկէ, թէ չէ ի՞նչ հնազանդութիւն։

ՏԱՃԱՐԱԿԱՆ (*Ինքն իրան.*)

Միշտ այսպէս ահա արդարանումէ
Պարզմտութիւնը։—

(*Վանականին.*)

Բայց դուք ի հարկէ
Կարող էք ասել, թէ ո՞վ է ուզում
Ինձ լաւ ճանաչել։—Պատրաստ եմ երդուել
Ես, որ այդ դուք չէք։

ՎԱՆԱԿԱՆ

Ինձ ի՞նչ վայել է.
Ի՞նչ օգուտ է ինձ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց ուշն է օգուտ,
Որ այդպէս ինձնով հետաքրքրվում է։

ՎԱՆԱԿԱՆ

Պէտք է կարծել, որ պատրիարք հօրը,
Որովհետև նա է ինձ ուղարկել։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Պատրիարք հա՞յրը։ Բայց մի՞թէ նորան
Ծանօթ չէ կարմիր խաչը այս սպիտակ
Վերարկուի վրայ։

ՎԱՆԱԿԱՆ

Ինձ էլ ծանօթ է։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ուրեմն, եղբա՛յր, ուրեմն։—Ես մի
Տաճարական եմ, գերի եմ այստեղ։—
Եւ աւելցնում եմ, որ գերի ընկայ
Տէրնին բերդի մօտ, որ, երբ վերջացաւ
Ջինադադարը, ուզեցինք առնել,
Ցետոյ Սիդոնի վրայ յարձակուելու
Դիտաւորութեամբ —աւելցնում եմ, որ
Քսանս բռնուեցանք, և Սալադինը
Միայն ինձ խընայեց։ Ահա՛ բոլորը,
Ինչ որ հարկաւոր է պատրիարքին
Իմանալ, այո՛, աւելի, քան թէ
Պէտք է իմանալ։—

ՎԱՆԱԿԱՆ

Դժուար թէ աւելի,
Քան թէ որքան որ արդէն գիտէ նա։—
Նա ցանկանում է իմանալ, արդեօք
Ինչի միայն ձեզ խնայեց սուլթանը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես ինքս գիտե՞մ։—Պարանոցս բաց
Արդէն ծունր դրի վերարկուիս վրայ
Եւ սպասում էի այդպէս հարուածին,
Որ Սալադինը ինձ լաւ նայելով
Շուտ մօտ է վազում և նշան տալիս։
Ինձ բարձրացնում են և արձակում են
Իմ կապանքները։ Ուզում եմ նորան
Շնորհակալ լինել. տեսնում եմ նորա
Աչքերը լցուած են արտասուքով.
Նա լուռ է, և ես, գընաց, ես մնացի։—
Թէ ինչպէս եղաւ, թող պատրիարքը
Ինքը բացատրէ։

ՎԱՆԱԿԱՆ

Դորանից նա այս
Է եզրակացնում, որ ձեզ պահպանեց
Աստուած մեծամեծ գործերի համար։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛, անչափ մեծ։ Որ հրէայ աղջկան
Ազատեմ կրակից, որ առաջնորդեմ
Ուխտաւորներին Սինայի վերայ,
Եւ էլի ուրիշ այդպիսի գործեր։

ՎԱՆԱԿԱՆ

Ուրիշ էլ կլինին։—Առ այժմ վատ չէ։
Գուցէ պատրիարքը պատրաստ ունի
Արդէն ձեզ համար դրանից աւելի
Նշանաւոր գործ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Իրա՞ւ, կարծո՞ւմ էք։—
Գուցէ և արդէն ակնարկել է ձեզ։

ՎԱՆԱԿԱՆ

Այո՛, ի հարկէ։—Բայց նախ պէտք է ձեզ
Ես լաւ ճանաչեմ. արդեօք յարմար էք
Այն գործի համար։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Լա՛ւ, ճանաչեցէք։

(Ինքն իրան)

Տեսնեմ, թէ ինչպէս պիտի ճանաչի։

ՎԱՆԱԿԱՆ

Ամենից լաւն է ուղղակի յայտնեմ
Ձեզ մեր պատրիարք հօր ցանկութիւնը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛, ի հարկէ։

ՎԱՆԱԿԱՆ

Նա ուզում է ձեզ
Մի նամակ յանձնել։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ինձ նամակ յանձնե՞լ։
Ես սուրհանդակ չեմ։—Այդ է այն գործը,
Որ ձեր ասելով շատ փառաւոր է,
Քան կրակից հանել մի հրէայ աղջիկ։

ՎԱՆԱԿԱՆ

Այդպէս եմ կարծում ես։ Որովհետև—
Ինչպէս ասում է պատրիարք հայրը—
Այդ նամակը մեծ օգուտ կը բերէ
Քրիստոնէութեան։ Եւ—ասում է նա—
Ով այն նամակը տեղը կը հասցնէ,
Մի բոլորովին առանձին պսակ
Պարգև կը ստանայ Աստծուց երկնքում։
Եւ այդ պըսակին—պատրիարք հայրը
Այդպէս է ասում—ձեզնից աւելի
Արժանին չըկայ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Զը կա՞յ։

ՎԱՆԱԿԱՆ

Այդ պսակը
Ստանալու համար—ինչպէս ասում է

Պատրիարք հայրը—դժուար թէ մէկը
Ցաջողակ լինի այնպէս, ինչպէս դուք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այնպէս, ինչպէս ե՞ս։

ՎԱՆԱԿԱՆ

Դուք բոլորովին
Աղատ էք այստեղ, կարող էք այստեղ
Ամեն բան տեսնել, գիտէք—ասում է
Պատրիարք հայրը—թէ ինչպէս պէտք է
Քաղաքի վերայ յարձակուիլ, ինչպէս
Պէտք է պաշտպանել։ Դուք աւելի լաւ
Կարող էք դատել, թէ որքան ամուր,
Կամ որքան թոյլ է Սալաղինի նոր
Շինած պարիսպը, և աւելի ճիշտ
Դըրել բոլորը մեր սուրբ հաւատի
Ախոյեաններին—ինչպէս ասում է
Մեր պատրիարքը։—

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Արդեօք կարո՞ղ էք
Նըբա՛յր, ասել ինձ, ի՞նչ է նամակի
Բովանդակութիւնն։

ՎԱՆԱԿԱՆ

Այո՛, ինչի չէ։—
Բայց ես այդ բանին մօտիկ տեղեակ չեմ։
Միայն այսքան գիտեմ, որ դա Փիլիպպոս
Արքային է գրած։ Մեր պատրիարքը....
Զարմանում եմ ես—նրա պէս մի սուրբ մարդ,
Որ միշտ երկնքումն է ապրում հոգով,
Ինչպէս կարող է այնքան խոնարհիլ,
Որ աշխարհային բաներին այնպէս
Լաւ տեղեկանայ։ Շատ դժուար բան է։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Դէ՛հ, պատրիարքը։

ՎԱՆԱԿԱՆ

Բոլորը գիտէ

Ճիշտ ու հիմնաւոր, ինչպէս և ինչտեղ,
Որքան զօրութեամբ և թէ որ կողմից
Պիտի յարձակուի Սալադինն, եթէ
Ցանկարծ պատերազմն էլի նորոգուի:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Գիտէ՞ բոլորը:

ՎԱՆԱԿԱՆ

Այո՛, գիտէ և
Ուզում է յայտնել Փիլիպ արքային,
Որ կարողանայ նա կշռել, արդեօք
Ճշմարիտ այնքան մեծ է վտանգը,
Որ մի հընարքով կրկին նորոգէ
Սալադինի հետ զինադադարը,
Որ արդէն այնպէս քաջասրտութեամբ
Գանդեց ձեր կարգը:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ պատրիարք է:—
Ուրեմն այն քաջ, սիրելի մարդը
Կամենում է, որ լինիմ ես ոչ թէ
Հասարակ լաբեր, այլ թէ — մի լտես:—
Ասացէք, եղբայր, ձեր պատրիարքին,
Որքան ճանաչել կարողացաք ինձ,
Այդ իմ գործը չէ: Ես դեռ պէտք է ինձ
Գերի համարեմ: Տաճարականի
Միակ կոչումն է զէնքով կռուելը
Ոչ թէ լտեսել:

ՎԱՆԱԿԱՆ

Ես այդ գիտէի:—
Բայց մի՛ նեղանաք, պարոն, ինձանից,
Թէև դեռ լաւը յետոյ է գալու:—
Պատրիարք հայրը տեղեկացել է,
Ինչպէս է կոչվում և ինչտեղ գտնվում
Լիբանանի վրայ այն բերդը, ինչտեղ
Ահագին գումար արծաթ կայ պահած,

Որից Սալադնի հեռատես հայրը
Տալիս է զօրքին ռոճիկ և ուրիշ
Պատերազմական ծախսերը անում:
Եւ Սալադինը երբեմն գնում է
Այն բերդը ծածուկ ճանապարհներով,
Համարեա առանց ուղեկիցների:—
Հասկանո՞ւմ էք ինձ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ամենևին ոչ:

ՎԱՆԱԿԱՆ

Շատ հեշտ է այնտեղ բռնել սուլթանին
Եւ մի անգամից վերջացնել բանը:—
Դուք սարսափո՞ւմ էք: — Երկու բարեպաշտ
Մարօնիտ արդէն յայտնել են իրանց
Ցօժարութիւնը յանձն առնել գործը,
Թէ կառաջնորդէ նոցա մի քաջ մարդ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ այդ քաջ մարդուն իմ մէ՞ջ է տեսնում
Ձեր պատրիարքը:

ՎԱՆԱԿԱՆ

Նա կարծում է, որ
Շատ հեշտ կարող է օգնել այդ գործում
Փիլիպպոս արքան մեզ Պաօլոմէից:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նձ, ի՞նձ, եղբայր, ի՞նձ: Մի՞թէ ինձանից
Նոր չը լսեցիք, թէ Սալադինին
Ինչ եմ պարտական:

ՎԱՆԱԿԱՆ

Այո՛, լսեցի:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց էլի—

ՎԱՆԱԿԱՆ

Այո՛,—պատրիարք հայրն էլ
Կարծում է, որ այդ գեղեցիկ բան է:—

Բայց Աստուած, կարդը....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Գործը չեն փոխում։
Զեն պատուիրում ինձ աւազակութիւն։

ՎԱՆԱԿԱՆ

Ի հարկէ, որ ոչ։ Միայն — կարծում է
Պատրիարք հայրը — Աստուծոյ առաջ
Աւազակութիւն չէ, ինչ որ մարդիկ
Այդպէս են կանչում։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես Սալադինին
Պարտական եմ իմ կեանքը, և պէտք է
Նորանը խլեմ։

ՎԱՆԱԿԱՆ

Ո՛չ, ո՞վ է ասում։—
Սակայն — կարծում է պատրիարք հայրը —
Սալադինն էլն մի թշնամի է
Քրիստոնէութեան, և այդ պատճառով
Նա ձեզ բարեկամ լինելու ոչինչ
Իրաւունք չունի։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բարեկամ։ Ոչ ես
Միայն չեմ ուզում լինել անպիտան
Եւ ապերախտ մարդ։

ՎԱՆԱԿԱՆ

Ի հարկէ, որ ոչ։
Միայն — կարծում է պատրիարք հայրը —
Մենք պարտական չենք շնորհակալութիւն
Ոչ Աստուծոյ և ոչ մարդկանց առաջ,
Երբ մեզ չեն անում մի ծառայութիւն
Մեր անձի համար։ Այլև — ասում է
Պատրիարք հայրը — ամենքը դիտեն,
Թէ Սալադինը միայն այն պատճառով
Խնայեց ձեր կեանքը, որ ձեր պատկերը,

Ձեր կերպարանքը նըմանեցրել է
Նա իւր եղբորը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այդ ի՞նչ յայտնի է
Ձեր պատրիարքին, և էլն — ո՛հ թէ
Ճշմարիտ լինի։ — Ահ Սալադին — ինչ։
Եթէ բնութիւնը իրաւ տուել է ինձ
Գոնեա մի դէմ քո եղբոր դէմքից,
Ինչն չպէտք է նորան ոչընչով
Համապատասխան լինի իմ հոգին։
Եւ եթէ լինի, մի՞թէ պիտի ճնշեմ,
Որ հաճոյանամ մի պատրիարքին։
Բնութիւն, չես կարող դու այդպէս ստել,
Այդպէս կարող չէ երբէք ինքն իրան
Աստուած հակասել իւր գործերի մէջ։
Գնացէք, իմ եղբայր — մաղձս մի խառնէք —
Գնացէք, դէ՛հ գնացէք։

ՎԱՆԱԿԱՆ

Ահա գընում եմ
Աւելի ուրախ, քան թէ երբ եկայ։
Ներեցէք, պարոն։ Վանականներս
Պարտաւոր ենք մեր մեծին հնազանդիլ։

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՏԱՃԱՐԱԿԱՆԸ և ԴԱՑԱՆ, որ արդէն բաւական ժամանակ նստում էր հեռուից, հիմա մօտենում է նորան։

ԴԱՑԱ

Ինչպէս երևում է վանականը
Բարկացրել է նրան։ — Բայց ինչ և իցէ,
Պէտք է սիրտ անեմ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ահա, ինչ լաւ է։ —
Սուտ չէ առածը. կրօնաւոր ու կին,

Կին ու կրօնաւոր են սատանայի
Աչ ու ձախ թաթը. Եւ նա ինձ այսօր
Ահա ձգում է մէկից միւսը:

ԴԱՑԱ

Այս ո՞ւմն եմ տեսնում:— Ձե՞զ, ազնիւ ասպետ:
Գոհութի՛ւն Աստծոյ, հազար գոհութիւն:—
Այս ո՞ւր էիք դուք այսքան ժամանակ:
Ցուսով եմ, որ դուք հիւանդ չէիք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ո՛չ:

ԴԱՑԱ

Առո՞ղջ էք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛:

ԴԱՑԱ

Բայց, հաւատացէք,
Մենք շատ անհանգիստ էինք ձեր մասին:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Իրա՞ւ:

ԴԱՑԱ

Անկասկած տեղէիք գնացել:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛:

ԴԱՑԱ

Եւ այսօր միայն վերադարձաք

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ո՛չ, երէկ:

ԴԱՑԱ

Այսօր Ըէխայի հայրն էլ
Եկաւ: Ուրեմն հիմա Ըէխային
Կարող եմ յոյս տալ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ բանի մասին:

ԴԱՑԱ

Որի մասին որ արդէն շատ անգամ
Խնդրել է նա ձեզ: Նորա հայրն ինքը
Իսկոյն գալու է, որ ձեզ հրաւիրէ:
Այժմ գալիս է նա Բաբելոնից
Քրսան ապրանքով բարձած ուղտերով.
Ինչ ասես չըկայ, թէ անուշահոտ
Խոտեր, թէ ակներ, պէս պէս կերպասներ,
Մի խօսքով ինչով միայն հարուստ են,
Թէ Հնդկաստանը, թէ Պարսկաստանը,
Թէ Ասորիքը, թէ Չինաստանը:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ոչինչ չեմ առնի:

ԴԱՑԱ

Իւր ժողովուրդը
Պատուում է նորան իբրև իշխանին,
Միայն շատ անգամ զարմացել եմ ես,
Ինչի՞ իմաստուն Նաթան է կանչում
Եւ ոչ թէ հարուստ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Գուցէ երկուսն էլ
Մէկ է համարում նրա ժողովուրդը:

ԴԱՑԱ

Բայց ես իմ կողմից ամենից առաջ
Բարի անունը կըտայի նորան:
Երևակայել անգամ չէք կարող,
Պարոն, թէ որքան բարի մարդ է նա:
Երբ իմացաւ, որ Ըէխան ձեզ այնքան
Երախտապարտ է, ինչ ասես չէր տայ
Ձեզ այն րոպէին:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Իրա՞ւ:

ԴԱՑԱ

Փորձեցէ՛ք,
Եկէ՛ք ու տեսէք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ցետոյ, երբ որ այդ
Բոպէն անցկացաւ։

ԴԱՑԱ

Մի՞թէ նորա մօտ
Կըմընայի ես այսքան ժամանակ,
Եթէ չըլինէր նա այնպէս բարի—
Մի՞թէ կարծումէք, թէ չեմ ճանաչում
Իբրև քրիստոնէայ ես իմ արժէքը։
Ինձ էլ չէր երդուած օրօրոցիս վրայ,
Որ ամուսնուս հետ պիտի գայի ես
Դէպի Հրէաստան, որ մի հրէայի
Աղջիկ մեծացնեմ։ Ողորմած հողի
Իմ ամուսինը մի ճիապան էր
Ֆրիդրիկոս կայսրի հեծելազօրքում։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Մի Շվէյցարացի, որ բաղդ ու պատուին
Արժանի եղաւ նորին կայսրական
Մեծութեան հետ մի դետի մէջ խեղդուիլ։—
Կին, քանի անգամ արդէն պատմել էք,
Դուք ինձ այդ բանը։ Ե՞րբ կը դադարէք
Ինձ հալածելուց։

ԴԱՑԱ

Տէր Աստուած, մի՞թէ
Հալածումեմ ձեզ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛, ի հարկէ
Հալածումէք ինձ։ Այսուհետև ես
Չեմ կամենում ձեզ տեսնել ու լսել։
Ես չեմ կամենում, որ դուք անդադար,
Միշտ յիշեցնէք ինձ այն գործի մասին,
Որի մասին ես չեմ էլ մտածել,
Որ ինձ համար էլ անմեկնելի է,
Երբ մըտածումեմ։ Թէպէտ չեմ զղջում
Արածիս վերայ. բայց տեսէք, եթէ
Մէկ էլ պատահի այնպիսի դիպուած,

Դուք էք մեղաւոր, եթէ էլ այնպէս
Շուտ չընկերդործեմ, եթէ առաջուց
Հարց ու փորձ անեմ—և կրակում թողնեմ,
Ինչ որ այրվումէ։—

ԴԱՑԱ

Աստուած ո՛չ անէ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այսօրից դոնեա, խնդրումեմ ես ձեզ,
Էլ այսուհետև ինձ մի ճանաչէք։
Ցատուկ խնդրումեմ։ Այդ հօրից նոյնպէս
Ազատեցէք ինձ։ Հրէան հրէայ է։
Ես կոպիտ Շվաբ եմ։ Եթէ երբեմն
Աղջկայ պատկերը կար իմ հոգու մէջ,
Վաղուց էլ չըկայ։

ԴԱՑԱ

Բայց ձերը դեռ կայ
Նորա հոգու մէջ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ անեմ որ կայ։

ԴԱՑԱ

Ո՞վ գիտէ։—Մարդիկ միշտ այն չեն ինչ որ
Երևումեն մեզ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց լաւ, շատ հազիւ։
(Դնում է։)

ԴԱՑԱ

Ո՞ւր. ի՞նչէք շտապում։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Կին, մի՛ զզուեցնէք
Ինձ այս ծառերից, որոնց ստուերի տակ
Սիրումեմ ճեմել։

ԴԱՑԱ

Ուրեմն դընա՛,
Գերմանական արջ, դընա՛։—Բայց պէտք է
Հետքը չը կորցնեմ ես այս գազանի։
(Դայան հեռուից հետևում է Նորան։)

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

Սալադինի պալատը:

ՍԱԼԱԴԻՆ և ԶԻՏՏԱ *չախ են խաղում.*

ԶԻՏՏԱ

Ո՞ւր ես, Սալադին: Ի՞նչպէս ես խաղում
Այսօր:

ՍԱԼԱԴԻՆ

Միթէ վա՞տ: Ես կարծում էի:

ԶԻՏՏԱ

Ինձ համար գոնէ անտանելի է:
Ցեռ տար այս քարը:

ՍԱԼԱԴԻՆ

Բայց ինչի՞, Զիտտա,

ԶԻՏՏԱ

Զին անպաշտպան է:

ՍԱԼԱԴԻՆ

Իրաւ է: Ա՛յսպէս:

ԶԻՏՏԱ

Փիղդ կրխլեմ:

ՍԱԼԱԴԻՆ

Դարձեալ իրաւ է:—
Դէ՛հ, չա՛խ ուրեմն:

ԶԻՏՏԱ

Այդ քեզ ի՞նչ օգուտ:
Ես առաջ կրգամ, և դու կը լինիս,
Ինչպէս որ էիր:

ՍԱԼԱԴԻՆ

Այո՛, տեսնում եմ,
Առանց կորուստի աղատուելու չեմ:
Ուրեմն ա՛ռ ձին:

ԶԻՏՏԱ

Ո՛չ, հարկաւոր չէ:
Ես առաջեմ գնում:

ՍԱԼԱԴԻՆ

Դու ինձ դորանով
Բան չես ընծայում: Այդ տեղը ձիուց
Թանկ է քեզ համար:

ԶԻՏՏԱ

Շատ կարելի է:

ՍԱԼԱԴԻՆ

Շատ մի պարծենար: Դէ՛հ, տե՛ս: Գրաչ կրգամ,
Որ չէիր սպասում երբէք այս բանը:

ԶԻՏՏԱ

Այո՛, այդպէս է: Ինչ իմանայի,
Թէ ձանձրացել ես դու քո թագուհուց:

ՍԱԼԱԴԻՆ

Ես իմ թագուհո՞ւց:

ԶԻՏՏԱ

Տեսնում եմ, արդէն,
Հազար դինարից աւելի ոչինչ
Չեմ տանի այսօր:

ՍԱԼԱԴԻՆ

Այդ ի՞նչպէս, Զիտտա:

ԶԻՏՏԱ

Դու դեռ հարցնո՞ւմ ես:—Որովհետև դու

Աշխատումես, որ անպատճառ տարուիս։—
Բայց այդ բանի մէջ ես օգուտ չունիմ։
Բացի նորանից, որ չէ զբաւում ինձ
Այսպիսի խաղը, միթէ աւելի
Շատ չեմ տանում ես, երբ որ տարվում եմ։
Երբ որ տարուել եմ, դու միշտ կրկինը
Ընծայել ես ինձ, որ մխիթարես։

ՍԱԼԱԴԻՆ

Էյ, քոյր, ուրեմն դու միշտ գիտութեամբ
Տարվում էիր ինձ։

ԶԻՏՏԱ

Շատ կարելի է,
Սիրելի եղբայր, քո առատ ձեռը
Լինի մեղաւոր, որ աւելի լաւ
Խաղալ չեմ սովորում։

ՍԱԼԱԴԻՆ

Խաղից հեռացանք։
Դէհ շուտ, վերջացրու։

ԶԻՏՏԱ

Այդպէս ես թողնում։

Դէհ, ուրեմն շախ, կրկին անգամ շախ։

ՍԱԼԱԴԻՆ

Ես այդ չըտեսայ։ Ի՞նչ անեմ, պէտք է
Զրկուիմ թագուհուց։

ԶԻՏՏԱ

Բայց տեսնենք, արդեօք
Հընար էր օգնել։

ՍԱԼԱԴԻՆ

Օ՛չ, տար թագուհին։
Երբէք բաղդաւոր չէի այդ քարով։

ԶԻՏՏԱ

Միայն այս քարով

ՍԱԼԱԴԻՆ

Տար,— վընաս չունի։

Տես, ահա նորից լաւ է իմ բանը։

ԶԻՏՏԱ

Իմ եղբորիցն եմ սովորել լինել
Թագուհիների հետ մարդավարի։
(Թողնում է քարը։)

ՍԱԼԱԴԻՆ

Տար, կամ մի տանիր. դա էլ իմը չէ։

ԶԻՏՏԱ

Ինչի՞ եմ տանում։ Շախ — շախ։

ՍԱԼԱԴԻՆ

Դէհ, յետոյ։

ԶԻՏՏԱ

Շախ և շախ։

ՍԱԼԱԴԻՆ

Եւ մատ։

ԶԻՏՏԱ

Ո՛չ բոլորովին։
Դու դեռ կարող ես ձին մէջ տեղ բերել,
Կամ ինչպէս կուզես, բոլորը մէկ է։

ՍԱԼԱԴԻՆ

Այո՛, այդպէս է։— Տարար, և փողը
Կըտայ Ալ-Հաֆին։ Թող կանչեն նորան։—
Ճշմարիտ էիր ասում դու, Զիտտա,
Ուշքս խաղի վրայ չէր բոլորովին,
Միտքս ցրուած էր։ Այլև ով կըտայ
Մեզ միշտ հարթ քարեր, որոնք ոչինչ ձև
Չեն ներկայացնում։ Միթէ խաղացի
Ես իմամի հետ։— Բայց ի՞նչ եմ ասում։
Պէտք է տարվելուն մի պատճառ գտնել.
Հարթ քարերը չեն պատճառը, Զիտտա,
Որ ես տարուեցայ, այլ քո արհեստը
Եւ քո սըրատես հանդարտ հայեացքը։

ԶԻՏՏԱ

Այդպէս ուզում ես միայն բըթացնել

Կորուստիս խայթը։ Լա՛ւ, համաձայն եմ.
Քո միտքն աւելի ցրուած էր իմից։

ՍԱԼԱԴԻՆ

Քոնից աւելի՞։ Քոնն ի՞նչն է ցրվում։

ԶԻՏՏԱ

Ի հարկէ այն չէ, ինչ որ քո միտքը։
Սալադին, էլ ե՞րբ կրկին կըխաղանք։

ՍԱԼԱԴԻՆ

Այսպէս աւելի կրքով ենք խաղում։—
Ա՛խ, հա՛, հասկացայ, որ պատերազմը
Նորից սկսվում է՞։—Շատ լաւ է։—թող գան։—
Ես չեմ սկսողը։ Ես յօժար էի
Կրկին նորոգել զինադադարը.
Ես ուզում էի մի լաւ մարդ ճարել
Զիտտախս համար։ Խօսքս Ռիչարդի
Եղբոր մասին է։ Մի՞թէ Ռիչարդի
Եղբայրը չէ՞ նա։

ԶԻՏՏԱ

Եթէ միայն դու
Կարող ես գովել քո այդ Ռիչարդին։

ՍԱԼԱԴԻՆ

Եւ եթէ յետոյ Ռիչարդի քրոջը
Մեր Մէլէք եղբոր համար առնէինք։
Ի՛նչ տուն կըդառնար։ Բոլոր աշխարհում
Դա առաջինը և ամենալաւ
Տունը կըլիներ։—Տեսնում ես ծոյլ չեմ
Ինձ էլ գովելու։ Կարծում եմ, ես էլ
Արժանի եմ իմ բարեկամներին։—
Ի՛նչ մարդիկ այդպէս առաջ կըդային
Ի՛նչ մարդիկ։

ԶԻՏՏԱ

Մի՞թէ ինձ սկզբից արդէն
Ծաղրալի չէր այդ գեղեցիկ ցնորքը։
Դու չես ճանաչում քրիստոնեաներին,

Ոչ էլ ուզում ես ճանաչել նոցա։
Նոցա պարծանքն է քրիստոնեայ լինել,
Ոչ թէ մարդ լինել։ Այլ և այն, ինչ որ
Քրիստոսից դեռ ևս մարդկային մի բան
Պահել է նոցա թերհաւատութիւնն,
Նոքա այդ բանը սիրում են, ոչ թէ
Որ մարդկային է, այլ որ Քրիստոսը
Այդպէս է արել, այդպէս սովորեցրել։—
Երանի նոցա, որ նա այդպիսի
Մի բարի մարդ էր։ Երանի նոցա,
Որ նոքա նորա առաքինութիւնն
Կարող են իբրև հաւատ ընդունել։—
Բայց ի՞նչ եմ ասում։ Առաքինութիւն։—
Ո՛չ, ո՛չ թէ նորա առաքինութիւնն,
Նորա անունը պէտք է ամեն տեղ
Տարածուի, պէտք է ջնջէ, անարգէ
Բոլոր այլ բարի մարդկանց անուններն։
Միայն անուան համար, անուան համար են
Նոքա աշխատում։

ՍԱԼԱԴԻՆ

Դու մտածում ես.
Ինչի՞ պիտ՝ նոքա պահանջին, որ դուք
Քրիստոնեայ կոչուիք, դու և Մէլէքը,
Առաջ քան թէ դուք իբր ամուսիններ
Սիրելու էիք քրիստոնեաներին։

ԶԻՏՏԱ

Ի հարկէ։ Կարծես քրիստոնեաները
Քրիստոնեաներից միայն կարող են
Սպասել այն սէրը, որով Ստեղծողը
Մատակարարել է կնոջն ու մարդուն։

ՍԱԼԱԴԻՆ

Քրիստոնեաները հաւատում են շատ
Դատարկ բաներին, որ այդ բանին էլ
Զըհաւատային։—Բայց դու սխալվում ես։—
Տաճարականներն են մեղաւորը,

Եւ մեղաւոր են նոքա ոչ իբրև
Քրիստոնեաներ, այլ միայն իբրև
Տաճարականներ։ Նոքա են միայն
Պատճառը, որ չէ յաջողում գործը.
Նոքա չեն ուզում ձեռիցը թողնել
Ակկան, որ իբրև օժիտ պիտի բերէր
Ռիչարդի քոյրը մեր Մէլէք եղբոր։
Որ ասպետութեան վընաս չը հասնի,
Կրօնաւորներ են ձևանում նոքա,
Ցիմար կրօնաւոր։ Ցուսալով, դուցէ
Հարուածն յաջողի, հաղիւ սպասեցին
Մինչև վերջանար զինադադարը։—
Շատ լաւ է, շատ լաւ։ Շարունակեցէք։
Պարոններ, միայն շարունակեցէք։—
Ես համաձայն եմ։—Միայն թէ գործերը
Կարգին լինէին։

ԶԻՏՏԱ

Աստ, էլ ի՞նչն է
Քեզ շփոթում, ի՞նչն է անհանգիստ անում։

ՍԱԼԱԴԻՆ

Նոյնը, ինչ որ միշտ։—Մեր հօր մօտ էի
Լիբանանի վրայ։ Հոգսերը սաստիկ
Ընկճում են նորան....

ԶԻՏՏԱ

Ո՛հ, աւաղ։

ՍԱԼԱԴԻՆ

Ոչինչ
Հընար չէ գտնում։ Ամեն տեղ կարիք։
Այսօր այստեղ է պակաս, վաղն այնտեղ։

ԶԻՏՏԱ

Բայց ի՞նչ կարիք կայ, ի՞նչ բան է պակաս։

ՍԱԼԱԴԻՆ

Էլ ի՞նչ, թէ ոչ այն, որ արժանի է

Հաղիւ մի անուան։ Որ, երբ որ ունիմ,
Աւելորդ է թվում, իսկ երբ որ չունիմ,—
Այնպէս անհրաժեշտ։ Ի՞նչ եղաւ Հաֆին։
Արդեօք մարդ գընաց նորան կանչելու։—
Զըկայ զզուելի անիծած փողը։—
Ալ-Հաֆի ի՞նչ լաւ, որ դու գալիս ես։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԴԷՐՎԻՇ, ԱԼ-ՀԱՖԻ, ՍԱԼԱԴԻՆ, ԶԻՏՏԱ.

ԱԼ-ՀԱՖԻ

Երևի փողերը Եգիպտոսից
Արդէն եկել են։ Միայն թէ շատ լինին։

ՍԱԼԱԴԻՆ

Լուր ունի՞ս։

ԱԼ-ՀԱՖԻ

Ե՞ս, ոչ։ Կարծում էի, թէ
Փողը ստանալու համար եմ կանչուած։

ՍԱԼԱԴԻՆ

Վըճարի՞ր հաղար դինար Զիտտային։
(Մտածելով քայլում է յետ ու առաջ։)

ԱԼ-ՀԱՖԻ

Դարձեալ, վըճարիր, փոխանակ, ստացիր։
Ի՞նչ դեղեցիկ է. Բանի նման չէ։—
Զիտտային վճարե՞մ—դարձեալ Զիտտային։
Էլի տարուել է՞ք—տարուել շախի մեջ։—
Ահա դեռ ևս այստեղ է խաղը։

ԶԻՏՏԱ.

Ուրախ ես դու, որ ես բաղդաւոր եմ։

ԱԼ-ՀԱՖԻ (խաղին նայելով.)

Ի՞նչ ուրախ։—Երբ որ,—Դուք շատ լաւ գիտէք։

ԶԻՏՏԱ. (նշան տալով նորան.)

Ալ-Հաֆի, լռի՛ր։

ԱԼ-ՀԱՖԻ

(Դեռ ևս խաղին նայելով.)

Դուք ուրախացէք:

ԶԻՏՏԱ

Լռիր, Ալ-Հաֆի:

ԱԼ-ՀԱՖԻ (Զիտտային.)

Սպիտակը ձերն է:

Դուք ասում էք շախ:

ԶԻՏՏԱ

Լաւ, որ նա ոչինչ

Չը լսեց:

ԱԼ-ՀԱՖԻ

Հիմա նա պիտի խաղայ:

ԶԻՏՏԱ (Նորան մօտենալով.)

Ասա մի տեսնեմ, ե՞րբ կարող եմ իմ

Փողերը ստանալ:

ԱԼ-ՀԱՖԻ

(Աչքը խաղից չը հեռացնելով.)

Կրստանաք, ինչպէս

Միշտ էլ ստացել էք:

ԶԻՏՏԱ

Վա՛հ, ի՞նչ ես ասում.

Խելագարուել ե՞ս:

ԱԼ-ՀԱՖԻ

Խաղը կիսատ է

Մնացել: Սալադին, դուք դեռ չէք տարուել:

ՍԱԼԱԴԻՆ (Հազիւ ականջ դնելով.)

Տարուել եմ, տարուել, վըճարիր փողը:

ԱԼ-ՀԱՖԻ

Փողը վճարիր: Բայց ձեր Թագուհին....

ՍԱԼԱԴԻՆ (Ինչպէս առաջ.)

Դա չունի ոչինչ նշանակութիւն.

Էլ խաղի մէջ չէ:

ԶԻՏՏԱ

Ուրեմն ասա,

Որ ես կարող եմ փողի տեւից

Ուղարկել:

ԱԼ-ՀԱՖԻ

Այո՛, ինչպէս որ և միշտ:—

Ասենք թէ չունի թագուհին ոչինչ

Նշանակութիւն, էլի ասում եմ,

Որ դուք տարուած չէք:

ՍԱԼԱԴԻՆ

(Մօտ է գնում և խառնում է քարերը.)

Տարուած եմ, տարուած

Այդպէս եմ ուզում:

ԱԼ-ՀԱՖԻ

Թո՛ղ այդպէս լինի:—

Ինչպէս որ խաղը, այնպէս և վաստակ.

Ինչպէս որ տարած, այնպէս վըճարած:

ՍԱԼԱԴԻՆ (Զիտտային.)

Ի՞նչ է ասում, ի՞նչ:

ԶԻՏՏԱ

(Ժամանակ առ ժամանակ նշան անելով Ալ-Հաֆիին.)

Դու ճանաչում ես

Նորան, գիտես, որ կամակոր մարդ է.

Սիրում է ստիպել, որ խնդրեն իրան.

Այլ և կարծում եմ որ նախանձում է:—

ՍԱԼԱԴԻՆ

Քե՞զ է նախանձում, Զի՛տտա, իմ քրո՛ջը:—

Այս ի՞նչ եմ լսում, Ալ-Հաֆի, միթէ

Նախանձում ես դու:

ԱԼ ՀԱՖԻ

Շատ կարելի է:—

Երանի նորա խելքն ունենայի.

Նորա պէս ես էլ բարի լինէի:

ՋԻՏՏԱ

Բայց էլի միշտ էլ ճիշտ վճարել է։
Այսօր էլ նոյնպէս կըվճարէ նա։
Թող նորան։ Գընա, Ալ-Հաֆի, գընա։
Ես մարդ կուղարկեմ փողն հաւէից։

ԱԼ-ՀԱՖԻ

Ո՛չ, էլ աւելի չեմ կարող թագցնել։
Չէ՞ որ վերջապէս պիտի իմանայ։

ՍԱԼԱԴԻՆ

Ո՞վ, ի՞նչ։

ՋԻՏՏԱ

Ալ-Հաֆի, այդ է խոստմունքդ։
Այդպէ՞ս հաստատ ես դու քո խօսքի վրայ։

ԱԼ-ՀԱՖԻ

Ո՞վ գիտէր, որ բանն այստեղ կը հասնի։

ՍԱԼԱԴԻՆ

Կիմանամ, թէ չէ։

ՋԻՏՏԱ

Ալ-Հաֆի, համեստ
Եղիր, խնդրում եմ։

ՍԱԼԱԴԻՆ

Զարմանալի է։
Ինչ բանի մասին խնդրում է Ցիտտան
Այսպէս ջերմեռանդ մի օտար մարդուն,
Այն էլ դերվիշին և ոչ եղբորը։
Ալ-Հաֆի հիմա հրամայում եմ քեզ։—
Շուտ խօսիր, դերվի՛շ։

ՋԻՏՏԱ

Շատ չնչին բան է,
Սիրելի եղբայր, և արժանի չէ
Քո ուշադրութեան։ Քեզ յայտնի է, որ
Ուրիշ անգամ էլ տարել եմ քեզնից
Ես նոյն գումարը։ Բայց որովհետև

Առ այժմ փողը հարկաւոր չէ ինձ,
Իսկ Հաֆին արկղում չունի շատ արծաթ,
Այդ պատճառով ես պարտքը չեմ ստացել։
Բայց անհոգ եղիր։ Ես չեմ ընծայի
Ոչ քեզ, եղբօրս, ոչ Ալ-Հաֆիին,
Ոչ գանձարանին։

ԱԼ-ՀԱՖԻ

Այո՛, եթէ որ
Միայն այդ լինէր։

ՋԻՏՏԱ

Միւնոյն բանն է։
Ահա՛ մի քանի ամիս է միայն,
Որ ես չեմ ստացել այն փողը, որ ինձ
Նշանակել ես։

ԱԼ-ՀԱՖԻ

Դեռ բոլորը չէ։

ՍԱԼԱԴԻՆ

Դեռ բոլորը չէ՞։—Կրկնօսի՞ս, թէ չէ։

ԱԼ-ՀԱՖԻ

Այն օրից ինչ որ մենք Եգիպտոսից
Փող ենք սպասում, նա....

ՋԻՏՏԱ (Սալադինին.)

Մի՛ լսիր նորան.

ԱԼ-ՀԱՖԻ

Ոչ միայն ոչինչ չէ ստացել, այլ և....

ՍԱԼԱԴԻՆ

Բարեսի՛րտ աղջիկ։—Դեռ ես գուցէ
Փոխ է տուել ինձ։

ԱԼ-ՀԱՖԻ

Այլև պահել է
Բոլոր պալատը, բոլոր ծախսերդ
Իրանից արել։

ՍԱԼԱԴԻՆ

Ահա իմ քոյրը։

(գրկում է նորան.)

ԶԻՏՏԱ

Ի՞նչպէս այդ անել կարող էի ես,
Եղբայր իմ, եթէ քեզնից չը լինէր
Հարստութիւնս։

ԱԼ-ՀԱՖԻ

Բայց շուտով էլի
Կաղքատացնէ նա, ինչպէս և ինքն է։

ՍԱԼԱԴԻՆ

Ո՞վ, ո՞վ է աղքատ։ Այսպիսի մի քրոջ
Եղբայրը աղքա՞տ։ Երբ եմ ունեցել
Ես աւելի շատ, երբ եմ ունեցել
Աւելի պակաս։— Մէկ հանդերձ, մէկ ձի,
Մէկ սուր — մէկ Աստուած։ Էլ ուրիշ ինչ բան
Հարկաւոր է ինձ։ Եւ այդ բաները
Ե՞րբ չեմ ունենայ։ Բայց էլի, Հաֆի,
Կարող էի ես բարկանալ քեզ վրայ։

ԶԻՏՏԱ

Ո՛չ, մի բարկանար, սիրելի եղբա՛յր։
Ո՛հ, երանի՛ թէ կարողանայի
Թեթևացնել և հօրս հոգսերը։

ՍԱԼԱԴԻՆ

Ցանկարծ խըլեցիր ուրախութիւնս։—
Ես կարիք չունիմ, ոչ էլ կունենամ.
Բայց նա, նա ունի, նորա հետ և մենք։—
Ի՞նչ պիտի անենք։— Գուցէ դեռ ևս
Երկար ժամանակ ոչինչ չըստանանք
Մենք Եգիպտոսից։ Ի՞նչ է պատճառը,
Այդ Աստուած գիտէ։ Չէ՞ որ դեռ ևս
Թաղաղ է այնտեղ։— Սիրով պատրաստ եմ
Ինձանից կտրել, ծախսը պակսեցնել,
Փողը խնայել, եթէ միայն ես

Նեղութիւն կրեմ և ոչ ուրիշը։
Ձի, սուր և հանդերձ պէտք է ունենամ։
Աստուծուց էլ ոչինչ չեմ կարող ուզել։
Առանց դորան էլ նա պահանջում է
Ինձնից շատ քիչ բան, իմ սիրտը միայն։—
Ես յոյս ունէի, Ալ — Հաֆի, որ դու
Մնացորդ կունենաս։

ԱԼ-ՀԱՖԻ

Մնացո՞րդ։— Ասացէ՛ք
Չէիք նստեցնի ինձ ցցի վերայ,
Կամ թէ խեղդել տայ, եթէ դուք ինձ մօտ
Մնացորդ գտնէիք։— Ի՞նչ, գողանայի՞.
Համարձակէի՞։

ՍԱԼԱԴԻՆ

Հիմա ինչ անենք։—
Ինչի ուրիշից չէիր փոխ առնում,
Քան թէ Զիտտայից։

ԶԻՏՏԱ

Բայց միթէ նորան
Թոյլ կըտայի ես, եղբա՛յր, որ խըլեր
Արտօնութիւնս։ Հիմա էլ նոյնը
Պահանջում եմ ես։ Ես դեռ աղքատ չեմ։

ՍԱԼԱԴԻՆ

Դու դեռ աղքատ չես։ Պակասը այդ էր։—
Հաֆի, շուտ գընա, ինչ տեղ և ինչպէս
Ուզում ես ճարիր։ Փոխ առ, խոստացիր։—
Բայց տես, փոխ չառնես նոցանից, որոնց
Հարստացրել եմ, որ չըկարծեն թէ
Ցետ եմ պահանջում։ Գընա ամենից
Ժըլատների մօտ. նոքա փոխ կըտան
Ինձ ուրախութեամբ։ Նոքա գիտեն, որ
Փողը իմ ձեռին լաւ շահ է բերում։

ԱԼ-ՀԱՖԻ

Այդպիսիներին ես չեմ ճանաչում։

ԶԻՏՏԱ

Նոր միտս եկաւ Հաֆիզ, լսել եմ,
Որ բարեկամդ վերադարձել է։

ԱԼ-ՀԱՖԻ (զարմացած.)

Իմ բարեկա՞մը, իմ բարեկա՞մը։
Այդ ո՞վ է արդեօք։

ԶԻՏՏԱ

Քո գոված հրէան։

ԱԼ-ՀԱՖԻ

Իմ գոված հրէա՞ն։

ԶԻՏՏԱ

Որին տէր Աստուած—
Դեռ լաւ յիշում եմ քո ասած խօսքը—
Որին իւր Աստուած առաւելութեամբ
Տուել է աշխարհի բոլոր բարիքը,
Ամենամեծն ու ամենափոքրը։

ԱԼ-ՀԱՖԻ

Ա՞յդպէս եմ ասել։—Արդե՞օք ինչ մտքով։

ԶԻՏՏԱ

Ամենափոքրը, հարստութիւնն է,
Ամենամեծը—իմաստութիւնը։

ԱԼ-ՀԱՖԻ

Ի՞նչ, մի հրէայի մասին եմ ասել
Ես ձեզ այդ բանը։

ԶԻՏՏԱ

Մի՞թէ չէս ասել
Դու ինձ այդ բանը Նաթանիդ մասին։

ԱԼ-ՀԱՖԻ

Նաթանի մասին։—Այո՛, մոռացայ։
Մի՞թէ ճշմարիտ վերադարձել է։
Ուրեմն նորա բանն այնքան վատ չէ։—
Այո՛, իրաւ է. երբեմն ամբոխը
Իմաստուն Նաթան էր կանչում նորան,

Նոյնպէս և Հարուստ։

ԶԻՏՏԱ

Այժմ առաջուանից
Հարուստ է կոչվում։ Բոլոր քաղաքը
Խօսում է նորա բերած անհամար
Հարստութեան վրայ։

ԱԼ-ՀԱՖԻ

Հա՛, եթէ որ նա
Դարձեալ հարուստ է, անկասկած էլի
Իմաստուն է նա։

ԶԻՏՏԱ

Հաֆիզ, չե՞ս կարող
Նորա մօտ գընալ։

ԱԼ-ՀԱՖԻ

Նորա մօտ գընամ։—
Ինչի՞։ փո՞խ ուզեմ։—Լա՛ւ էք ճանաչում։—
Նա փոխ տա՞յ։—Նորա իմաստութիւնը
Հէնց նորա մէջ է, որ նա ոչ ոքին
Փող չէ փոխ տալիս։

ԶԻՏՏԱ

Հաֆիզ, դու առաջ
Նորա մասին այլ կարծիք ունէիր։

ԱԼ-ՀԱՖԻ

Շատ նեղ որ ընկնի, ապրանք փոխ կըտայ.
Բայց փո՛ղ, փող երբէ՛ք։ Ի հարկէ քիչ կայ
Նորա պէս հրէայ։ Նա խելօք մարդ է.
Լաւ կեանք է վարում և լաւ շախ խաղում։
Բայց նա ոչ պակաս զանազանվում է,
Թէ վատ և թէ լաւ կողմերով իւր միւս
Ազգակիցներից։—Ո՛չ, նորա վերայ
Ցոյս մի ունենանք։—Իրաւ, տալիս է
Նա աղքատներին, գուցէ տալիս է
Սալադինի պէս, թէև այնքան չէ,

Բայց նոյնպէս սիրով և բոլորովին
Առանց խտրութեան. Հրէայ, Քրիստոնեայ
Մուսուլման և Պարս մէկ են նրա համար

ԶԻՏՏԱ

Եւ այդպիսի մարդ....

ՍԱԼԱԴԻՆ

Ինչպէս է, որ ես
Երբէք լսել չեմ այդ մարդու մասին....

ԶԻՏՏԱ

Մի՞թէ փոխ չի տայ նա Սալադինին,
Այն Սալադինին, որ ոչ իւր համար
Այլ ուրիշների համար է ուզում:

ԱԼ-ՀԱՖԻ

Այդ բանում ահա նա մի հրէայ է,
Հասարակ հրէայ:— Հաւատացէք ինձ:—
Ողորմութեան մէջ նա նախանձոտ է:
Նա ուզում է որ բոլոր աշխարհը
Միայն նորան ասէր Աստուած վարձատրէ
Ձեր բարութիւնը: Այդ իսկ պատճառով
Նա ոչ մի մարդու փող չէ փոխ տալիս,
Որ կարողանայ ամեն ժամ ինքը
Ողորմութիւն տալ: Բայց որովհետև
Օրէնքը նորան պատուիրում է, որ
Ողորմած լինի, ոչ կամակատար,
Այդ պատճառով նա, որքան ողորմած,
Նոյնքան անյօժար է ծառայութիւն
Անել մի մարդուն: Թէպէտ վաղուց է,
Որ առաջուայ պէս լաւ չեմ նորա հետ,
Բայց չը կարծէք, թէ ես այդ պատճառով
Անիրաւ կերպով եմ դատում նորան:
Նա ամեն բանում բարի է, միայն
Այդ բանումը ո՛չ, հաւատացէք, ո՛չ:
Ես իսկոյն կերթամ, կերթամ կը ծեծիմ
Ուրիշի դուռը.... Նոր միտս եկաւ.

Մի հարուստ և ժլատ Մավրիտանացի:—
Կերթամ նորա մօտ:

ԶԻՏՏԱ

Սպասի՛ր, Ալ-Հաֆի.
Ի՞նչ ես շատ շտապում:

ՍԱԼԱԴԻՆ

Ո՛չ, թո՛ղ, թո՛ղ գընայ:

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԶԻՏՏԱ, ՍԱԼԱԴԻՆ.

ԶԻՏՏԱ

Այնպէս շտապում է, կարծես ուզում է
Փախչել ինձանից:— Այս ի՞նչպէս բան է:—
Միթէ խաբուել է իրաւ նորա մէջ—
Թէ ուզում է նա ինքը մեզ խաբել:

ՍԱԼԱԴԻՆ

Ինձ ի՞նչ ես հարցնում: Ես հաղիւ գիտեմ
Ում վրայ էք խօսում. և ձեր այդ հրէայ
Նաթանի մասին այսօր եմ լսում
Առաջին անգամ:

ԶԻՏՏԱ

Կարելի բան է՞,
Որ այդպէս ծածուկ մընար քեզանից
Այն մարդը, որի մասին պատմում են,
Թէ նա գտել է գերեզմանները
Սողոմոնի և Դաւիթ արքայի,
Եւ իմանում է բաց անել նոցա
Կնիքը մի հրզօր և գաղտնի խօսքով.
Եւ թէ երբեմն նա նոցա միջից
Հանում է անչափ հարստութիւններ,
Որոնց չէր կարող ստանալ նա մի այլ
Նուազ աղբիւրից:

ՍԱԼԱԴԻՆ

Թէ այդ Նաթանը
Գերեզմաններից է հանել իւր մեծ
Հարստութիւնը, ապա նոցա մէջ
Թաղուած են եղել, ոչ թէ դաւիթը
Եւ Սողոմոնը, այլ թէ յիմարներ։

ԶԻՏՏԱ

Կամ չարագործներ։— Այլև աղբիւրը
Նրա հարստութեան աւելի առատ
Եւ անսպառ է, քան թէ գերեզման
Լի մամոնայով։

ՍԱԼԱԴԻՆ

Ինչպէս լսեցի,
Վաճառական է։

ԶԻՏՏԱ

Նորա բեռնակիր
Անասունները գընում են ամեն
Ճանապարհներով, անցնում են
Բոլոր ճանապատներով. նորա նաւերը
Մտնում են ամեն մի նաւահանգիստ.
Եւ այս բոլորը Ալ-Հաֆին ինքն է
Պատմել ինձ առաջ, և ոգևորուած
Աւելացրել է, որքան ազնուութեամբ
Եւ մեծանձնութեամբ գիտէ գործ դընել
Իւր բարեկամը, ինչ որ նա խելքով,
Ջանասիրութեամբ վաստակել չնչին
Գործ չէ համարում։ Պատմել է ինչպէս
Նախապաշարուած չէ նորա հոգին.
Սիրտը միշտ բաց է առաքինութեան,
Ընդունակ ամեն գեղեցիկ բանին։

ՍԱԼԱԴԻՆ

Բայց հիմա այնպէս անորոշ կերպով
Եւ սառն է խօսում Հաֆին նրա մասին։

ԶԻՏՏԱ

Սառը չէ խօսում, այլ թէ շփոթուած։

Կարծես վախենում է գովել նորան,
Եւ նոյն ժամանակ չէ ուզում նոյնպէս
Ի զուր պարսաւել։— Ինչպէս։ կամ գուցէ
Իրաւ այնպէս է, որ ամենալաւ
Մարդն էլ կարող չէ ազատել իրան
Իւր ժողովուրդի թիւր կարծիքներից.
Եւ որ այդ կողմից Ալ-Հաֆին իրաւ
Ամաչում լինի իւր բարեկամից։—
Թող այդպէս լինի։— Թող որքան կուզէ
Նա հրէայ լինի. մեզ բաւական է
Որ նա հարուստ է։

ՍԱԼԱԴԻՆ

Բայց դու նորանից
Բռնի չես խլել իւր ունեցածը։

ԶԻՏՏԱ

Բայց որն է, ասա բռնի խլելը.
Հրով ու սրով։ Ոչ, ոչ թոյլ դէմ
Ինչ հարկաւոր է մի այլ զօրութիւն.
Բաւական է և իւր թուլութիւնը։—
Հիմա էլ գընանք իմ հարեմխանէն
Լսել երգը իմ մի նոր սարկուհու.
Որին ես երէկ միայն գընել եմ։
Եւ այդ միջոցին գուցէ որոշեմ,
Ինչպէս գործ սկսել այդ Նաթանի հետ։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

Նաթանի տան առաջ դուր սկսվում են արմատեանիները։

ՐԷԽԱՆ և ՆԱԹԱՆԸ դուրս են գալիս տանից. նոցա մօտենում է ԴԱՅԱՆ։

ՐԷԽԱ

Շատ ուշացաք, հայր։ Դժուար թէ հիմա
Պատահիք նորան։

ՆԱԹԱՆ

Եթէ ոչ այստեղ,
Անշուշտ ուրիշ տեղ։—Դու հանգիստ եղիր։—
Տես, ահա Դայան գալիս է մեզ մօտ։

ՐԷԽԱ

Անպատճառ աչքից թողել է նորան։

ՆԱԹԱՆ

Ես այդ չեմ կարծում։

ՐԷԽԱ

Թէ չէ, աւելի
Շտապով կըգար նա։

ՆԱԹԱՆ

Դեռ մեզ չէ տեսնում։

ՐԷԽԱ

Ահա, տեսաւ մեզ։

ՆԱԹԱՆ

Ահա և շտապեց։—
Բայց դու հանգիստ կաց, հանգիստ կաց Ռէխա։

ՐԷԽԱ

Միթէ ուզում էք այնպիսի աղջիկ,
Որ հանգիստ լինի այս հանգամանքում,
Զըզգայ, թէ ումն է պարտական կեանքը,
Այն կեանքը, որ նա այնպէս սիրում է,
Որովհետև նախ ձեր պարգևածն է։

ՆԱԹԱՆ

Ո՛չ, ես ուզում եմ, որ այնպէս լինիս,
Այնպէս ինչպէս կաս. թէ մինչև անգամ
Գիտենայի էլ, որ քո սրտի մէջ
Մի բոլորովին այլ բան է շարժվում։

ՐԷԽԱ

Ի՞նչ, սիրելի հայր։

ՆԱԹԱՆ

Դու ինձ ես հարցնում,

Եւ այդպէս երկչոտ։ Ինչ որ սրտիդ մէջ
Այժմ կատարվում է, դա բընութիւն է
Եւ անմեղութիւն։ Թող դա քեզ ոչինչ
Հոգս չըպատճառէ, ինձ չէ պատճառում։
Միայն խոստացիր, որ, երբ քո սիրտը
Աւելի յայտնի կըսկսի խօսել,
Ցես ծածկի ինձնից ոչ մէկը նորա
Ցանկութիւններից։

ՐԷԽԱ

Ծածկել ձեզանից։
Ես սարսափում եմ մտածել անգամ
Այդ բանի վերայ։

ՆԱԹԱՆ

Վերջացնենք։ Այս մենք
Արդէն վճռեցինք։—Ա՛յ, Դայան։—Ասա։

ԴԱՅԱ

Նա դեռ ճեմում է ծառերի տակը
Եւ իսկոյն ահա դուրս կըգայ նա այն
Պատի եռանից։—Տեսէք, գալիս է։

ՐԷԽԱ

Տեսէք, չըգիտէ, որ կողմը գընայ,
Առաջ գնայ թէ յետ, աջ կողմը, թէ ձախ։

ԴԱՅԱ

Ո՛չ, ո՛չ, վանքի շուրջ կըպտտի նա։—
Գրաղ կըգամ, որ նա այստեղ կանցկենայ։

ՐԷԽԱ

Իրաւ այդպէս է։— Խօսեցա՞ր հետը։
Այսօր ի՞նչպէս է։

ԴԱՅԱ

Այնպէս, ինչպէս միշտ։

ՆԱԹԱՆ

Այնպէս կանգնեցէք, որ չըտեսնէ ձեզ։
Լաւ է տուն գընաք։

ՐԷԽԱ

Միայն մէկ էլ նայեմ։—
Ա՛խ, այն ցանկն ինձնից զողացաւ նորան։

ԴԱՅԱ

Գնանք, գնանք, ձեր հայրը ուղիղէ ասում։
Նա յետ կըդառնայ, ևթէ տեսնէ ձեզ։

ՐԷԽԱ

Ա՛խ, ա՛խ, այն ցանկը։

ՆԱԹԱՆ

Եւ ևթէ յանկարծ
Նորա ետևից դուրս գայ, անպատճառ
Պիտի տեսնէ ձեզ։ Ուրեմն գնացէք։

ԴԱՅԱ

Եկէք, ես գիտեմ տանը պատուհան,
Որտեղից նոցա կըտեսնենք։

ՐԷԽԱ

Այո՛։

(Ըէխան և Դայան մտնում են տուն։)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՆԱԹԱՆ, փոքրից յետոյ ՏԱՃԱՐԱԿԱՆ։

ՆԱԹԱՆ

Ես համարեա թէ վախենումեմ այս
Անսովոր մարդուց։ Նա ինձ համարեա
Շփոթումէ իւր խիստ առաքինութեամբ։
Այսքան էլ նեղ տեղ ձգէ մարդ մարդուն։—
Ահա՛ գալիս է։—Ինքն երիտասարդ,
Բայց տեսքով այր է։ Ինչպէս սիրումեմ
Ես այդ բարեսիրտ վստահ հայեացքը,
Համարձակ գնացքը։ Կեղևը դառն է,
Անշուշտ այդպէս չէ նաև միջակը։—

Արդեօք ի՞նչտեղեմ տեսել այս դէմքը։—
Ներեցէք, աղնիւ Ֆրանկ.....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ։

ՆԱԹԱՆ

Թոյլ տուէք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց ի՞նչ, հրէայ ի՞նչ։

ՆԱԹԱՆ

Որ համարձակուիմ
Ձեզ հետ խօսելու։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչպէս արգելեմ։
Բայց կարճ կորեցէք։

ՆԱԹԱՆ

Ներեցէք, և մի՛
Մի՛ այդպէս հպարտ և անարգանքով
Փախչէք այն մարդուց, որին յաւիտեան
Պարտաւորել է՛ք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչպէս։—Համարեա
Գուշակումեմ ես։ Դուք....

ՆԱԹԱՆ

Իմ անունը
Նաթան է. ես այն աղջկայ հայրն եմ,
Որին փրկեց ձեր մեծահոգութիւնն.
Գալիս եմ....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Թէ որ շնորհակալութիւն
Անելու համար— շատ աւելորդ է։
Արդէն անչափ շատ շնորհակալութիւն
Լսել եմ չնչին այդ բանի համար։
Դուք ամենևին պարտական չէք ինձ։

Ես ի՞նչ գիտէի, թէ ձեր աղջիկն էր։
Տաճարականի պարտքն է օգնութիւն
Հասնել ամենքին, որոնց տեսնում է
Նա վտանգի մէջ։ Բացի դորանից
Սեփական կեանքս անտանելի էր
Ինձ այն վայրկեանին։ Շատ ուրախացայ,
Որ միջոց գտայ զոհել իմ կեանքը
Ուրիշի կեանքը փրկելու համար—
Թէև մի հրէայ աղջկայ կեանքը։

ՆԱԹԱՆ

Վըսեմ, շատ վըսեմ, բայց և զզուելի։—
Ես հասկանում եմ ձեր խօսքի միտքը։
Զզուելի դիմակ է ծածկում համեստ
Մեծանձնութիւնը, որ գովասանից
Փախչի։—Բայց եթէ ընդդէմ է նորան
Այդպիսի մի զոհ, ուրիշ ի՞նչ այլ զոհ
Ընդունելի է։—Ասպետ, դուք այստեղ
Օտար էք, գերի, և այդ պատճառով
Այսպէս համարձակ հարցնում եմ ես ձեզ։
Ո՛հ, ասացէք ինձ, հրամայեցէք ինձ.
Ինչո՞վ կարող եմ ես ձեզ ծառայել։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Դո՞ւք, ի՞նձ։ Ոչնչով։

ՆԱԹԱՆ

Ես հարուստ մարդ եմ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ամենահարուստ հրէային երբէք
Չեմ համարել ես ամենալաւը։

ՆԱԹԱՆ

Միթէ կարող է դա ձեզ արգելել
Նորա ունեցած լաւ բանով օգտուիլ,
Օրինակ նորա հարստութեամբը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Լա՛ւ, ես այդ բանին չեմ հակառակի,

Չեմ հակառակի վերարկուիս համար։
Երբ սա կըմաշուի և կըկըտրտուի,
Այն ժամանակը ես կըգամ ձեզ մօտ
Եւ նորի համար փոխ կուզեմ ձեզնից
Մահուդ կամ թէ փող։—Բայց ո՛չ, մի տխրիք,
Դեռ մի վախենաք, դեռ ևս բանը
Այդտեղ չէ հասել։ Տեսէք դեռ ևս
Բաւական լաւն է։ Միայն այս ծայրին
Կայ մի տգեղ բիծ, փոքր ինչ այրուած է։
Այդ պատահեցաւ, երբ որ ձեր աղջկան
Դուրս էի բերում ես կրակի միջից։

ՆԱԹԱՆ

(Բռնում է վերարկուի ծայրը և զննում է։)
Զարմանալի է, որ մի այսպիսի
Վատ և տգեղ բիծ, մի փոքր այրուած կետ,
Ես աւելի լաւ է վըկայում
Մի մարդու մասին, քան թէ այն մարդու
Սեփական լեզուն։ Թոյլ տուէք ինձ այդ
Բիծը համբուրեմ։—Ախ, ներեցէք ինձ։—
Ակամայ արի։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ։

ՆԱԹԱՆ

Մի արտասուք
Ընկաւ նորա վրայ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ոչինչ։ Կաթիլներ
Շատ է տեսել սա։—
(Ինքն իրան)
Այս հրէան շուտով
Ինձ կը շփոթէ։

ՆԱԹԱՆ

Ո՛հ, թէ լինէիք
Դուք այնքան բարի, գոնէ մի րոպէ
Ուղարկէիք այս վերակուն աղջկաս։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ինչ՞:

ՆԱԹԱՆ

Որ նա էլ սխմէ այս բիծը
Իւր շրթունքներին, որովհետև նա
Ցոյս չունի դրկել ձեր խսկ ծնկները:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց հրէայ—Նաթան է ձեր անունը—
Բայց Նաթան—Դուք ձեր խօսքերը շատ լաւ—
Շատ լաւ էք դարսում—մեծ վարպետութեամբ:—
Ես շըփոթուած եմ—Այո՛—ես պէտք է....

ՆԱԹԱՆ

Ինչպէս ուզում էք դուք ձեզ ձևացրէք.
Բայց ես այդպէս էլ հասկանում եմ ձեզ:
Դուք այնքան բարի , այնքան ազնիւ էք,
Որ չէիք կարող լինել աւելի
Քաղաքավարի:—Աղջկայ սիրտը
Զգացմունքով լցուած. կին նուիրակը
Հնազանդ աղախին, հայրը շատ հեռու—
Դուք երկիւղէք կրում ձեր անուան համար,
Չէք ուզում աղջկաս փորձի ենթարկել,
Չէք ուզում, որ դուք չը յաղթանակէք.
Եւ դորա համար շնորհակալ եմ ես:—

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Խոստովանում եմ, որ գիտէք ինչպէս
Պիտի մտածէ մի տաճարական:

ՆԱԹԱՆ

Տաճարակա՞նը միայն, միայն նա՞,
Որովհետև նա պարտաւորուած է
Կարրի օրէնքով: Գիտեմ, լաւ մարդիկ
Ինչպէս են մտածում: Գիտեմ, լաւ մարդիկ
Կան ամեն երկրում:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Կարծում եմ, որ կայ

Զանազանութիւն:

ՆԱԹԱՆ

Այո՛, ի հարկ է
Գոյնի, հանդերձի, կերպարանքի մէջ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այլ և երբեմն մէկ երկրում շատ են,
Երբեմն միւսում:

ՆԱԹԱՆ

Այդ բանում մեծ չէ
Զանազանութիւնն: Մեծ մարդուն պէտք է
Մեծ տարածութիւն: Շատ մօտ իրարից
Տնկած ծառերը ջարդում են միայն
Իրար ոստերը: Բայց մեզ պէս միջակ
Բարութեան մարդիկ շատ կան ամեն տեղ.
Միայն չը պէտք է միմեանց պարսաւեն.
Ճիւղը պէտք է իւր կոշտերին տանէ:
Ծառի գագաթը պէտք է չը կարծէ,
Թէ միայն նա չէ դեռնից բարձրացել:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Շատ ճշմարիտ է:—Բայց ձեզ ծանօթ է
Անշուշտ այն աղդը, որ առաջինը
Սկսեց պարսաւել ուրիշ աղդերին:
Գիտէք դուք, Նաթան, որ ժողովուրդը
Ամենից առաջ ընտրեալ ժողովուրդ
Անուանեց իրան: Թէև չեմ ատում
Այդ ժողովուրդը, բայց և չեմ կարող
Զարհամարհել իւր մեծամտութիւնն:
Մեծամտութիւն, որ նա տուել է
Իբր ժառանգութիւն թէ քրիստոնեային,
Թէ մուսուլմանին, այն է թէ միայն,
Միայն իւր Աստուածն է ճշմարիտ Աստուած:—
Դուք զարմանում էք, որ ես քրիստոնեայ
Եւ տաճարական այսպէս եմ խօսում:
Ե՞րբ և կամ ի՞նչտեղ, եթէ ոչ այստեղ
Եւ մեր օրերում աւելի շատ է

Ցայտնուել բարեպաշտ մոլեգնութիւնը
Իւր ամենասև կերպարանքովը,
Թէ մեր Աստուածն է ամենալաւը,
Եւ թէ մեր այդ լաւ Աստրծուն պէտք է
Բռնի պաշտել տալ բոլոր աշխարհին:
Այժմ ո՞ւմ աչքերից չէ ընկնում կապը....
Բայց թող կոյր լինի, որ կամենում է:—
Մոռացէք, ինչ որ ասացի ես ձեզ,
Եւ թողէք գընամ:

(Ուզում է գնալ.)

ՆԱԹԱՆ

Ո՛հ, դուք չը գիտէք,
Թէ ինչպէս հիմա ես աւելի պինդ
Պիտի կպչիմ ձեզ:— Եկէք, մենք պիտի
Բարեկամ լինինք:— Արհամարհեցէք
Իմ ժողովուրդը, որքան ուզում էք:
Դուք և ես, մենք չենք ընարել մեզ համար
Մեր ժողովուրդը: Մի՞թէ ես և դուք
Մեր ժողովուրդն ենք: Ժողովո՞ւրդ, արդեօք
Ի՞նչ է ժողովուրդ: Ասացէք արդեօք
Քրիստոնեան, հրէան նախ քրիստոնեայ են
Հրէայ, թէ նախ մարդ: Ո՛հ, թէ ես ձեր մէջ
Գտած լինէի այնպիսի մէկին,
Որ բաւական է արդէն նորանով,
Որ մարդ է կոչվում:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Վրկայ է Աստուած,
Որ դուք գտել էք, Նաթան, գտել էք
Այդպիսի մէկին:— Տուէք ձեր ձեռը:—
Ես ամաչում եմ, որ և մի րոպէ
Ձեր մասին սրխալ կարծիք ունեցայ:

ՆԱԹԱՆ

Այդ ինձ պարծանք է: Չէ՞ որ մարդ միայն
Սովորականումն է ուշ ուշ սխալվում:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ անսովորը ուշ է մոռանում:—
Այո՛, Նաթան, մենք, մենք, պէտք է իրար
Բարեկամ լինինք:

ՆԱԹԱՆ

Մենք բարեկամենք:—
Ինչ կուրախանայ Ռէխաս:— Ո՛հ, և ինչ
Պայծառ ապագայ յանկարծ բացվում է
Իմ աչքի առաջ:— Միայն պէտք է նախ
Ճանաչէք նորան:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Սրտիս խղճն է դա:—
Այդ ո՞վ դուրս վազեց այնտեղ ձեր տանից:
Դայան չէ՞:

ՆԱԹԱՆ

Այո՛: Ինչ վախեցած է
Գուցէ Ռէխային բան է պատահել:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ և ԴԱՑԱ, չտապով գալիս է:

ԴԱՑԱ

Նաթա՛ն, ա՛խ, Նաթա՛ն:

ՆԱԹԱՆ

Հ՛ը, ի՞նչ է, Դա՛յա:

ԴԱՑԱ

Խնդրում եմ ներէք ինձ, աղնիւ ասպետ,
Որ կտրում եմ ձեր խօսակցութիւնը:

ՆԱԹԱՆ

Ի՞նչ է պատահել:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ կայ:

ԴԱՑԱ

Սուլթանը

Մարդ է ուղարկել։ Պահանջումէ ձեզ։
Աստուած, սուլթա՞նը։

ՆԱԹԱՆ

Ի՞նձ պահանջումէ

Սուլթանը։ Անշուշտ ուզումէ տեսնել
Թէ ինչ նոր բան եմ բերել ես հետս։
Դայա, ասա որ դեռ չեմ բաց արել
Բոլոր ապրանքը։

ԴԱՑԱ

Ո՛չ, ո՛չ, նա ոչինչ

Չէ ուզում տեսնել։ Նա ձեզ է ուզում,
Նա ձեզ հետ անձամբ ուզումէ խօսել.
Այլև շուտ, որքան կարելի է շուտ։

ՆԱԹԱՆ

Կըգամ, դու գընա։

ԴԱՑԱ

Ով աղնիւ ասպետ,

Դուք չընեղանաք։ Տէր Աստուած, ինչպէս
Անհանգիստ ենք մենք։ Արդեօք Սուլթանը
Ի՞նչ է կամենում։

ՆԱԹԱՆ

Կը տեսնենք։ Գընա։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՆԱԹԱՆ և ՏԱՃԱՐԱԿԱՆ

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ուրեմն դուք չէ՞ք ճանաչում նորան—
Ուզումեմ ասել—անձամբ ծանօթ չէ՞ք։

ՆԱԹԱՆ

Սալադինի հե՞տ։ Ո՛չ, դեռ ծանօթ չեմ։
Ես ոչ փախել եմ նորանից, ոչ էլ

Երբէք աշխատել, որ ծանօթանամ։
Ընդհանուր կարծիքը նորա մասին
Այնքան լաւ է, որ լաւ է հաւատալ,
Եւ ոչ թէ ստուգել։ Բայց հիմա—թէև
Այդպէս չըլինի, նա ձեզ խնայելով....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛, ճշմարիտ, ճշմարիտ է այդ։
Այո՛, իմ կեանքը նորա պարգևն է։

ՆԱԹԱՆ

Որով պարգևեց նա ինձ կրկին կեանք։
Այդ բանը մեր մէջ բոլորը փոխեց.
Ցանկարծ մի կապով կապեց իմ վիզը,
Եւ ես յաւիտեան նորա ծառան եմ։
Անհամբերութեամբ սպասումեմ, թէ ինչ
Պիտի հրամայէ։ Ես ամեն բանի
Պատրաստ եմ, պատրաստ խոստովանելու,
Որ ձեզ համար եմ ծառայում նորան։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Դեռ ևս ինքս չը կարողացայ
Ցայտնել նորան իմ շնորհակալութիւնն,
Թէև շատ անգամ պատահել եմ նրան։
Մի բոպէական տպաւորութիւն
Արի նորա վրայ, որ և անցկացաւ
Մի բոպէի մէջ։ Ով գիտէ արդէն
Մոռացել է ինձ։ Բայց պէտք է էլի
Գոնէ մի անգամ կրկին յիշեցնեմ
Նորան իմ մասին, որ բոլորովին
Որոշէ բաղդս։ Բաւական չէ, որ
Նորա հրամանով դեռ ևս կամ ես,
Որ նորա կամքով էլի ապրումեմ.
Պէտք է նորանից այն էլ իմանամ,
Թէ այսուհետև ում կամքով ապրեմ։

ՆԱԹԱՆ

Անպատճառ, ես էլ ահա գընումեմ—

Շատ կարելի է խօսքը այնպէս դայ,
Որ առիթ տայ մեզ խօսել ձեր մասին—
Այժմ ներեցէք:— Ես պիտի շտապիմ—
Ե՞րբ, ե՞րբ արդեօք ձեզ մեզ մօտ կը տեսնենք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Երբ որ թոյլ կը տաք:

ՆԱԹԱՆ

Երբ որ կամենաք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այսօր:

ՆԱԹԱՆ

Խնդրում եմ ձեր անունն ասէք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Անունս էր— է Կուրդ Ֆօն Շտաուֆէն—Կուրդ:

ՆԱԹԱՆ

Շտաուֆէն—Ֆօն Շտաուֆէն:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ էք զարմանում:

ՆԱԹԱՆ

Ֆօն Շտաուֆէն:—Անշուշտ արդէն այդ ազգից
Շատերը....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛ եղել են այստեղ.
Արդէն շատերը ընկել են այստեղ:
Իմ հօրեղբայրը— ուզում եմ ասել
Հայրս,— բայց ինչի՞ այդպէս սուր աչքով
Նայում էք դու՛ք ինձ:

ՆԱԹԱՆ

Ոչինչ, ո՛հ, ոչինչ:
Ի՞նչպէս կշտանամ ես ձեզ նայելուց:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այդ պատճառով նախ ես եմ թողնում ձեզ:
Զննողի աչքը յաճախ գտել է

Աւելի, քան թէ ցանկացել է նա:
Ես վախենում եմ այդ աչքից, Նաթան:
Թող կամաց կամաց ծանօթացնէ մեզ
Ժամանակը, ոչ հեռաքրքրութիւնն:

ՆԱԹԱՆ

« Զննողի աչքը յաճախ գտել է
Աւելի, քան թէ ցանկացել է նա»:—
Կարծես հոգուս մէջ կարդաց այդ միտքը:—
Այո՛, իրաւ է, նոյնը կարող է
Պատահել և ինձ:—Ոչ միայն վօլֆի
Հասակը ունի, նորա քայլուածքը,
Այլ թէև ձայնը: Իսկ այդպէս, այդպէս
Բարձր էր պահում վօլֆը իւր գլուխը.
Այդպէս էր կրում վօլֆը իւր սուրը,
Այդպէս էր շրփում ձեռով յոնքերը,
Որ ծածկէր նա իւր հրացայտ աչքերը:—
Այսպէս երբեմն ննջում են մեր մէջ
Խոր տպաւորուած պատկերներ, մինչև
Զարթեցնէ նոցա մի բառ, մի հնչիւն:—
Ֆօն Շտաուֆէն—Այո՛:—Ֆիլնէկ և Շտաուֆէն—
Շուտով աւելի հանդամանօրէն
Կը տեղեկանամ: Բայց առաջ գընամ:
Սալադինի մօտ:—Այն ով է կանգնած:
Դայան չէ՞:—Ի՞նչ կայ: Ե՛կ ասա, Դա՛յա:

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ԴԱՅԱ, ՆԱԹԱՆ

ՆԱԹԱՆ

Հը, ի՞նչ կայ: Արդէն հետաքրքիր էի
Իմանալ, այն չէ, թէ ինչ է ուզում
Ինձնից սուլթանը, այլ մի ուրիշ բան:

ԴԱՅԱ

Մի՞թէ Ռէխային մեղադրում էք դուք
Այդ բանի համար: Նոր սկսել էիք

Մտերիմ կերպով խօսել իրար հետ,
Որ Սալադինի հրամանը փախցրեց
Մեզ պատուհանից։

ՆԱԹԱՆ

Ասա՛ Ռէխային
Որ ամեն բոպէ սպասէ—ասպետին։

ԴԱՑԱ

Ճշմարիտ։ Իրա՞ւ։

ՆԱԹԱՆ

Դա՛յա, կարող եմ
Արդեօք քեզ վերայ ես վստահ լինել։
Զգոյշ կաց, խնդրում եմ։ Դու չես ափսոսայ
Այդ բանի համար։ Քո խղճմտանքն էլ
Կը հանգստանայ։ Զգոյշ, որ չը քանդես
Իմ նախագիծը։ Պատմելիս, կամ թէ
Մի բան հարցնելիս համեստ, զգոյշ եղիր....

ԴԱՑԱ

Ինչ ասել կուզէ։—Ահա՛ գընում եմ,
Դուք էլ գընացէք։ Կարծես սուլթանից
Նոր մարդ է գալիս, դէրվիշ Ալ-Հաֆին։
(Դայան դուրս է գնում։)

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՆԱԹԱՆ, ԱԼ-ՀԱՖԻ

ԱԼ-ՀԱՖԻ

Ահա՛ ես էլի գալիս եմ ձեզ մօտ։

ՆԱԹԱՆ

Շատ շտապով գործ է։ Ինչ է կամենում։

ԱԼ-ՀԱՖԻ

Ո՞վ։

ՆԱԹԱՆ

Սալադինը—գալիս եմ, գալիս։

ԱԼ-ՀԱՖԻ

Ո՞ւր ո՞ւր ես գընում։ Սալադինի մօտ։

ՆԱԹԱՆ

Մի՞թէ նա չէ՞ քեզ լինձ մօտ ուղարկել։

ԱԼ-ՀԱՖԻ

Ի՞նձ, ո՛չ։ Բայց մի՞թէ կանչել է նա քեզ։

ՆԱԹԱՆ

Այո՛, կանչել է։

ԱԼ-ՀԱՖԻ

Հիմա հասկացայ։

ՆԱԹԱՆ

Ի՞նչ, ի՞նչ հասկացար։—

ԱԼ-ՀԱՖԻ

Որ... Աստուած վըկայ,
Ես մեղաւոր չեմ։—Ինչեր չասացի
Ձեր մասին, ինչքան սուտ սուտ խօսեցայ,
Որ այդ արդեւլեմ։

ՆԱԹԱՆ

Որ ի՞նչ արդեւլես։
Ի՞նչ ես իմացել։

ԱԼ-ՀԱՖԻ

Որ նա ձեզ հիմա
Նշանակել է իւր դէվլթէրդարը։
Ափսոսում եմ ձեզ։ Բայց այդ բանն աչքով
Չեմ ուզում տեսնել։ Ես իսկոյն կերթամ։
Բայց թէ ո՞ւր, արդէն ասել եմ ձեզ
Իմ ճանապարհը։—Թէ ճանապարհին
Մի որ և իցէ յանձնարարութիւն
Ունիք, ասացէք. ես յօժարութեամբ
Կը ծառայեմ ձեզ։ Միայն ի հարկէ
Պէտք է չըլինի աւելի, քան թէ
Որքան կարող է տանել մի աղքատ։
Գնում եմ, շուտ արէք։

ՆԱԹԱՆ

Բայց դեռ մտածիր
Ալ-Հաֆի։ Ես դեռ ոչինչ չըզիտեմ։
Ինչո՞ւ ես ասում։

ԱԼ-ՀԱՖԻ

Ի հարկէ իսկոյն
Ձեզ հետ կըտանէք նաև քսակները։

ՆԱԹԱՆ

Քսակնե՞րը։

ԱԼ-ՀԱՖԻ

Այո՛, փողերը, որ դուք
Պիտի սուլթանին պարտք տաք։

ՆԱԹԱՆ

Էլ ոչի՞նչ։

ԱԼ-ՀԱՖԻ

Ես պիտի տեսնե՞մ, ինչպէս օրէցօր
Նա կը մերկացնէ ձեզ բոլորովին,
Ես պիտի տեսնե՞մ, ինչպէս խելացի
Ողորմածութեան ամէն ժամանակ
Լի ամբարներից Ն՝ այնքան փոխ կառնէ,
Փոխ կառնէ, կառնէ, մինչև նոցա մէջ
Մկները անգամ սոված կը սատկին։—
Զըլինի թէ դուք կարծումէք, թէ նա,
Ով որ կարօտ է ձեր ոսկուն անշուշտ
Կը հետևի և ձեր խորհուրդներին։—
Չա՛, կը հետևի նա խորհուրդներին։
Երբ է Սալադինը խորհուրդ լսել։
Բայց տեսէք, Նաթա՛ն, հէնց իսկոյն ահա՛
Ինչ պատահեցաւ։

ՆԱԹԱՆ

Ի՞նչ։

ԱԼ-ՀԱՖԻ

Ես գընումեմ
Նորա մօտ, նոր հէնց շախ է խաղացել

Նա իւր քըրոջ հետ։ Զիտտան խաղումէ
Բաւականին լաւ։ Խաղը դեռ այնպէս
Դըրած է այնտեղ, և Սալադինը
Հաստատումէ, թէ ինքը տարուել է։
Նայումեմ, խաղը դեռ վերջացած չէ։

ՆԱԹԱՆ

Ի հարկէ այդ մի գիւտ էր քեզ համար։

ԱԼ-ՀԱՖԻ

Հարկաւոր էր միայն, որ առաջ քաշէր
Իւր թագաւորին և մի զինուորով
Պաշտպանէր։—Ափսո՛ս, կարողանայի
Իսկոյն ցոյց տալ ձեզ։

ՆԱԹԱՆ

Ես հաւատումեմ։

ԱԼ-ՀԱՖԻ

Եւ աշտարակի առաջը այդպէս
Դաշտը բացուելով... Զիտտան կորած է։—
Ես այդ բոլորը ուզումեմ ցոյց տալ,
Կանչումեմ նորան—բայց ի՞նչ է քարծումեմ....

ՆԱԹԱՆ

Նա քո կարծիքին չէ համաձայնում։

ԱԼ-ՀԱՖԻ

Նա ամենևին չէ լսում ինձ և
Արհամարհանքով խառնումէ խաղի
Քարերը։

ՆԱԹԱՆ

Մի՞թէ.

ԱԼ-ՀԱՖԻ

Եւ ասում, թէ նա
Ուզումէ տարուիլ։ Ուզումէ տարուիլ.
Մի՞թէ այդ խաղ է։

ՆԱԹԱՆ

Անշուշտ, ո՛չ. այլ թէ
Խաղի հետ խաղ է։

ԱԼ-ՀԱՖԻ

Փուճ ընկոյզ չարժէ։

ՆԱԹԱՆ

Դա մի մեծ բան չէ, որ նա դէս ու դէն
Ցրվում է փողը. բայց քեզ չըլսել,
Այդ մեծակշիռ հանգամանքի մէջ
Խօսքդ չըլսել. արծուի հայեացքդ
Զըգնահատել, ահա այդ է, այդ,
Որ պահանջում է վըրէժխնդրութիւն։
Այնպէս չէ՞։

ԱԼ-ՀԱՖԻ

Էհ, ի՞նչ։ Ես միայն ասում եմ.
Որ դուք գիտենաք, թէ ինչ գլուխ է նա։
Մի խօսքով, ես էլ չեմ կարող տանել։
Ահա վազվզում եմ բոլոր կեղտոտ
Մավրիտանացոց մօտ և հարցնում եմ,
Թէ ո՞վ է ուզում նորան փող փոխ տալ։
Ես, ես, որ երբէք, երբէք կեանքումս
Ինձ համար խնդրել չեմ ողորմութիւն,
Ես հիմա պէտք է ուրիշի համար
Գընամ փոխ ուզեմ։ Փող փոխ ուզելը
Մուրալուց լաւ չէ, ինչպէս և շահով
Փող տալը լաւ չէ փող գողանալուց։
Գանգէսի ափին ինձ հարկաւոր չէ
Ոչ մեկը անել, ոչ ևս միւսը
Եւ այդ բաներում ծառայել իբրև
Մի անբան գործիք։ Գանգէսի վերայ
Միայն ապրում են ճշմարիտ մարդիկ։
Այստեղ միայն դուք արժանի է.ք, որ
Նոյնպէս ապրէիք Գանգէսի վերայ։—
Ուզում է.ք գընանք։—Ցուէ.ք նորան այդ
Բոլոր հնոտիքը, որի համար նա
Այնքան զբաղուած է։ Առանց դորան էլ
Նա կամաց կամաց բոլորը կառնէ։
Այդպէս կաղատուիք դուք չարչարանքից
Եկէ՛ք, Նաթան, ես դերվիշ չենեմ ձեզ։

ՆԱԹԱՆ

Ես կարծում եմ, որ այդ միշտ կարող ենք։
Ես կըմտածեմ, Ալ-Հաֆի։ Սպասիր...։

ԱԼ-ՀԱՖԻ

Սպասեմ, մըտածէ.ք։ Ոչ, այդ բանի մէջ
Պէտք չէ մտածել։

ՆԱԹԱՆ

Գոնէ մինչև որ
Սուլթանի մօտից կը վերադառնամ.
Մինչև որ հրաժեշտ....

ԱԼ-ՀԱՖԻ

Շատ մտածողը
Անշուշտ ուզում է մի պատճառ գտնել,
Որ հրաժարուի իւր մտադրութենից։
Ով որ կարող չէ շուտ վճռել, ապրել
Իւր ուզածի պէս, նա միշտ ուրիշի
Ստրուկը կըլինի։—Ձեր կամքն է։—Ինչպէս
Ձեզ լաւ է թվում, այնպէս ապրեցէ.ք։—
Իմ ճանապարհը այն կողմն է տանում,
Ձերը այս կողմը։

ՆԱԹԱՆ

Ալ-Հաֆի, չէ՞ որ
Դու ինքդ պէտք է ստուգես հաշիւը։

ԱԼ-ՀԱՖԻ

Է՛հ, դատարկ բան է։ Զարժէ դրամարկղիս
Մնացորդը հաշուել։ Եւ որ ուղիղ են
Իմ հաշիւները— այդ կը վըկայէ.ք
Դուք կամ թէ Զիտտան։ Հիմա մնա՛ք բարով։

(դուրս է գնում։)

ՆԱԹԱՆ (նորա ետևից նայելով.)

Ե՛ս կըվըկայեմ։—Ո՛վ դու վայրենի,
Բարի, ազնիւ մարդ։—Զըգիտեմ, թէ ի՞նչ
Անուն տամ նորան։—Միայն ճշմարիտ
Աղքատն է միակ ճշմարիտ արքան։

(Դուրս է գնում ուրիշ կողմից։)

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

Դաբաևի տունը:

ՐԷԽԱ և ԴԱՑԱ

ՐԷԽԱ

Քեզ ինչպէս ասայ, Դայա, իմ հայրը.
«Թէ ամեն բոպէ կարողեմ սպասել:»
Նշանակումէ, թէ շատ շուտ կը գայ—
Այնպէս չէ՞, Դայա:—Բայց արդէն քանի
Բոպէ անցկացաւ:— Է՛հ, չեմ մտածի
Անցածների վրայ:—Լաւ է կապրեմ ես
Ամեն մօտաւոր, գալոց բոպէում:
Վերջապէս կը գայ անշուշտ այն բոպէն,
Որ նրան կը բերէ:

ԴԱՑԱ

Ո՛հ, թէ սուլթանի
Մարդը չէր եկել, Նաթանն անպատճառ
Իւր հետ կը բերէր տաճառականին:

ՐԷԽԱ

Բայց երբ վերջապէս հասնի այդ բոպէն,
Երբ ամենաջերմ, ամենասասիկ
Իրաս կատարուի. յետոյ—յետոյ ի՞նչ:

ԴԱՑԱ

Յետոյ ի՞նչ: Յետոյ ես էլ յոյս ունիմ,
Որ կը կատարուի և իմ ջերմ իրաս:

ՐԷԽԱ

Յետոյ կուրծքիս մէջ ինչը կը բռնէ
Այդ ըղձի տեղը, երբ որ էլ այնտեղ
Չի լինի բոլոր ըղձերիս վերայ
Իշխող այդ իրաս:—Ոչի՞նչ:— Ո՛հ, ինչպէս
Վախենումեմ ես....

ԴԱՑԱ

Այն ժամանակը
Իմ իրաս, իմը կատարուած ըղձիդ
Տեղը կը բռնէ: Իմ իրաս է տեսնել
Քեզ Եւրոպայում քեզ արժանաւոր
Մի մարդու ձեռին:

ՐԷԽԱ

Սխալվումես, Դայա:—
Այն, ինչ որ ծընումէ քո սրտի մէջ
Այդ իրաս, նոյնը արդելումէ ինձ
Որ իրաս երբէք իմ իրաս դառնայ:
Դու քո հայրենի երկիրն ես ձգտում,
Ես իմը ի՞նչպէս կարող եմ թողնել:
Սիրելիներիդ պատկերը, որ դեռ,
Դեռ քո սրտի մէջ մնացել է անջինջ,
Մի՞թէ աւելի զօրեղ է, քան թէ
Այն որ ես այստեղ տեսնում, լսումեմ
Եւ շոշափումեմ:

ԴԱՑԱ

Ընդդիմացիր դու
Որքան ուզումես: Երկնային վճիռն
Անդառնալի է: Ի՞նչ կասես, եթէ
Նա, որ քեզ փրկեց, նշանակուած է
Իւր Աստծոյ կողմից, որի համար նա
Պատերազմումէ, որ տնզատիսէ
Քեզ այն աշխարհը, որ տանէ քեզ այն
Ժողովուրդի մէջ, որոնց համար դու
Աշխարհ ես եկել:

ՐԷԽԱ.

Այդ ի՞նչ ես ասում,
Սիրելի Դայա։ Ինչ զարմանալի
Մտքեր ես յայտնում։ «Նորա՞ Աստուածը,
Որի համար նա պատերազմում է։»
Աստուած առանձին ո՞ւմն է պատկանում։
Այդ ի՞նչ Աստուած է, որ պատկանում է
Միայն մէկ մարդուն, որի համար մարդ
Պիտ՝ պատերազմի։— Ո՞վ գիտէ, թէ մարդ
Որ կտոր հողի համար է ծընել,
Եթէ դա այն չէ, որի վերայ նա
Աշխարհ է եկել։— Եթէ իմ հայրը
Լըսէր այդ բանը։— Ի՞նչ է արել քեզ
Հայրս, որ դու ինձ երջանկութիւնս
Նորանից հեռու ես միշտ ցոյց տալիս։
Ի՞նչ է արել քեզ, որ իմաստութեան
Սերմը, որ ցանել է նա հոգուս մէջ
Ուզում ես խառնել քո հայրենիքի
Վատ խոտերի, կամ ծաղիկների հետ։—
Սիրելի Դայա, հայրս չէ ուզում
Որ քո գոյնզգոյն ծաղիկներն ամ՝ին
Իմ հողի վերայ։— Այլ և պէտք է
Քեզ ասեմ, իմ Դայա, քո ծաղիկները
Թէև գեղեցիկ, բայց թուլացնում են
Ինձ ու նուազեցնում. զգում եմ, որ նոցա
Անուշ՝հոտութիւնն թմրեցնում է ինձ։—
Քո ուղեղը այդ բանին սովոր է։
Դորա համար ես չեմ դատապարտում
Քո պինդ ջղերը։ Միայն ինձ համար
Վնասակար է դա։ Այ զորօրինակ
Քո այն հրեշտակը փոքր մընաց, որ
Ցիմարացնէր ինձ։— Մինչև հիմա էլ
Այդ յիմարութեան համար իմ հօրից
Ամաչում եմ ես։

ԴԱՑԱ.

Ի՞նչ, յիմարութիւն։

Կարծես թէ խելքը միայն այս տանն է,
Ցիմարութիւն է, հա՛, յիմարութիւն,
Ափսոս, չեմ կարող համարձակ խօսել։

ՐԷԽԱ.

Ո՞վ է արգելում։ Ե՞րբ չեմ լսել քեզ
Մեծ ուշադրութեամբ, երբ դու պատմել ես
Ինձ քո հաւատի մարտիրոսների
Պատմութիւնները։ Ե՞րբ չեմ հիացել
Նոցա գործերով և չեմ արտասուել
Լսելով նոցա չարչարանքները։
Միայն ի հարկէ նոցա հաւատը
Չէր, որ թվում էր ինձ հերոսութիւն։
Սակայն ինձ համար աւելի ևս
Մխիթարական է այն ուսումը,
Թէ մեր առ Աստուած անձնուիրութիւնն
Երբէք կախուած չէ մեր ցնորքներից
Աստուծոյ մասին։— Սիրելի Դայա,
Հայրս շատ անգամ ասել է մեզ այս.
Եւ այդ բանի մէջ ինքդ շատ անգամ
Համաձայնել ես, Դայա, նորա հետ.
Ուրեմն ինչի՞ մենակ քանդում ես,
Ինչ որ շինել ես դու էլ նորա հետ։—
Սիրելի Դայա, լաւ չէ մեզ վիճել
Այս բանի մասին, երբ որ սպասում ենք
Մեր բարեկամին։ Գոնէ ինձ համար։
Ինձ համար անչափ նշանաւոր է,
Թէ արդեօք նա էլ....Դայա, լսեցիր։—
Կարծես մարդ մտաւ։ Ա՛խ, թէ նա լինէր։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՐԷԽԱ, ԴԱՑԱ և ՏԱՃԱՐԱԿԱՆ, որին մէկը դրսից բաց է անում դուռը այս խօսքերով։

Ներս մտէք։

ՐԷԽԱ

(Ցանկարծ վեր է թռչում, բայց շուտ հանդարտվում է և ուզում է ընկնել տաճարականի ոտը։)

Նա է—նա։— Ով իմ փրկիչ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այս բանից ահա՛ փախչելու մտքով
Այնքան ուշացայ. բայց էլի, էլի—

ՐԷԽԱ

Այս հպարտ մարդու ոտը ընկնելով,
Ես ուզումեմ միայն կրկին Աստծուն
Շնորհակալ լինել, ոչ թէ այս մարդուն:
Սա չէ ընդունում շնորհակալութիւն
Ինչպէս այն դոյլը, որ այնպէս ժիր էր
Կրակը հանգցնելիս. որ ջրով լցնում,
Դատարկումէին, բայց նա չէր ըզգում:
Այնպէս էլ սա է: Սա էլ պատահմամբ
Զգուած էր բոցը, այնտեղ պատահմամբ.
Ընկայ ես սորա բազուկների վրայ.
Նոյնպէս պատահմամբ մընացի այնտեղ,
Ինչպէս վերարկուի վերայ ընկած կայծ.
Մինչև, չըզիտեմ, թէ ինչ բան, յանկարծ
Նորից երկուսիս դուրս ձգեց բոցից:—
Ի՞նչ բանի համար ուրեմն պէտք է
Շնորհակալ լինել:—Եւրոպայի մէջ
Գինու զօրութեամբ կատարվումեն և
Ուրիշ շատ գործեր:—Տաճարականը
Պարտաւորուած է միշտ այդպէս վարուիլ,
Ինչպէս այն կրթուած շները, որոնք
Կրակից ու ջրից հանումեն մարդկանց:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

(Որ բոլոր միջոցին զարմանքով և անհանգստութեամբ նայումէր Րէխային.)

Ո՛հ, Դա՛յա, Դա՛յա: Դիցուք թէ ես քեզ
Վատ հանդիպեցայ իմ դառն վշտի
Վայրկեաններին մէջ. ի՞նչ հարկաւոր էր
Լեզուիցս թըռած ամեն յիմար խօսք
Սորան յետ պատմել: Դա՛յա, դա շատ խիստ
Վրէժխնդրութիւն է: Բայց եթէ գոնեա
Չիմայ ինձ համար բարեխօս լինիս:

ԴԱՅԱ

Ասպետ, չեմ կարծում, թէ ձեր խօսքերի
Փոքրիկ խայթերը, որոնք խոցեցին
Րէխայի սիրտը, ձեզ այնտեղ սաստիկ
Վընասած լինին:

ՐԷԽԱ

Դուք վիշտ ունէիք:
Եւ դուք աւելի ժըլատ վարուեցաք
Ձեր վշտի, քան թէ ձեր կեանքի համար:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ո՛վ դու բարեսիրտ, նազելի մանուկ:—
Հոդիս առաջդ կէսը աչք դառաւ,
Միւս կէսը ականջ:—Ո՛չ, ոչ, այս նա չէ
Այն աղջիկը չէ, որին հանեցի
Ես կրակի միջից:—Այն ո՞վ կըլինէր,
Ճանաչէր նորան և նոյն րոպէին
Չընկնէր կրակի մէջ ազատել նորան:
Ինձ ո՞վ կըսպասէր:—Թէև երկիւղը
Փոխումէ դէմքը:—

(Լռութիւն, որի միջոցին տաճարականը զմայլած նայումէ Րէխային.)

ՐԷԽԱ

Բայց դուք իմ աչքին
Էլի նոյն մարդն էք:—

(Դարձեալ լռութիւն, մինչև որ Րէխան չարունակում է իւր խօսքը, որ ընդմիջէ նորա լուռ հիացումը.)

Ասացէ՛ք, ասպետ,
Ի՞նչտեղ էիք դուք այսքան ժամանակ:—
Ես մինչև անգամ կարող եմ հարցնել,
Այժմ ի՞նչտեղ էք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ինչտեղ որ գուցէ
Պէտք չէր ինձ լինել:—

ՐԷԽԱ

Բայց ի՞նչտեղ էիք:—

Ինչտեղ որ գուցէ պէտք չէր ձեզ լինել։
Այդ լաւ չէ։—

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես—ես—զընացել էի
Ի՞նչ է արդեօք այն լերան անունը։—
Սինայ լեառը։

ՐԷԽԱ

Ի՛նչ, Սինայ լեառն էիք։—
Ի՛նչ լաւ։ Վերջապէս հիմա կարող եմ
Հաստատ իմանալ, իրաւ է արդեօք....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՛նչ, ի՞նչն է իրաւ։ Թէ երևում է
Արդեօք դեռ ևս այն տեղը, ինչտեղ
Մովսէս մարգարէն Աստուծոյ առաջ
կանգնած էր, երբ որ....

ՐԷԽԱ

Ո՛չ, այդ չեմ հարցնում։
Որովհետև նա ինչտեղ կանգնած էր,
Աստծոյ առաջն էր։ Ես ցանկանում եմ
Միայն իմանալ, արդեօք իրաւ է,
Որ այդ լերան վրայ աւելի հեշտ է
Բարձրանալ, քան թէ նորանից իջնել։—
Որովհետև ինձ, երբ բարձրացել եմ
Մի լերան վերայ, դորա հակառակն
է միշտ պատահել։—Դէ՛հ, ասպետ։—Ի՞նչ է։—
Ինչի՞ էք դարձնում դուք ձեր երեսը։
Միթէ էլ տեսնել չէք ուզում դուք ինձ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես ուզում եմ ձեր խօսքերը լսել։

ՐԷԽԱ

Որ չընկատեմ, թէ դուք ժպտում էք
Այս իմ պարզամիտ խօսքերի վերայ.
Ժպտում էք, որ ես ուրիշ աւելի
Նշանաւոր բան չեմացայ հարցնել

Այն լերան մասին, որ ամենասուրբ
Լեառն է երկրի վրայ։ Այնպէս չէ՞ արդեօք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ուրեմն դարձեալ պիտի նայեմ ես
Ձեր աչքերի մէջ։—Այդ ի՞նչ է, հիմայ
Դուք էլ աչքերը խոնարհեցնում էք.
Հիմա էլ դուք էք ժպիտը պահում,
Երբ ես ուզում եմ ձեր պատկերի վրայ
Գտնել այն, ինչ որ լսեց ականջս,
Ինչ որ լուրթեամբ պարզ յայտնեցիք ինձ։—
Ո՛հ, Րէխա, Րէխա, ի՞նչ ճշմարիտ են
Նորա խօսքերը. «Միայն պէտք է նախ
Ճանաչէք նորան։»

ՐԷԽԱ

Ո՞վ—և ո՞ւմ մասին
Ասել է ձեզ այդ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

«Միայն պէտք է նախ
Ճանաչէք նորան.» ձեր մասին ասաց
Րէխա, ձեր հայրը։

ԴԱՑԱ

Միթէ չեմ ասել
Ես էլ ձեզ նոյնը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց այս ո՞ւր է նա։
Ո՞ւր է ձեր հայրը։ Միթէ դեռ ևս
Սուլթանի մօտ է։

ՐԷԽԱ

Անկասկած։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Միթէ
Դեռ այնտեղ է նա։—Ի՞նչ մոռացկոտ եմ։
Ո՛չ, ո՛չ, դժուար թէ նա այնտեղ լինի։
Անշուշտ վանքի մօտ սպասում է նա ինձ։

Այնտեղ խոստացանք հանդիպիլ միմիանց:
Թոյլ տուէք գընամ, դնամ բերեմ նորան....

ԴԱՑԱ

Ո՛չ, այդ իմ գործն է: Դուք մնացէք, ասպետ:
Իսկոյն ես ինքս կրբերեմ նորան:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Նա ինձ է սպասում, Դայա, ոչ թէ ձեզ:
Բացի դորանից, շատ կարելի է....
Ով գիտէ.... Գուցէ թէ Սուլթանի մօտ....
Դուք չէք ճանաչում Սուլթանին....Շատ հեշտ
կարող էր շփոթուիլ:—Թոյլ տուէք գընամ
Հաւատացէք, որ վըտանգ կայ, եթէ,
եթէ չըգընամ:

ՐԷԽԱ

Վըտանգ, ի՞նչ վըտանգ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Վըտանգ ինձ համար, ձեզ ու նրա համար,
եթէ որ իսկոյն, իսկոյն չըգընամ:

(գնում է:)

ԵՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ՐԷԽԱ և ԴԱՑԱ

ՐԷԽԱ

Այս ի՞նչէ, Դայա:—Ինչի՞ շուտ գընաց:—
Ի՞նչ պատահեցաւ:—Ի՞նչն է այստեղից
Հալածում նորան:

ԴԱՑԱ

Թողէք, թողէք գնայ:
Ես կարծումեմ, որ դա վատ նշան չէ:

ՐԷԽԱ

Նշա՞ն, ի՞նչ բանի:

ԴԱՑԱ

Որ նորա ներսը

Բան է պատահում: Այնտեղ երռում է,
Միայն շափը չանցնի: Թողէք նորան գնայ:
Հիմա ձեր հերթն է:

ՐԷԽԱ

Ի՞նչպէս եմ հերթն է
Դու էլ նորա պէս դառնումես հիմա
Անհասկանալի:

ԴԱՑԱ

Հիմա կարող էք
Նորան փոխարէնը հատուցանել
Անհանդստութեան համար, որով նա
Զարչարումէր ձեզ: Միայն մի՛ լինիք
Անչափ խստասիրտ, անչափ վրէժխնդիր:

ՐԷԽԱ

Ասածդ միայն դու ես հասկանում:

ԴԱՑԱ

Ուրեմն հիմա էլի հանդիստ էք:

ՐԷԽԱ

Այո՛ հանդիստ եմ, հանդիստ եմ....

ԴԱՑԱ

Գոնեա
Խոստովանեցէք, որ դուք ուրախ էք
Տեսնելով նորա անհանդստութիւնն,
Եւ որ հանդիստ էք, որովհետև նա,
Նա անհանդիստ է:

ՐԷԽԱ

Այդ չեմ հասկանում:
Միայն մի բան կայ, որ ես կարող եմ
Քեզ խոստովանել.—Ես զարմանումեմ
Ինչպէս այնպիսի փոթորկից յետոյ
Ցանկարծ սրտիս մէջ խաղաղութիւն է:
Նորա հայեացքը, նորա խօսքերը
Նորա ընթացքն ինձ....

ԴԱՑԱ

Արդէն կշտացրին:

ՐԷԽԱ

Ո՛չ, այդ չեմ ուզում ասել—ոչ այդ չէ—

ԴԱՑԱ

Առաջին քաղցը միայն հանդարտեցրին։

ՐԷԽԱ

Այո՛, եթէ որ այդպէս ես ուզում։

ԴԱՑԱ

Չէ, այդ չեմ ուզում։

ՐԷԽԱ

Նա միշտ ինձ համար
Թանկագին կլինի. նա միշտ ինձ համար
Կեանքիցս աւելի թանկագին կը մնայ.
Թէպէտ լսելով նորա անունը
Երակս արդէն էլ չէ փոփոխվում.
Թէպէտ, երբ նորա վրայ մըտածում եմ
Սիրտս այնպէս շուտ և այնպէս սաստիկ
Էլ չէ բաբախում։—Ի՞նչեր եմ ասում։
Եկ, Դայա, զընանք պատուհանի մօտ,
Որ արմաւենիներին է նայում։

ԴԱՑԱ

Ուրեմն դեռ ևս բոլորովին
Չէ հանդարտուել ձեր առաջին քաղցը։

ՐԷԽԱ

Արմաւենիքն էլ կըտեսնեմ հիմա
Եւ ոչ թէ միայն նորան նոցա տակ։

ԴԱՑԱ

Այդ սառնութեանը պիտի հետևի
Անշուշտ մի նոր ջերմ։

ՐԷԽԱ

Ո՞ւր է սառնութիւն։
Ոչ ես սառը չեմ։ Հաւատա, պակաս
Բաւականութեամբ չեմ տեսնում, ինչ որ
Այժմ անվրդով սրտով տեսնում եմ։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵԽՈՅԹ

Մի դահլիճ սալադինի պալատում։

ՍԱԼԱԴԻՆ և ՉԻՏՏԱ

ՍԱԼԱԴԻՆ

(Մտնելով ասում է դռան մէջ.)
Այստեղ կըբերէք հրէային, երբ գայ։
Նա շատ չէ շտապում, ինչպէս տեսնում եմ։

ՉԻՏՏԱ

Անշուշտ տանը չէր և շուտ չըգտան։

ՍԱԼԱԴԻՆ

Քոյր, քոյր։

ՉԻՏՏԱ

Կարծես թէ մի ճակատամարտ
Սպասում լինի քեզ։

ՍԱԼԱԴԻՆ

Եւ պիտի կռուիմ
Այնպիսի զէնքով, որ ես գործածել
Չեմ սովրել երբէք, կեղծաւորութեամբ,
Խորամանկութեամբ, դարան գործելով
Եւ խաբէութեամբ։ Ե՞րբ և կամ ի՞նչտեղ
Սովորել եմ այդ։—Եւ ինչի՞ պիտի
Անեմ այդ բանը, ինչի՞, հարցնում եմ։—
Որ փող որսամ, փող։—Որ մի հրէայից
Փող դուրս քաշեմ, փող։ Մի՞թէ վերջապէս
Այն տեղն եմ հասել, որ ես այդպիսի
Չնչին հնարքներով պէտք է աշխատեմ
Ամենաչնչին բանը ձեռք բերել։

ՉԻՏՏԱ

Փոքր բաները արհամարհողը
Պատժվում է, եղբայր։

ՍԱԼԱԴԻՆ

Ափսոս, այդպէս է։

Եւ եթէ իրաւ բարի ու խելօք
Մարդ է այդ հրէան, ինչպէս պատմել է
Առաջ Ալ-Հաֆին։

ԶԻՏՏԱ

Այն ժամանակը
Էլ ինչ հոգս ունինք։ Ժըլատ, կասկածոտ,
Երկչոտ հրէայի համար է միայն
Սարգած դարանը, բարի ու խելօք
Մարդու համար չէ։ Դա արդէն մերն է
Առանց դարանի։ Բայի դորանից
Կունենաս և մի բաւականութիւն
Լսել, թէ ինչպէս այդպիսի մարդը
Կըպատասխանէ. արդեօք որպիսի
Համարձակութեամբ կըկտրտէ նա
Ցանցի թելերը, և կամ զգուշութեամբ
Կանցնի մօտովը։

ՍԱԼԱԴԻՆ

Այդ ճշմարիտ է։
Ես այդ բանին շատ ուրախ կըլինիմ։

ԶԻՏՏԱ

Ուրեմն ինչ ունիս դժուարանալու,
Որովհետև, թէ շատերի նման
Նա էլ հրէայ է, միայն հրէայ է,
Ի հարկէ որ դու ամաչելու չես
Երևիլ նորան այնպէս, ինչպէս որ
Նորա կարծիքով են բոլոր մարդիկ։
Ընդհակառակը ով որ իրան լաւ
Ցոյց կըտայ նորան, այնպիսին նորա
Աչքին կերևի իբրև խեղկատակ,
Իբրև մի յիմար։

ՍԱԼԱԴԻՆ

Ուրեմն պէտք է
Ե՞ս էլ վատ վարուիմ, որ վատն իմ մասին
Վատ չըմտածէ։

ԶԻՏՏԱ

Այո՛, ի հարկէ,
Թէ քո կարծիքով նշանակումէ
Վատ վարուիլ, երբ որ մարդ ամէն բանից
Իրան համեմատ օգուտ է քաղում։

ՍԱԼԱԴԻՆ

Ե՞րբ չէ իմացել կինը զարդարել
Իւր մտքի ծնունդը։

ԶԻՏՏԱ

Զարդարե՞լ. ի՞նչպէս։

ՍԱԼԱԴԻՆ

Ես վախենումեմ, որ այդ նուրբ բանը
Գուցէ կոտրուի իմ կոշտ ձեռի մէջ։—
Այդ բանը պէտք է կատարուի այնպէս,
Ինչպէս հնարուեցաւ. խորամանկութեամբ
Եւ ճարտարութեամբ։—Բայց թող, ինչ անենք։
Պար կըգամ, ինչպէս որ իմանումեմ.
Եւ ի հարկէ որ, աւելի լաւ է
Վատ պար գամ, քան լաւ։

ԶԻՏՏԱ

Ոչ, մի՛ կասկածիր
Դու այդպէս քեզ վրայ։ Ինքս քեզ համար
Երաշխաւոր եմ։ Միայն թէ կամենաս։—
Զարմանալի է, որ քեզ պէս մարդիկ
Աշխատումեն միշտ հաւատացնել մեզ,
Թէ միայն սրբով են նոքա այնքան
Առաջ գընացել։ Արիւծն ի հարկէ
Ամաչումէ, երբ նա ոչխար է անում
Մի աղուէսի հետ, բայց ամաչումէ
Նորանից ոչ թէ, որ նա աղուէս է,
Այլ որ խորամանկ։—

ՍԱԼԱԴԻՆ

Ինչպէս սիրումեն
Կանայք այր մարդկանց բերել իրանց հետ

Հաւասարեցնել։—Դընա։—Ցոյս ունիմ,
Որ ես իմ դասը լաւ կըկատարեմ։

ԶԻՏՏԱ

Ես դընամ։

ՍԱԼԱԴԻՆ

Այո։ Մի՞թէ ուզում ես
Դու այստեղ մընալ։

ԶԻՏՏԱ

Եթէ ոչ այստեղ....
Զեզ մօտ—գոնեա այս կիւց սենեակում։—

ՍԱԼԱԴԻՆ

Որ ակա՞նջ դընես։ Ո՛չ, քոյր, այնտեղ էլ
Անկարելի է. կըխանդարես ինձ։—
Դընա, շուտ դընա, ահա շարժվում է
Վարագոյրը, նա արդէն դալիս է։—
Բայց ականջ չըդնես։ Կըդամ կըտեսնեմ։
(Այն ինչ Զիտտան դուրս է գնում մի դռնով, միւսով մտնում է Նաթանը, և Սալադինը նստում է։)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՍԱԼԱԴԻՆ ԵՎ ՆԱԹԱՆ։

ՍԱԼԱԴԻՆ

Մօտ, մօտ եկ, հրէայ.—Բոլորովին մօտ։
Առանց երկիւղի։

ՆԱԹԱՆ

Երկիւղը մընայ
Թշնամիներիդ։

ՍԱԼԱԴԻՆ

Դո՞ւ ես Նաթանը։

ՆԱԹԱՆ

Այո՛, ես եմ։

ՍԱԼԱԴԻՆ

Եւ իմաստո՞ւն Նաթան

ՆԱԹԱՆ

Ո՛չ։

ՍԱԼԱԴԻՆ

Գիտեմ, դու չես քեզ այդպէս կանչում
Այլ ժողովուրդը։

ՆԱԹԱՆ

Այդ կարելի է,
Որ ժողովուրդը։

ՍԱԼԱԴԻՆ

Զըկարծես, թէ ես
Ժողովուրդի ձայնն արհամարհումեմ։—
Վաղուց ուզումեմ ես ծանօթանալ
Այն այր մարդու հետ, որին իմաստուն
Անուն են տուել։

ՆԱԹԱՆ

Բայց թէ դորանով
Ծաղրումեն նորա՞ն. թէ ժողովուրդի
Բերնում իմաստուն նշանակումէ
Միմիայն խելո՞ք, իսկ խելոք է նա,
Ով իւր օգուտը լաւ ճանաչումէ։

ՍԱԼԱԴԻՆ

Ճշմարիտ օգուտն, ուզում ես ասել։

ՆԱԹԱՆ

Այն ժամանակը ամեն շահասէր
Կըլիներ խելոք. և այն ժամանակ
Խելոք, իմաստուն նոյնը կըլինէր։

ՍԱԼԱԴԻՆ

Ահա՛ դու ինքդ հաստատումես այն,
Ինչ որ հերքումես։—Դու ճանաչումես,
Ինչ որ ճշմարիտ օգուտ է մարդուն,
Բայց ժողովուրդը այդ չէ ճանաչում։
Գոնէ ճանաչել աշխատելիս դու,
Գոնէ մըտածելիս դորա վերայ.

Դորանով արդէն իմաստուն ես դու։

ՆԱԹԱՆ

Ամեն մարդ իրան այդպէս է կարծում։

ՍԱԼԱԴԻՆ

Դէհ, հերիք է այդ համեստութիւնը.
Ինձ զզուելի է միշտ նոյնը լսել
Երբ պահանջում եմ միմիայն զուտ, պարզ
Բանականութիւն։

(Տեղից վեր կենալով։)

Դէհ, մեր գործին գանք։
Բայց անկեղծ խօսիր, տես, հրէայ, անկեղծ։

ՆԱԹԱՆ

Սուլթան, պատրաստ եմ այնպէս ծառայել,
Որ և յետոյ էլ արժանի մընամ
Քո ծանօթութեան։

ՍԱԼԱԴԻՆ

Ծառայե՞լ, ի՞նչպէս։

ՆԱԹԱՆ

Ինձնից կըստանաս ամենալաւը,
Ինչ որ ունիմ ես, և աժան գընով։

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչպէս, ապրանքիդ մասին է խօսքդ.
Քոյրս կըգնէ։—

(Մի կողմը.)

Թող ականջ դընէ։—

(Նաթանին.)

Վաճառականի հետ գործ չունիմ ես։

ՆԱԹԱՆ

Ապա անկասկած կամենում ես դու
Իմանալ արդեօք ինչ եմ նկատել
Իմ ճանապարհին թշնամու մասին,
Որ նորից սկսել է գլուխ բարձրացնել։—
Ուղիղը ասեմ....

ՍԱԼԱԴԻՆ

Ո՛չ, դորա համար
Չեմ դիմում ես քեզ։ Այդ մասին արդէն
Գիտեմ, որքան որ հարկաւոր է ինձ—
Կարճ ասեմ։—

ՆԱԹԱՆ

Սուլթան, հրամայիր։

ՍԱԼԱԴԻՆ

Ես քեզ
Ուզում եմ հարցնել մի բոլորովին
Այլ բանի մասին։—Որովհետև դու
Իմաստուն մարդ ես, ասա ուրեմն
Արդեօք ո՞ր կրօնը և ո՞ր օրէնքը
Համարում ես դու ամենալաւը։

ՆԱԹԱՆ

Սուլթան, դու գիտես, որ ես հրէայ եմ։

ՍԱԼԱԴԻՆ

Ես էլ մուսուլման, և քրիստոնէան էլ
Մեր մէջն է կանգնած։—Անշուշտ այս երեք
Կրօններից մէկը է ճշմարիտը։—
Բեզ նման մէկը չի մընայ այնտեղ,
Ուր պատահաբար աշխարհ է եկել.
Իսկ եթէ մընայ անշուշտ կունենայ
Իւր համոզմունքը, իւր պատճառները։
Ուրեմն ասա՛ քո համոզմունքը,
Ասա՛, իմանամ այն պատճառները,
Որոնց քննելու համար ժամանակ
Չեմ ունեցել ես։ Թող իմանամ ես
Քո ընտրութիւնը, որ հաստատուած է
Այդ հիմքերի վրայ, որ կարողանամ
Ես էլ ընդունել։—Ի հարկէ, որ այս
Մեր մէջ կըմնայ։—Ի՞նչ ես զարմանում։
Ի՞նչ ես աչքերով այդպէս քննում ինձ։—
Գուցէ առաջին սուլթանն եմ, Նաթան,

Որ մի այսպիսի հաճոյք է յայտնում.
Ցոյս ունիմ, որ այդ ինձ անվայել չէ
Իբրև սուլթանի:—Այնպէս չէ՞:—Խօսիր.—
Գուցէ մի վայրկեան ուզում ես մտածել,
Լաւ համաձայն եմ:—

(Ինքն իրան.)

Արդեօք Զիտտան մեզ
Ականջ է դընում: Գնամ հարցնեմ
Արդեօք գոհ է ինձանից:—

(Նաթանին.)

Դէհ, շուտ մտածիր
Շատ չեմ ուշանայ, իսկոյն յետ կըգամ:
(Նա գնում է այն սենեակը, որի մէջ մտաւ Զիտտան.)

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՆԱԹԱՆ (մէնակ.)

Հմ, հմ—այ զարմանք:—Այս ի՞նչ եղաւ ինձ:—
Ի՞նչէ կամենում սուլթանը ինձանից:
Ես սպասում էի, որ փող կուզէ նա,
Իսկ նա ինձանից—ճշմարտութիւն է
Պահանջում, այն էլ—կանխիկ և փայլուն,—
Կարծես թէ դրամէ ճշմարտութիւնը:—
Հա՛, եթէ գոնէ լինէր հին դրամ,
Որի քաշը մեզ արդէն յայտնի է:—
Ճշմարտութիւնը անշուշտ նոր դրամ չէ,
Որ միայն իւր դրոշմից ճանաչում ենք մենք,
Որ մարդ կարող է իսկոյն համարել:
Մի՞թէ գլխի մէջ այնպէս են լընում
Ճշմարտութիւնը, ինչպէս քսակի մէջ
Լցնում են փողը: Ուրեմն ո՞վ է
Մեզանից հրէան, արդեօք նա, թէ ես:—
Բայց ճշմարտութիւն է արդեօք ինձանից
Իրաւ պահանջում:—Թէ և շատ ստոր է
Կասկածել, թէ նա ճշմարտութիւնը
Ուզում է իբրև դարան գործ դնել:—

Շատ ստոր:—Բայց ի՞նչն է մեծի համար ստոր:—
Անշուշտ այդպէս է. նա այնպէս յանկարծ
Ներս ընկաւ իմ տուն: Չէ՞ որ նախ դուռը
Ծեծում է, ով որ՞ մօտենում է մեզ
Իբրև բարեկամ:—Պէտք է զգոյշ լինիմ:—
Բայց ի՞նչպէս անեմ:—Պինդ հրէայ լինել,—
Անկարելի է—և ամենևին
Հրէայ չըլինել—աւելի ևս:
Որովհետև, թէ հրէայ չըլինիմ,
Կարող է հարցնել, ինչի՞ ուրեմն
Մուսուլման չեմ ես:—Շատ լաւ է: Այդ ինձ
Կարող է փրկել:—Առանձնորոյը
Մանուկներին չեն միայն կերակրում:—
Ահա՛ գալիս է: Շատ լաւ է, թող գայ:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՍԱԼԱԴԻՆ և ՆԱԹԱՆ.

ՍԱԼԱԴԻՆ (ինքն իրան.)

Ուրեմն այստեղ դաշտը մաքուր է:—

(Նաթանին)

Ես կարծում եմ, որ շատ շուտ չեկայ ես.
Եւ դու բոլորը լաւ մտածեցիր:
Ուրեմն խօսիր: Այստեղ մեզ ոչ ոք
Կարող չէ լսել:

ՆԱԹԱՆ

Երանի լսէր
Բոլոր աշխարհը:

ՍԱԼԱԴԻՆ

Այդքան վստահ ես
Ուրեմն քեզ վրայ: Այո՛, այդ իրաւ
Խաստութիւն է. երբէք չըծածկել
Ճշմարտութիւնը, և նորա համար
Ամեն բան զոհել. թէ կեանք, թէ ստացուածք:

ՆԱԹԱՆ

Այո՞, եթէ որ այդ հարկաւոր է,
Եթէ օգուտ է։

ՍԱԼԱԴԻՆ

Այսուհետև ես
Անշուշտ իրաւունք կունենամ կրբել
Իմ տիտղոսներից նոյնպէս այս մէկը.
Աշխարհ և օրէնք բարեոքող։

ՆԱԹԱՆ

Իրաւ,
Գեղեցիկ տիտղոս։—Բայց, սուլթան, թոյլ տուր,
Նախ քան կրբանամ սիրոս քո առաջ,
Մի առակ պատմեմ։

ՍԱԼԱԴԻՆ

Շատ լաւ, ինչի՞ չէ։
Այլև առակներ շատեմ սիրում ես,
Երբ լաւ են պատմում։

ՆԱԹԱՆ

Երբ լաւ են պատմում։
Ափսոս հրմուտ չեմ ես այդ բանի մէջ։

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ, էլի այդպէս մեծամիտ համեստ—
Դէհ, պատմի՛ր, պատմի՛ր։

ՆԱԹԱՆ

Շատ տարի առաջ արևելքումը
Ապրում էր մի մարդ, որ մի թանկագին
Մատանի ընծայ ստացել էր իրան
Սիրելի անձից։ Գարն էր մի օպալ,
Որ բիւր գեղեցիկ գոյներով խաղում,
Եւ ունէր իւր մէջ ծածուկ զօրութիւն,
Աստծուն և մարդկանց հաճելի անել,
Ով որ այդ յուսով կրում էր մատին։
Ուրեմն ի՞նչ զարմանք, որ այդ պատճառով
Արևելաբնակ այն մարդը երբէք

Մատից հեռացնում չէր այն մատանին,
Եւ կարգադրութիւն արեց յաւիտեան
Պահել իւր տան մէջ։ Ահա այս կերպով
Մատանին թողեց նա իւր ամենից
Սիրելի որդուն և կրտակ արեց,
Որ սա էլ նոյնպէս յանձնէ այն որդուն
Որին աւելի սիրում կը լինի.
Եւ միշտ ամենից սիրելի որդին,
Առանց նայելու նորա հասակին.
Միայն մատանու զօրութեամբ լինի
Տան տէրն ու մեծը։—Հասկացի՞ր, սուլթան։

ՍԱԼԱԴԻՆ

Ես հասկանում եմ։ Դէհ շարունակի՛ր։

ՆԱԹԱՆ

Եւ այսպէս որդուց որդի անցնելով
Վերջապէս հասաւ մատանին մի հօր,
Որ ունէր երեք որդի։ Երեքն էլ
Հաւասար հնազանդ էին միշտ նորան,
Եւ հետևաբար ինքն էլ հաւասար
Սիրում էր նոցա։ Միայն երբեմն
Սա, երբեմն նա, երբեմն երրորդը—
Նայելով որն էր նոցանից լինում
Մէնակ նորա հետ և միւս երկուսի
Բացակայութեամբ առանձին յայտնում
Հօրը իւր սէրը—թվում էր նորան
Աւելի, քան թէ միւս երկու որդին
Արժանի ստանալ այն թանկ մատանին,
Որ և առանձին խոստանում էր նա
Իւրաքանչիւրին։ Այդ բանը այսպէս
Շարունակուեցաւ—մինչև մեռնելու
Ժամանակն եկաւ, և բարի հայրը
Տարակուսեցաւ։ Նա շատ ցաւում է,
Որ պէտք է զրկէ իւր երկու որդուն,
Որոնք իւր խոստմանը հաւատացին։—
Ի՞նչ պէտք է անէր։—Ծածուկ կանչում է

Իւր մօտ մի վարպետ, որին յանձնում է
Իւր մատանու պէս երկուսը շինել,
Եւ պատուիրում է չբնայել ոչինչ
Ծախս և աշխատանք, որ բոլորովին
Նման լինին իւրին: Այդ յաջողում է
Վարպետին: Երբ որ մատանիները
Բերում է հօր մօտ, ինքը հայրն անդամ
Չէ կարողանում որոշել, որն է
Իւր իսկականը: Ուրախ կանչում է
Իւր որդկերանցը իւրաքանչիւրին
Առանձին իւր մօտ, իւրաքանչիւրին
Առանձին տալիս իւր օրհնութիւնը
Եւ իւր մատանին,—ապա մեռնում է:—
Լսո՞ւմ ես, սուլթան:

ՍԱԼԱԴԻՆ

Լսում եմ, լսում.—
Շարունակիր և շուտով վերջացրու
Դու քո առակը:

ՆԱԹԱՆ

Արդէն վերջացրի:
Մնացածն ինքն իրան հասկանալի է:—
Հաղիւթէ հայրը հոգին աւանդեց,
Որ ամեն մէկը ահա գալիս է
Իւր մատանիով և ուզում է տան
Իշխանը լինել:—Սկսում են քննել,
Վիճել, գանգատել: Ի զուր. ոչ մէկը
Չէ կարողանում ապացուցանել
Թէ իւր մատանին է իսկականը:—
(Կարճ ժամանակ լռում է սպասելով սուլթանի պատասխանին:)
Համարեա այնպէս, ինչպէս որ և մենք
Հիմա չենք կարող ապացուցանել,
Թէ արդեօք որն է ուղիղ հաւատը:

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ: Մի՞թէ, Նաթան, այդ պիտի լինի
Հարցիս պատասխան....

ՆԱԹԱՆ

Դորանով միայն
Ուզում եմ խնդրել ես ներողութիւն,
Որ վստահանում չեմ զանազանել
Մատանիները, որոնց այն մտքով
Շինել տուել հայրը, որ մէկը միւսից
Չը զանազանուի:

ՍԱԼԱԴԻՆ

Մատանիները:—
Ի՞նչ ես դու ինձ հետ բառերով խաղում:—
Ես կարծում եմ, որ այն կրօնները,
Որոնց յիշեցի, անշուշտ իրարից
Զանազանվում են նոյն իսկ հանդերձով
Եւ կերակուրով:

ՆԱԹԱՆ

Այո՛, միայն ոչ
Իրանց հիմքերով:—Չէ՞ որ բոլորն էլ
Պատմութեան վերայ են հիմնած, որ մեզ
Հասել է գրով կամ աւանդութեամբ:—
Չէ՞ որ պատմութեան պէտք է հաւատանք:—
Այնպէս չէ՞:—Մենք որո՞նց սիրոյ
Եւ հաւատի վրայ աւելի պակաս
Կասկած ենք յայտնում, եթէ ոչ մերոնց,
Որոնց արիւնն ենք, որոնք մեր մանուկ
Օրերից սկսած ապացուցել են
Մեզ իրանց սէրը, որոնք մեզ երբէք,
Երբէք խաբել չեն, եթէ աւելի
Փրկարար չէր մեզ խաբուած լինելը:—
Ի՞նչպէս կարո՞ղ եմ ես իմ հայրերին,
Պակաս հաւատալ, քան թէ որքան դու
Ինքդ հաւատում ես քո հայրերին:
Կամ թէ՞ կարո՞ղ եմ պահանջել քեզնից,
Որ դու սուտ հանես քո նախորդներին,
Որ համաձայնիս նախորդներիս հետ:
Քրիստոնեաների մասին էլ նոյնը

Կարող ենք ասել։ Այնպէս չէ՞, սուլթան։—

ՍԱԼԱԴԻՆ (ինքն իրան.)

Անմահ Աստուածը վըկայ, այս մարդը
Ուղիղ է ասում։ Ես պիտի լռեմ։

ՆԱԹԱՆ

Բայց դառնանք կրկին մեր մատանու վրայ։
Ինչպէս ասացի, որդիքն իրար վրայ
Գանգատ յայտնեցին և ամեն մէկը
Երդմամբ հաստատում էր դատաւորին,
Թէ անմիջապէս հօրից է ստացել
Նա իւր մատանին—որ ճշմարիտ է—
Թէ արդէն վաղուց խոսք ունէր հօրից,
Որ ժամանակով պիտի վայելէր
Նա այն մատանու արտօնութիւնը։—
Այդ էլ ուղիղ է։—Հայրը չէր կարող,
Ամեն մէկն այսպէս հաւատացնում էր,
Այդ խարդախութիւնն անել նորա դէմ.
Եւ առաջ քան թէ այդպիսի կասկած
Կըտանէ նա իւր սիրելի հօր վրայ,
Աւելի շուտով պէտք է մեղադրէ
Խարդախութեան մէջ իւր եղբայրներին,
Թէև ունեցել չէ նոցա մասին
Երբէք վատ կարծիք. և թէ անպատճառ
Արդէն կըգտնէ նա դաւաճանին
Եւ իւր վըրէժը կառնէ նորանից։

ՍԱԼԱԴԻՆ

Բայց դատաւորը։—Ես անհամբեր եմ
Լսել, թէ արդեօ՞ք ինչ պիտ՝ ասել տաս
Դու դատաւորին։ Դէ՛հ, ասա՛ տեսնեմ։

ՆԱԹԱՆ

Դատաւորն ասաց. «Թէ տեղն ու տեղը
Չէք բերի իսկոյն ինձ մօտ ձեր հօրը,
Ապա կարտաքսեմ ձեզ իմ ատեանից։
Մի՞թէ կարծում էք, թէ ես նստած եմ
Այստեղ, որ մեկնեմ ձեր առաջարկած

Հանելուկները։ Կամ թէ սպասում էք
Մինչև իսկական մատանին ինքը
Բերանը բանայ։—Բայց. կացէք։ Չէ՞ որ
Լսեցի ձեզնից, որ այն մատանին
Ունի հրաշալի զօրութիւն իւր մէջ,
Աստծոյ և մարդկանց առաջ սիրելի
Անել իւր տիրոջ։ Այդ պէտք է վճռէ,
Որովհետև սուտ մատանիները
Չունին իրանց մէջ այդ զօրութիւնը։—
Դէ՛հ այժմ ասացէք, ձեզնից երկուսը
Ո՞րին աւելի սրտով սիրում էք։—
Դէ՛հ, ասացէք, է։ Ինչի՞ էք լռում։
Մատանիներ ազդում են միայն
Տէրերի՞ և ոչ ուրիշների՞ վրայ։
Եւ ամեն մէկը ձեզանից միայն
Ինքը իւր ա՞նձն է աւելի սիրում։—
Ապա ուրեմն երեքդ էլ խաբուած
Խաբեբաներ էք. Եւ ձեր երեքի
Մատանիներն էլ իսկականը չեն։
Անշուշտ իսկական մատանին կորաւ,
Եւ այդ կորուստը ծածկելու համար
Նորա փոխարէն հայրը շինել տուեց
Ուրիշ երեքը։

ՍԱԼԱԴԻՆ

Հիանալի է,
Հիանալի է։

ՆԱԹԱՆ

Ուրեմն եթէ,
Այսպէս դատաւորը շարունակեց,
Վճռիս փոխանակ չէք ուզում լսել
Դուք իմ խորհուրդը, գնացէք այստեղից։—
Իսկ խորհուրդս այս է։ Դուք ամեն մէկդ
Բաւականացէք ձեր ունեցածով
Եթէ ձեր հօրից էք ստացել դուք ձեր
Մատանիները, թող ամեն մէկը
Ձեզնից հաւատայ, թէ իւր մատանին

Է իսկականը։—Գուցէ ուզում էր
Հայրն այն մատանու բռնութիւնը իւր
Տանից վերացնել։—Անշուշտ սիրում էր
Նա երեքիդ էլ հաւասար սիրով,
Որ չէր կամենում թոյլ տալ, որ մէկը
Ճնշէ երկուսին։—Ուրեմն ձեզնից
Թող ամեն մէկը աշխատի սիրել
Անկեղծ և առանց նախապաշարման
Մնացած երկուսին։ Թող ամեն մէկը
Ձեզանից ձգտի, որ իւր մատանու
Քարի զօրութիւնն երևան հանէ,
Եւ այդ զօրութեան օգնական լինի
Նա իւր հեղութեամբ, խաղաղասիրութեամբ,
Անկեղծ, ջերմեռանդ անձնուիրութեամբ
Առ Աստուած։ Եւ թէ ձեր թոռների մէջ
Մի օր կը յայտնուի զօրութիւնը ձեր
Մատանիների, ապա շատ հազար
Տարիներից յետ կրկին կը կանչեմ
Ձեզ այս տեղանը, ուր այն ժամանակ
Այս աթոռի վրայ նստած կը լինի
Ինձնից աւելի իմաստուն մի մարդ
Եւ վճիռ կը տայ։ Հիմա գընացէք։—
Ահա ինչ ասաց դատաւորն համեստ։

ՍԱԼԱԴԻՆ

Աստուած իմ, Աստուածս։

ՆԱԹԱՆ

Սալադին, եթէ
Զգում ես, որ դու ես մեզ խոստացած այն
Իմաստուն մարդը....

ՍԱԼԱԴԻՆ

(Վազում է նորա մօտ և բռնում է նորա ձեռը, որ մինչև վերջը էլ չէ թողնում։)

Ե՞ս։ Ո՛չ, ես հո՞ղ եմ,
Ո՛չինչ եմ, Աստուածս։

ՆԱԹԱՆ

Ի՞նչէ, ի՞նչ եղաւ
Քեզ, սուլթան։

ՍԱԼԱԴԻՆ

Նաթան, սիրելի՛ Նաթան։—
Քո դատաւորի խոստացած հազար
Տարիները դեռ ևս չեն անցել։
Նորա աթոռը իմ աթոռը չէ։—
Գնա՛, Նաթա՛ն,—միայն բարեկամս եղի՛ր։

ՆԱԹԱՆ

Էլ ուրիշ ոչինչ չունէ՞ր ասելու
Ինձ Սալադինը։

ՍԱԼԱԴԻՆ

Էլ ոչինչ։

ՆԱԹԱՆ

Ոչի՞նչ։

ՍԱԼԱԴԻՆ

Ոչինչ։—Բայց ի՞նչ կայ։

ՆԱԹԱՆ

Ես սպասում էի
Պատեհ դիպուածի, որ յայտնեմ, սուլթա՛ն,
Քեզ եմ խնդիրքը։

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ դիպուած պէտք է
Խնդրելու համար։—Ասա՛ խնդիրքդ։

ՆԱԹԱՆ

Նոր եմ յետ դառել հեռու տեղերից,
Ուր գնացել էի պարտքեր ժողվելու։—
Պատրաստի դրամը շատ ունիմ ձեռիս։
Ժամանակն այժմ կասկածելի է,—
Եւ ես չգիտեմ, ինչտեղ կարող եմ
Ապահով կերպով պահել իմ փողը։—

Եւ այդ պատճառով կարծում էի ես—
Որովհետև մոտ է պատերազմը —
Գուցէ հարկաւոր լինի քեզ փողս:

ՍԱԼԱԴԻՆ

(Սուր աչքով նայելով Նորան։)
Նաթան—չեմ ուզում իմանալ արդեօք
Արդէն եկել է քեզ մոտ Ալ-Հաֆին—
Ցեմ ուզում քննել թէ ինչ առանձին
Կասկած ստիպում է քեզ, որ այդ բանը
Առաջարկես ինձ:

ՆԱԹԱՆ

Ի՞նչ կասկած, սուլթան:

ՍԱԼԱԴԻՆ

Ես արժանի եմ այդ բանին:—Ներիր—
Ի՞նչ օգուտ: Պէտք է խոստովանիմ քեզ,—
Որ միտք ունէի—

ՆԱԹԱՆ

Մի՞թէ նոյն բանը
Պահանջել ինձնից:

ՍԱԼԱԴԻՆ

Այո՛:

ՆԱԹԱՆ

Ուրեմն
Այդ մեզ երկուսիս էլ շատ յարմար է:
Բայց որ չեմ կարող բոլոր պատրաստի
Փողերը քեզ տալ, դորա պատճառն է
Մի երիտասարդ տաճարական, որ
Քեզ էլ յայտնի է: Ես պարտաւոր եմ
Մի նշանաւոր գումար տալ Նորան:

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ տաճարական: Մի՞թէ ուզում ես

Քո փողով օգնել դու իմ ոխերիմ
Թշնամիներին:

ՆԱԹԱՆ

Իմ խօսքը միայն
Նորա մասին է, որի կեանքը դու
Ինքդ խնայեցիր....

ՍԱԼԱԴԻՆ

Ա՜խ, այդ ինչ ես դու
Իմ միտը բերում:—Ես բոլորովին
Մոռացել էի այն երիտասարդ
Մարդուն:—Ուրեմն ճանաչում ես դու
Նորան:—Ո՞ւր է նա:

ՆԱԹԱՆ

Մի՞թէ չգիտես,
Որ Նորան ցոյց տուած ողորմութիւնդ
Նորա միջոցով եկաւ և ինձ վրայ:
Նա վտանգի մէջ ձգեց իւր հաղիւ
Խընայած կեանքը, և իմ աղջկան
Ազատեց կրակից:

ՍԱԼԱԴԻՆ

Նա՜, նա՜ այդ արեց:—
Կերպարանքից էլ երևում էր այդ:
Անշուշտ եշքայրս էլ, որին նա նման է,
Նոյն բանը կանէր:—Դեռ այստեղ է նա:
Ուրեմն ինձ մոտ բեր:—Ես այնքան շատ բան
Պատմել եմ քրոջս իւր եղբօր մասին,
Որ պէտք է Նորան վերջապէս ցոյց տամ
Եւ նմանատիպը:—Գընա՛ բե՛ր Նորան:—
Եւ այսպէս ահա՛ մի բարի գործին,
Թէ և լոկ կրքի ծընունդ լինի դա,
Հետևում են այլ շատ բարի գործեր:
Դէ՛հ, գնա՛ բեր Նորան:

ՆԱԹԱՆ

(Թողնելով Սալադինի ձեռը.)
Իսկոյն:—Ի հարկէ

Միւս բանին նոյնպէս համաձայն ես դու։

(Դուրս է գնում։)

ՍԱԼԱԴԻՆ

Ափսոս, որ քրոջս չըթողի լսել։—
Գնամ, գնամ նորա մօտ։—Բայց ի՞նչպէս արդեօք
Պատմեմ ես նորան բոլոր լսածս։

(Դուրս է գնում ուրիշ կողմից։)

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

արմաւենիների տակը վանքի մօտ, ուր տաճարականը սպասում է նաթանին։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

(Բաւական ժամանակ վրդոված մարդ է գալիս յետ ու առաջ, մինչև վերջապէս կանգնում է և սկսում է խօսել։)

—Ցոգնած ողջակէզն այստեղ կանգնում է։—
Շատ լաւ։ Չեմ ուզում, այո՛ չեմ ուզում
Գիտենալ, ինչ է կատարվում իմ մէջ.
Ոչ էլ ուզում եմ գուշակել, թէ ինչ
Պիտի կատարուի։—Այսքան հերիք է,
Որ ի զուր փախայ, ի զուր փախայ ես։—
Բայց ի՞նչ անէի, որ չըփախչէի։—
Թող ինչ ուզում է հիմա պատահի։—
Հարուածը այնքան արագ էր, որ ես
Չըկարողացայ մի կողմը քաշուիլ,
Չընայելով, որ այնքան ժամանակ
Աշխատում էի, որ ինձ չըդիպչի։—
Տեսնել այն աղջկան, որին տեսնելը
Ինձ ամենևին չէր զրաւում առաջ.
Տեսնել և վճռել, նորան յաւիտեան
Աչքից չըթողնել։ Վճռե՞լ։ Վճիռը
Մտադրութիւն է, վճիռը գործէ.
Իսկ ես, ես էի կըրաւորական
Մի անձն միայն։—Նորան տեսնելը
Նորա հետ կապուած, հետը միացած

Զգալը մէկ եկաւ։—Եւ այդ զգացմունքը
Նոյնն է և այժմ։—Նորանից բաժան
Ապրելն ինձ համար անկարելի է,
Նորանից բաժան ապրելը մահ է,—
Մահ է և այնտեղ, ուր մենք կըլինինք
Մեռնելուց յետոյ։—Ա՞րդեօք այս սէր է։
Այո՛—սիրում է տաճարականը—
Քրիստոնեան սիրում է հրէայ աղջկան։—
Ի՞նչ անենք—Արդէն այս գոված երկրում
Հրաժարուել եմ շատ կարծիքներից,
Եւ այդ պատճառով գովում եմ և ես։—
Ի՞նչ է պահանջում ինձանից կարգը։
Տաճարականը մեռած է իմ մէջ.
Մեռաւ նոյն ժամին, երբ գերի ընկաւ
Սալադինի մօտ։ Եւ Սալադինի
Պարգևած գլուխը չէ առաջուանը։—
Սա նոր է, ոչինչ յայտնի չէ սորան,
Որով առաջուանը լցրել էին,
Որով կաշկանդած էր առաջուանը։—
Եւ սա աւելի լաւն է նորանից,
Աւելի յարմար հայրենի երկրին։
Ես այդ ըզգում եմ։ Սորանով միայն
Սկսեցի ես էլ այնպէս մտածել,
Ինչպէս մըտածել է այստեղ հայրս.
Թէ արասպել չէ, ինչ որ պատմել են
Ինձ նորա մասին։ Առասպե՞լ։—Սակայն
Շատ հաւանական, որ երբէք այնպէս.
Ճշմարտանման չէ երևել ինձ
Ինչպէս որ հիմա, երբ որ նորա պէս
Ես էլ ընկնելու վըտանգի մէջ եմ։—
Նա ընկա՞ւ։ Լաւ է, որ ես էլ ընկնիմ
Իբրև չափահաս, քան կանգուն մընամ
Իբրև մի մանուկ։—Նրա օրինակն ինձ
Երաշխաւոր է, որ նա ինձ կըտայ
Իւր հաճութիւնը։ Էլ ո՞ւմ հաճութեան
Կարոտ եմ արդեօք։—Նաթանի՞ն։—Նորա

Ոչ միայն հաճուլթեան, քաջալերուլթեան
Հաւաստի եմ ես։—Ի՞նչ հրէայ։—Ինչպէս
Հրէայ երևիլ աշխատումէ նա։
Ահա՛ գալիս է, ինչպէս շտապումէ,
Եւ ի՞նչ ուրախ է։ Բայց Սալադինից
Ո՞վ է տխուր գնացել։ Նաթան, է՛յ Նաթան։

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ՆԱԹԱՆ և ՏԱՃԱՐԱԿԱՆ։

ՆԱԹԱՆ

Այդ դո՞ւք էք, ասպետ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ շատ ուշացաք
Դուք սուլթանի մօտ։

ՆԱԹԱՆ

Ոչ, այնքան շատ չէ։
Ես ճանապարհին միայն ուշացայ։—
Ա՛խ, ճշմարիտ, կուրդ, նա արժանի է
Իւր մեծ համբաւին։ Նորա համբաւը
Նորա ստուէրն է միայն։—Բայց առաջ պէտք է
Ասեմ ձեզ, որ....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ։

ՆԱԹԱՆ

Նա կամենումէ
Ձեզ տեսնել, ձեզ հետ խօսիլ, և իսկոյն։
Եկէք մի բոպէ տուն մտնենք, ինչտեղ
Ես նորա համար պէտք է մի այլ բան
Պատրաստեմ, յետոյ կերթանք նորա մօտ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես էլ չեմ մտնի, Նաթա՛ն, ձեր տունը,
Մինչև....

ՆԱԹԱՆ

Ուրեմն արդէն էիք դուք։
Տեսա՞ք աղջկաս։—Խօսեցա՞ք հետը։—
Ասացէ՛ք, ի՞նչպէս հաւանեցիք նրան։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Խօսք չըկայ։ Միայն էլ այսուհետև—
Ձեմ տեսնի նորան, երբէ՛ք իմ օրում,—
Եթէ դուք իսկոյն չէ՛ք խոստանայ ինձ—
Որ ես կարող եմ միշտ տեսնել նորան,
Միշտ և ամեն ժամ։

ՆԱԹԱՆ

Ասացէ՛ք, ի՞նչպէս
Հասկանամ ես այդ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

(Կարճ լռութիւնից յետոյ յանկարծ նորա վզին փաթաթուելով.)

Հա՛յր։

ՆԱԹԱՆ

—Երիտասա՛րդ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ոչ որդի՞։—Նաթա՛ն, խնդրումեմ, Նաթա՛ն։

ՆԱԹԱՆ

Բարի՛ պատանի։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ոչ որդի՞։—Նաթա՛ն,
Աղաչումեմ ձեզ։—Երդուեցնումեմ ձեզ
Բնութեան անդրանիկ և սուրբ կապերով—
Մի՛ նախադասէ՛ք նոցանից յետոյ
Հնարած կապերը։ Բաւականացէ՛ք,
Նաթա՛ն, որ մարդ էք։—Մի՛ հեռացնէ՛ք ինձ
Ձեզնից։

ՆԱԹԱՆ

Սիրելի՛, աղնի՛ւ բարեկամ....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ որդի՞։ Ո՞չ, ո՞չ։—Եւ մինչև անգամ
Ոչ այն ժամանակ, եթէ որ արդէն
Ձեր աղջկայ սրտում երախտագիտութիւնն
Բացել է սիրոյ համար ճանապարհ։
Ոչ այն ժամանակ, եթէ այդ երկու
Փափուկ զգացմունքը սպասում են միայն
Ձեր ակնարկութեան, որ միաւորուին։—
Լռում էք, Նաթան.

ՆԱԹԱՆ

Դուք զարմացնում էք
Ինձ, ասպետ, ձեր այդ առաջարկութեամբ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ձեզ զարմացնո՞ւմ են,—զարմացնո՞ւմ, Նաթան,
Ձեր իսկ մտքերը։—Էլ չէք ճանաչում
Դուք ձեր մտքերը, որովհետև իմ
Բերանն է յայտնում։—Զարմանո՞ւմ էք դուք։

ՆԱԹԱՆ

Մինչև չիմանամ, թէ՞ որ Շտաուֆէնն էր
Ձեր հայրը։—

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Նաթան, այդ ի՞նչ էք ասում։—
Մի՞թէ այսպիսի բոպէում միայն
Հետաքրքրութիւն էք ըզգում ձեր մէջ։

ՆԱԹԱՆ

Որովհետև ես երբեմն ունէի
Մի ծանօթ Շտաուֆէն, որի անունն էր
Կոնրադ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ եթէ—նոյն իսկ իմ հայրը
Այդպէս էր կոչվում։

ՆԱԹԱՆ

Ճշմարիտ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛,
Ես ինքս իմ հօր անունն եմ կրում.
Կուրդը Կոնրադ է։

ՆԱԹԱՆ

Ուրեմն իմ ծանօթ
Կոնրադը ձեզ հայր չէր կարող լինել։
Որովհետև իմ Կոնրադը ձեզ պէս
Տաճառական էր. ամուսնացած չէր։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ անենք։

ՆԱԹԱՆ

Ի՞նչպէս։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Մի՞թէ չէր կարող
Նա այդ պատճառով իմ հայրը լինել։

ՆԱԹԱՆ

Կատակ էք անում։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Իսկ դուք, իրաւ որ,
Շատ խորն էք քննում։—Բայց ի՞նչ կասէիք
Թէ ապօրինի զաւակ եմ գիցուք։—
Այդ կարգի մարդկանց չըպէտք է նոյնպէս
Շատ արհամարհել։—Բայց թողէք հանգիստ
Իմ նախորդներին։ Ես էլ ձերերին—
Եւ այս ասելով, չըկարծէք, թէ ձեր
Տոհմաբանութեան վրայ կասկած ունիմ։
Աստուած ո՛չ անէ։—Կարող էք մինչև
Հայր Աբրահամը տանել հասցընել
Դուք ձեր ծագումը։ Նորանից առաջ
Ես ինքս գիտեմ, ինքս կասեմ ձեզ։

ՆԱԹԱՆ

Դուք նեղանում էք։—Բայց արժանի՞ եմ

Արդեօք այդ բանին: Մի՞թէ ես արդէն
Բացասեցի ձեզ: Ես միայն չեմ ուզում
Ձեզ այս բոպէին խօսքի վրայ բռնել:—
Աւելի ոչինչ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Աւելի ոչի՞նչ,—
Իրաւ, էլ ոչի՞նչ: Ո՛հ, ներեցէք ինձ....

ՆԱԹԱՆ

Հիմա եկէք գնանք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ո՞ւր գընանք, ձեր տո՞ւն:—
Ո՛չ, ո՛չ, չեմ կարող:—Այնտեղ կայրուիմ ես:—
Ես ձեզ կըսպասեմ այստեղ: Գընացէք:—
Թէ էլի պիտի տեսնեմ ես նորան,
Ապա բաւական կըտեսնեմ արդէն:
Եթէ ոչ, մընայ, առանց դորան էլ
Արդէն շատ տեսայ....

ՆԱԹԱՆ

Ես չեմ ուշանայ:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՏԱՃԱՐԱԿԱՆ, փոքրիկ յետոյ ԴԱՑԱ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Շատ բաւական է:—Մարդու ուղեղը,
Որ այնքան շատ բան կարող է տանել,
Ինչպէս երբեմն յանկարծ լցվում է
Մի ինչին բանով:—Ո՛չ, լաւ չէ, լաւ չէ:
Թող լիքը լինի, ինչով ուզում է:—
Բայց համբերութիւն: Հոգին կըճմլէ
Ուրած ուղեղը, կըգտնէ մի ելք,
Եւ լոյսն ու կարգը կըվերադառնան:—
Մի՞թէ առաջին անգամն եմ սիրում:
Կամ գուցէ սէր չէր այն, ինչ որ առաջ

Սէր էի կարծում:—Մի՞թէ միայն այս է
Սէր, ինչ որ հիմա ըզգում եմ իմ մէջ....

ԴԱՑԱ

(Կամաց մօտենում է մի կողմից:)

Ասպե՛տ, ասպե՛տ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Հը՛, ո՞վ է կանչում:—
Ա՛խ, դո՞ւք էք, Դա՛յա:

ԴԱՑԱ

Կամաց գողնուեցայ
Ես նորա մօտից: Բայց նա մեզ էլի
Կարող է տեսնել, ինչտեղ կանգնած ենք:—
Մօտ եկէք, ահա՛ այս ծառի ետև:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց ի՞նչ կայ:—Ինչի՞ այդպէս ծածկում ես:—
Դա՛յա, ի՞նչ ունիս:

ԴԱՑԱ

Այո՛, գաղտնիք կայ,
Եւ դորա համար իսկ եկայ ձեզ մօտ.
Եւ մինչև անգամ երկու գաղտնիք կայ.
Մէկը ես գիտեմ, միւսը գիտէք դուք:
Արդեօք չէ՞ք ուզում իրար հետ փոխենք.
Դուք ձերն ասացէք, ես իմը կասեմ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Մեծ ուրախութեամբ,—միայն թէ գիտենամ,
Թէ ձեր կարծիքով գաղտնիքս ինչ է:
Բայց անշուշտ ձերից իմն էլ կիմացուի:—
Ուրեմն ասացէք:

ԴԱՑԱ

Ի՞նչ լաւ էք ասում:—
Ո՛չ, պարոն ասպե՛տ, առաջ դուք—յետոյ
Ես իմը կասեմ: Հաւաստի եղէք
Իմ գաղտնիքը ձեզ օգուտ չի բերի,
Մինչև որ առաջ ձերը չիմանամ:—

Դէհ, շուտ ասացէք. թէ չէ ինչ որ ես
կիմանամ ձեզնից իմ հարցմունքներով,
Ես չեմ համարի իբրև խոստովանք,
Եւ իմ գաղտնիքը կըմընայ իմ մէջ,
Այն ինչ ձերը ինձ յայտնի կըլինի։—
Խեղճ ասպետ։—Իրաւ, զարմանալի է,
Որ դուք, այր մարդիկ կարծումէք իբր
Կարող էք մեզնից, կանանցից ծածկել
Այդպիսի գաղտնիք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Որի մասին մենք
Ինքներս անգամ ոչինչ չըգիտենք։

ԴԱՑԱ

Շատ կարելի է։ Ուրեմն ի հարկէ
Իբրև բարեկամ ես ինքս պէտք է
Ծանօթացնեմ ձեզ այդ գաղտնիքի հետ։—
Ասացէք, արդեօք ի՞նչ էր պատճառը,
Որ այնպէս յանկարծ փախաք մեզանից,
Ցանկարծ թողնք մեզ և Նաթանի հետ
Զըվերադարձաք։—Մի՞թէ այդքան փոքր
Տըպաւորութիւն ունեցաւ ձեզ վրայ
Ըէխան, կամ դուցէ այնքան—այնքան շատ։—
Ասացէք տեսնեմ ցանցի մէջ ընկած
Խեղճուկ թռչունը թևերը ինչպէս
Է փրփռեցնում։—Ինչ երկարացնեմ,
Խոստովանեցէք ինձ իսկոյն, որ դուք
Սիրահարուած էք Ըէխայի վերայ,
Որ նորա համար խելագարուած էք.
Եւ այն ժամանակ մի բան կասեմ ձեզ....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Խելագարուած եմ։ Խոստովանումեմ,
Որ դուք այդ բանը լաւ էք հասկանում։

ԴԱՑԱ

Խոստովանեցէք սիրահարուիլը,

Խելագարուիլը էլ չեմ պահանջի։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Որովհետև այդ արդէն ինքն իրան
Հասկանալի է։—Տաճարականը
Հրէայ աղջկան սիրումէ....

ԴԱՑԱ

Այո՛,
Անմտութիւն է թվում ի հարկէ.—
Սակայն երբեմն լինումեն բաներ,
Որոնք աւելի միտք ունին, քան թէ
Որքան սպասումենք. և ես կարծումեմ,
Զըլսած բան չէ, որ մեզ փրկիչը
Առաջնորդումէ իւր մօտ այնպիսի
Ճանապարհներով, որոնցով գընալ
Շատ հեշտ չէ լինում և խելք մարդուն։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ինչ հանդիսաւոր ձևով էք խօսում։—
(Ինքն իրան.)
Եթէ փրկչի տեղ նախախնամութիւն
Ասենք, մի՞թէ սա իրաւունք չունի։—
(Դայային.)
Դա՛յա, ես այնպէս հետաքրքիր եմ
Ձեր խօսքերի վրայ, ինչպէս չեմ եղել
Ոչ մի ժամանակ։

ԴԱՑԱ

Ի՞նչ էք զարմանում.
Չէ՞ որ ապրումենք հրաշքների երկրում։

ՏԱՃԱՐԱԿԱՆ (Ինքն իրան.)

Հրաշքների երկիր։—Մի՞թէ կարող է
Ուրիշ կերպ լինել։ Բոլոր աշխարհը
Այստեղ է խառնվում։—
(Դայային.)
Սիրելի Դայա.
Համարեցէք, որ խոստովանեցայ,

Ինչ որ դուք ինձնից պահանջումէիք,
Որ ես սիրումեմ Ռէխային, որ ես
Չըգիտեմ ինչպէս ապրիմ առանց նրան
Որ ես....

ԴԱՑԱ

Ճշմարիտ: Ուրեմն երդուեցէք,
Ասպետ, որ նորան ձերը կըշինէք,
Որ դուք կաղատէք նորան թէ այստեղ
Եւ թէ հանդերձեալ կեանքում յաւիտեան:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց ի՞նչպէս, Դայա, ի՞նչպէս կարող եմ:—
Ի՞նչպէս երդուիմ այդ, երբ որ այդ բանը
Ինձնից չէ կախուած:

ԴԱՑԱ

Չեզնից է կախուած.
Ես մի խօսք կասեմ, և այդ կըլինի
Ձեր կամքից կախուած:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այնպէս, որ հայրը
Չի հակառակի:

ԴԱՑԱ

Հայրն ի՞նչ կարող է:
Հայրը: Հայրն ինքը ստիպուած կըլինի:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ստիպուած կըլինի՞, Դայա:—Դեռ ևս
Աւազակների ձեռը չէ ընկել:
Ո՛չ, նա ստիպուած չէ:

ԴԱՑԱ

Ապա ուրեմն
Պիտի կամենայ, սրտանց կամենայ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Պիտի կամենայ, և սրտանց, Դայա:
Բայց եթէ ասեմ ձեզ, որ ես ինքս

Արդէն փորձեցի նորա մօտ մի խօսք
Չգել այդ մասին:

ԴԱՑԱ

Ի՞նչ. և նա մերժեց:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Նորա պատասխանն ինձ վերաւորեց:—

ԴԱՑԱ

Այդ ի՞նչ է ասում: Միթէ յայտնեցիք
Նորան ցանկութիւն առնել Ռէխային,
Եւ նա լսելով վեր վեր չըթռաւ
Ուրախութենից, սառը հանդիպեց
Եւ առաջ բերեց դժուարութիւններ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Համարեա այդպէս:

ԴԱՑԱ

Ուրեմն էլ շատ
Չեմ մըտածի ես:—

(Լռութիւն.)

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց մըտածումէք:

ԴԱՑԱ

Նա բարի մարդ է:—Ես ինքս նորան
Շատ եմ պարտական:—Բայց որ չէ լսում:—
Աստծուն յայտնի է, ինչպէս չեմ ուզում
Ես նորան ստիպել:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Խնդրումեմ, Դայա,
Մի թողնէք ինձ այս անյայտութեան մէջ:
Բայց եթէ դուք էլ հաստատ չըգիտէք,
Թէ արդեօք, ինչ որ ուզումէք յայտնել,
Բարի է, թէ չար, գովելի է. թէ
Նախատելի է,— լաւ է լըռեցէք:
Ես կը մոռանամ, թէ գիտէք մի բան,
Որ պիտի ծածկէք:

ԴԱՑԱ

Ընդհակառակը

Այդ ինձ աւելի ստիպումէ խօսիլ։
Ուրեմն իմացէք. Բէխան հրէայ չէ,
Նա—քրիստոնեայ է։

ՏԱՃԱՐԱԿԱՆ (սառնութեամբ.)

Իրաւ։ Ուրեմն
Ցանկանումեմ ձեզ ես յաջողութիւն։
Թող մոր ցաւերը չըվախեցնեն ձեզ.
Ջերմեռանդութեամբ շարունակեցէք
Նոր բնակիչներով լցնել երկինքը,
Եթէ այդ բանին էլ ընդունակ չէք
Դուք երկրի վերայ։

ԴԱՑԱ

Ի՞նչ, ասպետ, միթէ
Արժանի է այդ ծաղրին իմ լուրը։
Մի՞թէ ուրախ չէք իբրև քրիստոնեայ,
Ուրախ չէք իբրև մի տաճարական,
Որ քրիստոնէայ է ձեր սիրած Բէխան։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Մանաւանդ երբ որ քրիստոնեայ է նա
Ձեր աշխատանքով։

ԴԱՑԱ

Այդպէ՞ս հասկացաք։
Թող այդպէս լինի։—Ուզումեմ տեսնել,
Թէ ո՞վ կարող է նորան դարձ բերել։
Երջանիկ էր նա, թէ վաղուց լինէր,
Ինչ որ այժմ դառնալ անպիտան է նա։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Կամ պարզ խօսեցէք, կամ թէ—հեռացէք։

ԴԱՑԱ

Քրիստոնեայ հօր մոր զաւակ է Բէխան
Եւ մկրտուած է....

ՏԱՃԱՐԱԿԱՆ (շուտ.)

Իսկ Նաթա՞նը

ԴԱՑԱ

Նա
Նորա հայրը չէ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Նորա հայրը չէ՞
Նաթանը, Դայա։—Բայց գիտէ՞ք արդեօք,
Թէ ինչ էք ասում։

ԴԱՑԱ

Մի ճշմարտութիւն,
Որի համար շատ դառն արտասունքներ
Թափել է աչքս։ Այո՛, Նաթանը
Նորա հայրը չէ....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ մեծացրել է
Իբրև իւր դուստր։ Քրիստոնեայ աղջկան
Դաստիարակել է իբրև հրէայ։

ԴԱՑԱ

Այո՞, այդպէս է։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բէխան չըգիտէ,
Թէ քրիստոնեայ է։—Մի՞թէ Նաթանից
Երբէք չէ լսել նա, որ ծնել է
Ինքը քրիստոնեայ և ոչ թէ հրէայ։

ԴԱՑԱ

Ո՛չ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բաւական չէ, որ երեխային
Խաբել է. այժմ չափահաս աղջկան
Եւս խաբում է։

ԴԱՑԱ

Ափսոս, այդպէս է։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Նաթանը—ի՞նչպէս—միթէ իմաստուն
Բարի Նաթանը թոյլէ տուել իրան
Այդպէս խարդախել բընութեան ձայնը։—
Բռնանալ սրտի զգացմունքի վերայ,
Որ բոլորովին այլ ընթացք կառնէր,
Թէ ազատ լինէր։—Դայա, իրաւ որ
Դուք ինձ յայտնեցիք այնպիսի մի բան,
Որ ունի շատ մեծ նշանակութիւն,
Որ և կունենայ իւր հետևանքը։—
Ես մոլորվումեմ— և դեռ չըգիտեմ,
Ինչ պէտք է անեմ։—Ինձ հարկաւոր է
Մըտածել։—Գնացէք։ Նա էլի այստեղ
Պիտի անցկենայ։ Գնացէք, չըտեսնէ։

ԴԱՑԱ

Ո՛հ, ես կըմեռնիմ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Հիմա Նորա հետ
Չեմ կարող խօսիլ։ Եթէ պատահիք
Նորան ասացէք, որ սուլթանի մօտ
Իրար կըտեսնենք։

ԴԱՑԱ

Բայց գիտէք, իրան
Ոչինչ մի ասէք։—Այդ կըլինի մեր
Վերջին հընարը։ Բէխայի մասին
Միամիտ եղէք։—Բայց երբ որ Նորան
Եւրոպա տանէք, խնդրումեմ, որ ինձ
Այստեղ չըթողնէք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Լաւ, լաւ, գընացէ՛ք։

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

վանքի կամարակապ անցքերը

ՎԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՑՐ և փոքրից յետոյ ՏԱՃԱՐԱԿԱՆ

ՎԱՆԱԿԱՆ

Այո՛, պատրիարքն իրաւունք ունի։
Ի հարկէ, որ ես չեմ կարողացել
Միշտ յաջողութեամբ կատարել, ինչ որ
Նա ինձ յանձնել է։—Բայց ինչի՞ նա էլ
Ինձ միշտ այդպիսի բաներ է յանձնում։—
Ոչ, ես չեմ կարող խորամանկ լինել,
Համոզել, քիթս ամեն տեղ կոխել,
Ամեն բանի մէջ իմ մատը խառնել։—
Մի՞թէ դրա համար թողի աշխարհը,
Որ ուրիշների համար աշխարհի
Գործերում խառնուիմ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

(Շտապով մօտենում է Նորան։)

Ահա՛, այստեղ էք,

Իմ բարի եղբայր: Վաղուց է, ինչ որ
Որոնում եմ ձեզ:

ՎԱՆԱԿԱՆ

Ի՞նձ, պարոն:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Մի՞թէ
Չէք ճանաչում ինձ:

ՎԱՆԱԿԱՆ

Ինչպէս չէ: Միայն
Ես չէի կարծում, որ ձեզ կեանքիս մէջ
Էլի կը տեսնեմ: Ցոյսս Աստուած էր:
Աստծուն յայտնի է, որքան ծանր էր ինձ
Առաջարկութիւնն, որ ես ձեզ անել
Պարտաւոր էի: Նա գիտէ, արդեօք
Ցանկանում էի, որ յօժարութեամբ
Լսէք ասածս. գիտէ, թէ որքան
Ուրախացայ ես իմ սրտի խորքում,
Երբ որ դուք առանց երկար մտածելու
Իսկոյն մերժեցիք բոլորը, ինչ որ
Անվայել է մի ազնիւ ասպետին:—
Բայց էլի ահա հիմա գալիս է.
Ուրեմն էլի նորոգեց ձեզ վրայ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Արդէն գիտէք դուք, ինչի եմ գալիս:
Հապա թէ ինքս գիտեմ այդ բանը:

ՎԱՆԱԿԱՆ

Դուք մրատածեցիք և համոզուեցաք,
Որ բոլորովին անիրաւ չէ մեր
Պարիարք հայրը, որ պատիւ և փող
Կարող է ստանալ նորա մտադրած
Ձեռնարկութենից. և որ թշնամին
Թշնամի է միշտ, թէև տասն անգամ
Պահապան հրեշտակ լինէր մեզ համար:
Ահա այս բանն է մրատածել, կշռել,

Եւ այժմ գալիս է, որ առաջարկէք
Ձեզ — Ո՛վ իմ Աստուած —

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Մխիթարուեցէք,
Ո՛վ իմ բարեպաշտ, սիրելի եղբայր,
Այդ բանի համար չեմ եկել այստեղ,
Այդ բանի համար չեմ ուզում խօսիլ
Պատրիարքի հետ: Այդ բանի մասին
Ես դեռ չեմ փոխել իմ համոզմունքը.
Եւ ոչընչի հետ ամբողջ աշխարհում
Երբէք չեմ փոխի այն լաւ կարծիքը,
Որին մի անգամ արժանի արեց
Ինձ ձեզ պէս ազնիւ, ձեզ պէս բարեպաշտ,
Ձեզ պէս բարի մարդ: — Ես միայն եկել եմ,
Որ խորհուրդ հարցնեմ ձեր պատրիարքին
Մի բանի մասին:

ՎԱՆԱԿԱՆ

Դուք պատրիարքի՞ն,
Ձեզ պէս ասպետը — մի քահանայի՞ն:
(Երկիւղով նայում է իւր շուրջ:)

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛ — բաւական քահանայական
Է նոյն իսկ գործը:

ՎԱՆԱԿԱՆ

Սակայն քահանան
Երբէք ասպետից խորհուրդ չի հարցնի,
Թէպէտ և լինէր գործն ասպետական:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Որովհետև նա իրաւունք ունի
Միշտ մեղանչելու. բայց մեզնից ոչ ոք
Շատ չի նախանձի նորան այդ բանում:—
Ի հարկէ, եթէ միայն ինձ համար
Ես աշխատէի, եթէ որ միայն
Ինքս ինձ հաշիւ տալու լինէի,

Այն ժամանակը ի՞նչ հարկաւոր էր
Ձեր պատրիարքը: Բայց և այնպիսի
կան հանգամանքներ, երբ յօժարութեամբ
վատ եմ վարվում ես ուրիշի կամքով,
քան լաւ իմ կամքով:—Այլ և տեսնում եմ,
Որ կրօնը նոյնպէս կուսակցութիւն է.
ես ով կարծում է թէ անկողմնապահ
Աչքով է նայում այդ բանի վերայ,
Բայց էլի, ինքն էլ չընկատելով,
Պաշտպանում է նա իւր կուսակցութեան
Իրաւունքները: Եւ որովհետև
Այդ միշտ այդպէս է, ուրեմն անշուշտ
Իրաւացի է:

ՎԱՆԱԿԱՆ

Այդ բանի մասին
Լաւ է կըլռեմ, որովհետև ես
Պարոնի միտքը լաւ հասկանում չեմ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց էլի—

(Ինքն իրան.)

Արդեօք ի՞նչ եմ ուզում ես,
Վըճիռ, թէ խորհուրդ:—Արդեօք ի՞նչ խորհուրդ
Պարզ, թէ գիտնական:—

(Վանականին.)

Ես շնորհակալ եմ
Ձեզանից, եղբայր, շնորհակալ եմ ձեր
Այդ մտքի համար:—Ի՞նչ հարկաւոր է
Ինձ պատրիարքը:—Իմ պատրիարքը
Դուք էք լինելու: Ես պատրիարքին
Ուզում եմ հարցնել իբր քրիստոնեային,
Ոչ քրիստոնեային իբր պատրիարքին.—
Ահա ասեմ ձեզ.....

ՎԱՆԱԿԱՆ

Ո՛չ, ո՛չ, մի՛ ասէք:
Ի՞նչ հարկաւոր է:—Սխալվում էք իմ մէջ:—

Ով շատ բան գիտէ, նա շատ հոգս ունի.
Իսկ ես մէկ հոգսով էի պարծենում:—
Ո՛հ, ի՞նչ լաւ եղաւ: Լսեցէք, տեսէք:
Ահա իմ բաղդից ինքը գալիս է:
Մընացէք այստեղ. նա ձեզ նկատեց:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ՊԱՏՐԻԱՐՔԸ գալիս է մի անցքով մի հոգևոր տիրոջ բոլոր փառահեղութեամբ, ԱՌԱՋԻՆՆԵՐԸ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Լաւ է սորանից հեռանայի ես,
Ինձ հարկաւոր չէ սորա խորհուրդը:—
Հաստլիկ, կարմրադէմ, ուրախ հոգևոր.
Ինչ շքեղութիւն:

ՎԱՆԱԿԱՆ

Դուք պէտք է տեսնէք
Երբ որ գընում է նա դէպի պալատ:
Այժմ հիւանդի մօտից է գալիս:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ինչպէս չամաչի այստեղ Սալադինն:

ՊԱՏՐԻԱՐՔԸ

(Առաջ գալով նշանով կանչում է իւր մօտ վանականին.)

Այստեղ եկ:—Սա այն տաճարականն է:
Ի՞նչ է կամենում:

ՎԱՆԱԿԱՆ

Չը գիտեմ:

ՊԱՏՐԻԱՐՔԸ

(Մօտենում է տաճարականին, այն ինչ վանականը և հետևորդները յետ են քաշվում:)

Ասպետ,
Ես շատ ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ:
Այո՛ դուք բաջ էք—և երիտասարդ—

Աստծոյ օգնութեամբ դորանից մի բան
կարող է դառնալ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Գերապատիւ տէր,
դժուար թէ աւելի, քան թէ ինչ որ կայ.
գուցէ և պակաս:

ՊԱՏՐԻԱՐՔԸ

Գոնէ իմ կողմից
ես ցանկանում եմ, որ շատ շատ ապրի
ձեզ պէս բարեպաշտ և քաջ ասպետը
Քրիստոնէութեան, Աստուծոյ գործի
փառքի ու պատուի և օգտի համար:
Եւ այդ անպատճառ այդպէս կը լինի,
եթէ քաջասիրտ երիտասարդը
ծերունու հասուն խրատ ու խորհրդին
ուզէ հետևիլ:—Ասացէք, ասպետ,
ինչով կարող եմ ես ձեզ ծառայել:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այն բանով, որին այժմ կարօտ եմ,
Այն է խորհրդով:

ՊԱՏՐԻԱՐՔ

Մեծ յօժարութեամբ —
եթէ խորհուրդս միայն կընդունէք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց ոչ կուրօրէն:

ՊԱՏՐԻԱՐՔ

Այդ ո՞վ է ասում:—
Անշուշտ ամեն մարդ պէտք է գործ ածէ
Աստծուց նորան պարգևած խելքը—
ինչտեղ որ պէտք է: Բայց արդեօք միշտ էլ
պէ՞տք է գործ ածել:—Ամենևին ոչ:
Ահա օրինակ, եթէ տէր Աստուած
իւր հրեշտակների մէկի միջոցով —
Այսինքն իւր սուրբ բանի ջերմեռանդ

Սպասաւորների մէկի բերանով
Արժանացնում է ցոյց տալ մի միջոց,
Մի բոլորովին այլ եղանակով
Աւելի ամուր կերպով հաստատել
Քրիստոնէութեան բարորութիւնը,
Սուրբ եկեղեցու պայծառութիւնը,
Այն ժամանակ ո՞վ կը համարձակի
Քննել իւր խելքով նորա հաճոյքը,
Ով որ ստեղծել է մարդկային խելքը—
Ով կը յանդգնի սընոտի պատուի
Ջնջին ու մանր կանոններովը
Ստուգել երկնային փառաւորութեան
Յաւիտենական անսուտ օրէնքը:—
Սակայն այդ մասին այսքան հերիք է:
Այժմ ասացէք, ի՞նչ բանի մասին
Ուզում էք լսել դուք մեր խորհուրդը:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Դիցուք, սրբազան, որ մի հրեայ մարդ
Ունի մի զաւակ— որ մի աղջիկ է—
Որին մեծ խնամքով կրթել է ամեն
Բարի բանի մէջ, որին սիրում է
Նա իւր հոգու չափ, որ և աղջիկը
Նոյնպէս սիրում է նորան հեզութեամբ.
Եւ հիմա յանկարծ մեզանից մէկին
Ծածուկ յայտնում են, որ այդ աղջիկը
Հրէայի դուստրը չէ, այլ որ այն աղջկան
Իբրև երեխայ գտել է, գընել
կամ գողացել է—ինչպէս ուզում էք.
Եւ այս էլ գիտեն, որ այն աղջիկը
Քրիստոնեայ է ծնել, և մկրտուած է,
Բայց հրէան նորան հրեայ է կրթել,
Եւ իբրև դուստր մինչև հիմա էլ
Հրէայ է թողնում,—Գերապատիւ Հայր,
Ասացէք, արդեօք ի՞նչ պէտք է անել
Այս հանդամանքում:

ՊԱՏՐԻԱՐՔ

Ես սարսափումեմ։—
Բայց պարզ խօսեցէք, արդեօք այդ դէպքը
Իրողութիւն է, թէ ենթադրութիւն,
Այսինքն արդեօք այդ բանը դուք էք
Ձեզնից հընարել, թէ պատահել է
Եւ դեռ հիմա էլ շարունակվումէ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես կարծումեմ, որ այդ մի և նոյն է,
Երբ որ ուզումեմ Ձեր Սրբազնութեան
Կարծիքն իմանալ։

ՊԱՏՐԻԱՐՔ

Ի՞նչ, մի և նոյն է։
Ահա, տեսնումէք, պարո՛ն, թէ ինչպէս
Մարդու մեծամիտ խելքը սխալվումէ
Հոգևոր բանում։— Ո՛չ, պարո՛ն։ Եթէ
Միայն կատակ է ձեր պատմած դէպքը,
Ապա արժանի չէ ուշադրութեան։
Ես ձեզ ցոյց կըտամ Թատրոնի բէմը,
Ինչտեղ այդպիսի pro et contraներ
Մեծ յաջողութեամբ կարող են խօսուիլ։—
Եթէ դուք ինձ հետ մի թատրոնական
Կատակ չէք անում, եթէ այդ դէպքը
Իրողութիւն է և պատահել է
Դուցէ մեր թեմում, մեր այս սիրելի
Երուսաղէմում—այն ժամանակը—

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այն ժամանակն ի՞նչ։

ՊԱՏՐԻԱՐՔ

Իսկոյն հրէային
Տալ այն պատիժը, որով այդպիսի
Սրբապղծութիւնն, այդպիսի յանցանք
Պատուհասվումէ պապի և կայսրի
Օրէնքներովը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այդպէ՞ս։

ՊԱՏՐԻԱՐՔ

Այո՛։
Ահա ինչ պատիժ նշանակուած է
Այդ օրէնքներով. խարոյկի վերայ
Այրել հրէային, որ քրիստոնեային
Կրօնափոխ կանէ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այդպէ՞ս։

ՊԱՏՐԻԱՐՔ

Մանաւանդ
Հրէային, որ մի քրիստոնեայ մանուկ
Բռնի խլել է սուրբ եկեղեցուց,
Որի հետ կապուած է մկրտութեամբ։
Մի՞թէ բռնութիւն չէ այն բոլորը
Ինչ որ անումեն փոքր մանուկներին։—
Բացի, ի հարկէ այն բանից, ինչ որ
Անումէ նոցա սուրբ եկեղեցին։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց եթէ պիտի կորչէր մանուկը,
Թէ որ այն հրէան չըխղճար նորան։

ՊԱՏՐԻԱՐՔ

Այդ ոչինչ, հրէան պիտի որ այրուի։—
Աւելի լաւ էր կորչէր մանուկը
Թշուառութեան մէջ, քան թէ այդ կերպով
Ազատուեցաւ նա յաւիտենական
Կորուստի համար։—Բացի դորանից
Հրէային պէտք չէր Աստուծոյ առաջն
Առնել ինքնակամ։ Առանց նորան էլ
Կըփրկէ Աստուած, եթէ կամենայ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ, պէտք է կարծել, հակառակ նորան—
Երջանիկ անել։

ՊԱՏՐԻԱՐՔ

Այդ ոչ ինչ: Հրէան
պիտի որ այրուի:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ափսոս: Մանաւանդ
Ինչպէս ասում են, հրէան աղջկան
Դաստիարակել է ոչ իւր, ոչ էլ
Մի այլ կրօնի մէջ, և Աստուծոյ մասին
Սովորեցրել է միմիայն այնքան,
Որքան բաւական է մարդու խելքին:

ՊԱՏՐԻԱՐՔ

Այդ ոչինչ: Հրէան պիտի որ այրուի.....
Այդ բանի համար միայն արժանի է
Նա երեք անգամ արդէն այրուելու:
Ի՞նչ: Առանց կրօնի մանուկ մեծացնել.
Եւ չըսովորեցնել նորան հաւատալ,
Որ մարդուս համար է ամենամեծ
Պարտաւորութիւն: Ես զարմանում եմ,
Ասպետ, ի՞նչպէս դուք....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Գերապատիւ տէր
Մնացածը, եթէ Աստուած կամենայ,
Խոստովանքի մէջ....

(Ուզում է գնալ:)

ՊԱՏՐԻԱՐՔ

Ի՞նչ: Մինչև անգամ
Հաշիւ չըտա՞լ ինձ: Ինձ այն հրէայի,
Այն չարագործի անունը չասե՞լ.—
Իսկոյն չբերե՞լ նորան իմ առաջ:—
Գիտեմ, ինչ կանեմ: Ես իսկոյն կերթամ
Սալադինի մօտ: Նա, դաշնադրութեամբ,
Որ հաստատել է ինքը իւր երդմամբ,
Պարտաւորուած է միշտ պաշտպանել մեզ,
Մեր իրաւունքը և մեր սուրբ կրօնը:

Գոհութիւն Աստծոյ, որ իսկականը
Այժմ մեզ մօտ է. մենք ունինք նորա
Ստորագրութիւնը և նորա կնիքը—
Բացի դորանից ես կը հասկացնեմ
Նորան, թէ ինչպէս վտանգաւոր է
Տէրութեան համար անհաւատութիւնն:
Հասարակական բոլոր կապերը
Լուծվում են, քանդվում, երբ էլ ոչընչին
Մարդ չէ հաւատում:—Հեռու, թող հեռու
Կորչի այդպիսի սրբապղծութիւնն:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ափսոս, Սրբազան, ժամանակ չունիմ
Աւելի երկար լսել պատուական
Ձեր այդ քարոզը: Ես այժմ կանչուած եմ
Սալադինի մօտ:

ՊԱՏՐԻԱՐՔ

Իրաւ—Ուրեմն:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եթէ հաճոյ է ձեզ, հայր սրբազան,
Կերթամ սուլթանին ես կը պատրաստեմ:

ՊԱՏՐԻԱՐՔ

Ո՛հ—գիտեմ, ասպետ, որ Սալադինը
Ողորմած է ձեզ:—Ես ձեզ խնդրում եմ
Իմ մասին նրա մօտ միայն բարին յիշէք:—
Ինձ այսպէս վարուիլ թելադրում է միայն
Ջերմեռանդութիւնը դէպի Աստուած,
Եւ թէ անում եմ չափից դուրս մի բան,
Նորա համար է: Ասպետ, այս բանը
Դուք լաւ կշռեցէք: Ինչ որ փոքր առաջ
Հրէայի մասին ասացիք, անշուշտ
Դա մի խնդիր էր—դուցէ....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Խնդիր էր:

(Դուրս է գնում:)

ՊԱՏՐԻԱՐՔ (ինքն իրան.)

Միայն պէտք է ես այն լաւ խորը քննեմ....
Եւ այդ կը յանձնեմ էլի մեր եղբայր
Բոնաֆիդէսին:—

(Վանականին.)

Այստեղ եկ, որդեակ:

(Նա խօսելով դուրս է գնում վանականի հետ։)

ԵՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ռեմեակ սալադինի պալատում:

Սարուկները բերում են շատ քսակներ և դարսում են միմեանց մօտ յատակի վերայ։

ՍԱԼԱԴԻՆ և փոքրից յետոյ ԶԻՏՏԱ

ՍԱԼԱԴԻՆ (ներս մտնելով.)

Իրաւ վերջ չունի:—Դեռ էլի շատ կայ:

ՍՏՐՈՒԿ

Դեռ կէսն էլի կայ:

ՍԱԼԱԴԻՆ

Ապա մեացածը

Տարէք Զիտտային:—Ո՞ւր է Ալ-Հաֆին:
Գայ փողը տանի:—Կամ թէ ուղարկեմ
Բոլորը հօրս:—Այստեղ բոլորը
Զեռիցս կերթայ:—Իրաւ վերջապէս
Մարդ կը քարանայ, և մեծ հնարք պէտք է
Այժմ ինձանից շատ բան դուրս քաշել:
Աղքատութիւնը թող իրան օգնէ,
Ինչպէս ուզում է գոնեա մինչև
Էլի կուղարկին Եգիպտոսից փող:—
Եթէ որ միայն գերեզմանի մօտ
Ողորմութիւն տալը շարունակուէր,
Միայն թէ քրիստոնեայ ուխտաւորները
Զը հեռանային դատարկ ձեռներով.

Միայն թէ—

ԶԻՏՏԱ

Այս ի՞նչ է: Ինչի՞ են բերել
Փողերը ինձ մօտ:

ՍԱԼԱԴԻՆ

Այդ փողից ստացիր,
Ինչ որ պարտ եմ քեզ. մնացածը պահիր:

ԶԻՏՏԱ

Մի՞թէ նաթանը դեռ ես բերել չէ
Տաճարականին:

ՍԱԼԱԴԻՆ

Նա որոնում է
Նորան ամեն տեղ:

ԶԻՏՏԱ

Տես, ինչ եմ գտել
Հին զարդերիս մէջ:

(Ցոյց տալով նորան մի փոքր պատկեր.)

ՍԱԼԱԴԻՆ

Եղբայրս—նա է—
Այո՛ այդ նա է—Նորա պատկերն է—
Ո՛վ քաջ պատանի, ափսոս, որ շատ շուտ
Կորցրրի ես քեզ: Ի՞նչեր չէի անի
Քեզ հետ միասին:—Զիտտա, պատկերը
Թող ինձ մօտ մընայ: Ես այժմ յիշում եմ.
Ասաղ եղբայրս տուեց այդ պատկերը
Մեր քոյր Լիլլային, որ մի առաւօտ
Չէր ուզում թողնել Նորան իւր գրկից:
Այդ հեռանալը վերջինը եղաւ—
Ա՛խ ես թոյլ տուի Նորան մենակ գնալ:—
Ա՛խ, Լիլլան մեռաւ վշտից և երբէք
Նա ինձ չներեց, որ ես Ասաղին
Թողի մենակ գնալ:—Նա էլ յետ չեկաւ:

ԶԻՏՏԱ

Խեղճ եղբայր:

ՍԱԼԱԴԻՆ

Բայց լաւ, հերիք է, Զիտտա—

Երբեմն ամենքս էլ կերթանք այստեղից:
Այլև—ո՞վ գիտէ: Մէյն մահը չէ,
Որ Ասադի պէս երիտասարդին
Մոլորեցնում է իւր նպատակից:
Նա ունի ուրիշ շատ թշնամիներ,
Եւ տկարի պէս հեղձն էլ շատ անգամ
Ցաղթահարվում է:—Բայց թող ինչ կուզէ
Պատահած լինի:—Ես այս պատկերը
Պէտք է ասպետի հետ համեմատեմ.
Ուզում եմ տեսնել, որքան եմ խաբուել:

ԶԻՏՏԱ

Ինքս էլ բերել եմ այդ նպատակով:
Բայց, եղբա՛յր, տուր ինձ: Պէտք է ասեմ քեզ,
Գնոջ աչքն աւելի լաւ է նկատում
Այդպիսի բաներ:

ՍԱԼԱԴԻՆ

(Դռնապաններից մէկին որ ներս է մտնում:)
Ի՞նչ, ո՞վ է եկել.—

Տաճարակա՞նը:—Թող գայ:

ԶԻՏՏԱ

Զեմ ուզում
Ես ձեզ խանգարել, հետաքրքրութեամբ
Շրփոթել նորան:
(Նա նստում է մի կողմը բազմոցի վերայ և ցած է թողնում երեսի քողը:)

ՍԱԼԱԴԻՆ

Շատ լաւ:
(Ինքն իրան.)
Բայց արդեօք
Ձայնը ի՞նչպէս է:—Ասադի ձայնը
Անշուշտ քընած է դեռ իմ հոգու մէջ:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՏԱՃԱՐԱԿԱՆ և ՍԱԼԱԴԻՆ

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Սուլթան, գերիդ եմ:

ՍԱԼԱԴԻՆ

Գերին ես: Ում որ
Կեանքը շնորհեցի, մի՞թէ չեմ շնորհի
Եւ ազատութիւն:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ինչ որ վայելէ,
Սուլթան, քեզ անել, ինձ միայն վայելէ
Լսել և ոչ թէ նախագուշակել:—
Անչափ շնորհակալ լինել քեզանից
Իմ կեանքի համար, այդ հակառակ է
Իմ կոչմանը և բընաւորութեան.
Կեանքս այսուհետև քեզ է պատկանում:

ՍԱԼԱԴԻՆ

Ապրիր, միայն թէ ինձ մի՛ վընասիր:
Թէև պատրաստ եմ թշնամիներիս
Մի զոյգ այդպիսի բաղուկ ընծայել,
Սակայն ծանր է ինձ նոցա այդպիսի
Մի սիրտ ընծայել:— Զեմ սխալուել քո մէջ,
Քա՛ջ երիտասարդ: Դու իմ Ասադն ես
Հոգւով և մարմնով: Ես մինչև անգամ
Կարող եմ հարցնել, արդեօք ո՞ւր էիր
Այսքան ժամանակ, ո՞ր քարայրի մէջ
Քընած մընացել: Այդ ո՞ր հրաշալի
Երկրում, ո՞ր բարի յաւերժահարսը
Այս ծաղիկն այսպէս թարմ պահպանեց:
Տես, կարող էի ես մինչև անգամ
Քո միտը ճգել, ինչ որ միասին
Մենք կատարել ենք: Ես կարող էի
Ներանալ քեզ վրայ, որ դու մի գաղտնիք,

Որ դու մի արկած ծածկել ես ինձնից։—
Ես կարողէի այդ անել, եթէ
Զըտեսնէի ինձ քո կողքին կանգնած։—
Բայց էլի այս քաղաքը երաշների մէջ
Գոնեա այնքան կայ ճշմարտութիւն,
Որ ինձ իմ կեանքի աշնան միջոցին
Կրկին կրծաղկի մի Ասադ եղբայր։—
Բաւական ես դու, ասպետ, այս բանով։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բոլորը, ինչ որ դու կամենում ես,—
Ինչ կուզէ լինի—իբրև ցանկութիւն
Արդէն առաջուց կար իմ սրտի մէջ։

ՍԱԼԱԴԻՆ

Ուրեմն իսկոյն թող փորձենք մենք այդ։—
Կըմնաս ինձ մօտ— իբրև քրիստոնեայ,
Իբրև մուսուլման, այդ մի և նոյն է.
Սպիտակ վերարկուով, կամ մեր հանդերձով,
Քո այդ զլխարկով, կամ թէ չալմայով,
Ինչպէս ուզում ես, բոլորը մէկ է։
Երբէք պահանջել չեմ ես, որ բոլոր
Ծառերի վերայ մի կեղև ածի։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այն ժամանակ դու դժուար լինէիր
Այն, ինչ որ այժմ ես — Աստուծոյ պարտէզը
Մշակող մի հերոս։

ՍԱԼԱԴԻՆ

Ուրեմն եթէ
Դրանից վատ կարծիք չունիս իմ մասին,
Ապա իրար հետ համաձայն ենք մենք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛։

ՍԱԼԱԴԻՆ

(Տալով նորան իւր ձեռը.)

Հաստատ խօսք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

(Բռնելով նորա ձեռը։)

Մի այր մարդու խօսք։—
Հետն էլ ընդունիր աւելի, քան թէ
Կարողէիր դու առնել ինձանից.
Ես բոլորովին քեզ եմ պատկանում։

ՍԱԼԱԴԻՆ

Այսօր անչափ շատ վաստակ ունեցայ։—
Նա հետդ չեկա՞ւ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այդ ո՞վ։

ՍԱԼԱԴԻՆ

Նաթանը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ (սառնութեամբ.)

Ո՛չ։ Մենակ եկայ։

ՍԱԼԱԴԻՆ

Ի՜նչ գեղեցիկ է
Քո արած գործը, և ինչ բաղդ, որ այդ
Նաթանի պէս մի մարդու համար էր։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այո՛, այդպէս է։

ՍԱԼԱԴԻՆ

Ինչի՞ այդպէս սառն։
Ո՛չ, երիտասարդ։ Երբ որ Տէր Աստուած
Մեր ձեռով մի լաւ գործ է կատարում,
Պէտք չէ անտարբեր լինել այդ բանին,
Եւ համեստութեամբ անգամ անտարբեր
Պէտք չէ երևիլ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Իրաւ աշխարհում
Ամեն բան ունի իրարից այնպէս
Զանազան կողմեր, որ մեզ շատ անգամ
Հասկանալի չէ, թէ ինչպէս նոքա

Մէկը միւսի հետ յարմարվում են:

ՍԱԼԱԴԻՆ

Միշտ լաւ կողմն եղեր և փառաւորիր
Դու քո Ստեղծողին, որին յայտնի է
Նոցա իրար հետ յարմարութիւնը:—
Բայց, երիտասարդ, եթէ դու այդպէս
Կը դժուարանաս, այն ժամանակը
Ինձ էլ զգուշանալ պէտք է քեզանից:
Ափսոս, որ ես էլ ունիմ շատ կողմեր,
Որոնք շատ անգամ կարծես իրար հետ
Չեն համաձայնում:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ինձ համար ցաւ է
Լսել այդ բանը—որովհետև ես,
Կասկածամիտ չեմ:—

ՍԱԼԱԴԻՆ

Ուրեմն ո՞ւմ վրայ է
Կասկածդ, ասա:—Նաթանի վերա՞յ:
Դու կասկած ունես Նաթանի վերա՞յ:—
Պարզ խօսիր, տուր ինձ քո մտերմութեան
Առաջին փորձը:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ոչ, Նաթանի դէմ
Ես ոչինչ չունիմ: Ես միայն ինձանից
Անբաւական եմ:

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ բանի համար:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Որ երազեցի, իբր կարող է
Հրէան դադարել հրէայ լինելուց,
Որ արթուն՝ տեսայ այդպիսի երազ:

ՍԱԼԱԴԻՆ

Պատմի՛ր բաց աչքով տեսած երազդ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Սուլթան, դու գիտես, որ այդ Նաթանը
Ունի մի դուստր: Դու գիտես, թէ ինչ
Արի նրա համար—Հպարտութիւնս
Թոյլ չէր տալիս ինձ շնորհակալութիւն
Ժողովել այնտեղ, ուր չէի ցանել,
Եւ այդ պատճառով երկար ժամանակ
Չէի կամենում կրկին միւս անգամ
Տեսնել աղջկան: Հայրը հեռու էր:
Նա եկաւ, ասաց, գտաւ ինձ, արեց
Շնորհակալութիւն: Նա ցանկանում է,
Որ ես հաւանիմ նորա աղջկան:
Նա ինձ տալիս է զանազան յոյսեր,
Պայծառ ապագայ է ինձ գուշակում:—
Ականջս կախած լսում եմ նորան,
Գնում եմ, տեսնում եմ, իրաւ գտնում եմ
Մի աղջիկ.... Սուլթան, ես ամաչում եմ:—

ՍԱԼԱԴԻՆ

Ամաչո՞ւմ ես—որ մի հրէայ աղջիկ
Տրպաւորութիւն արեց քեզ վերայ:
Անկարելի է:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես ամաչում եմ,
Որ հօր խօսքերի ազդեցութեան տակ
Միամիտ սիրտս չընդդիմացաւ այդ
Տրպաւորութեան:—Ցիմարս կրկին
Կրակի մէջ ընկայ:—Ուզեցի աղջկան,
Սակայն Նաթանը մերժեց խնդիրքս:

ՍԱԼԱԴԻՆ

Մերժե՞ց խնդիրքդ:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Իմաստուն հայրը
Թէև ի հարկէ վճռական կերպով
Չըմերժեց, սակայն առաջ պէտք է նա
Հարց ու փորձ անէ, պէտք է մտածէ:

Ի հարկէ, ես էլ նոյն բանը չարի՞։
Հարց ու փորձ չարի՞, չըմտածեցի՞,
Երբ որ կրակի մէջ աղաղակումէր
Նորա աղջիկը։—Աստուած վըկայ, շատ
Գեղեցիկ բան է այդպէս իմաստուն,
Այդպէս զգոյշ լինել։

ՍԱԼԱԴԻՆ

Ոչ, մի՛ այդպէս խիստ
Դատիր ծերունուն։ Երկար կարող չէ
Նա ընդդիմանալ։ Մի՞թէ կարծումես,
Թէ կրպահանջէ քեզանից, որ նախ
Հրէայ դառնաս դու։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ո՞վ գիտէ։

ՍԱԼԱԴԻՆ

Ո՞վ։—Նա,
Ով որ Նաթանին լաւ է ճանաչում։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Թերահաւատութիւնն, որի մէջ փոքրից
Մենք մեծացելենք, չէ կորցնում մեզ վրայ
Իւր զօրութիւնը և այն ժամանակ,
Երբ որ մենք արդէն ճանաչումենք այն։—
Դեռ ևս ազատ չէ նա բոլորովին,
Ով որ ծաղրումէ իւր շղթաները։

ՍԱԼԱԴԻՆ

Շատ ճշմարիտ է։ Սակայն Նաթանը....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ամենավատն է իմ կարծիքով այն
Թերահաւատութիւնն, երբ մարդ կարծումէ,
Թէ միւսներից իւրն է տանելի....

ՍԱԼԱԴԻՆ

Շատ կարելի է։ Միայն Նաթանը....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Որին միմիայն պիտի հաւատայ

Կոյր մարդկութիւնը, մինչև սովորի
Նա ճշմարտութեան պայծառ օրերի
Լոյսը տեսնելու. ուրին միմիայն....

ՍԱԼԱԴԻՆ

Լաւ, բայց Նաթանը։—Նաթանը չունի
Այդ թուլութիւնը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես էլ մի և նոյն
Կարծիքն ունէի.... Բայց ի՞նչ, եթէ որ
Այդ անօրինակ մարդը այնպիսի—
Մոլեռանդ հրէայ է, որ քրիստոնեայ
Երեխաներին ժողովում է և
Հրէայ մեծացնում...

ՍԱԼԱԴԻՆ

Մի՞թէ ասում են
Նաթանի մասին այդպիսի մի բան։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Նոյն իսկ աղջիկը, որով խաբելով
Քաշեց ինձ իւր մօտ և որի մասին
Ինձ յոյսեր տալով, կարծես յօժար էր
Արած լաւութիւնս փոխարինել,
Նորա դուստրը չէ—այլ մի որդեգրած
Քրիստոնեայ մանուկ

ՍԱԼԱԴԻՆ

Եւ էլի քեզ տալ
Չէ՞ կամենում նա։

ՏԱՃԱՐԱԿԱՆ (սաստկութեամբ.)

Կամենում է, թէ կամենում չէ նա,
Արդէն բռնուած է։ Այո՛, բռնուած է
Այն ազատամիտ դատարկաբանը,
Եւ ես կաշառում այդ փիլիսոփայ
Ոչխարի մորթով հրէայ գայլի վրայ
Արձակել շներ, որոնք արդէն լաւ
Կրգնեն նորան։

ՍԱԼԱԴԻՆ

Հանդարտ, քրիստոնեայ.

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչպէս թէ հանդարտ։—Երբ ամեն հրէայ
Ամեն մուսուլման իրաւունք ունի
Իւրը պաշտպանել, միայն քրիստոնեան
Պիտի զուրկ լինի այդ իրաւունքից։

ՍԱԼԱԴԻՆ

Հանդարտ, քրիստոնեայ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ (մեղմութեամբ.)

Այո՛, ես զգում եմ
Ցանկիմանութեան բոլոր ծանրութիւնն,—
Որ Սալադինը ամփոփում է այդ
Մէկ հատ բառի մէջ։—Ա՛խ, երանի թէ
Գիտենայի ես, ինչպէս կը վարուէր
Ասադը, եթէ իմ տեղը լինէր։

ՍԱԼԱԴԻՆ

Ոչ աւելի լաւ. անշուշտ քեզ պէս տաք։—
Բայց ասա՛, արդեօք քեզ ո՞վ սովորեցրեց
Ասադի նման այդպէս կաշառել
Ինձ մէկ հատ խօսքով։ Ի հարկէ, եթէ
Բոլորն այնպէս է, ինչպէս պատմում ես,
Ինքս էլ Նաթանին լաւ չեմ հասկանում։—
Բայց առ այժմ նա իմ բարեկամն է,
Եւ ես չեմ ուզում, իբար հետ կռուին
Բարեկամներս։ Ահա խորհուրդս.
Զգոյշ կաց և իսկոյն մի՛ ձգիր նորան
Քո ժողովուրդի մոլեռանդների
Հալածանքի տակ։ Զասես այն բանը,
Որով ձեր կղերը ինձ կը բողոքէ
Նորանից իւր վրէժն առնելու համար
Եղի՛ր քրիստոնեայ—բայց ոչ հակառակ
Մի մուսուլմանի, կամ մի հրէայի։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Փոքր մընաց, որ արդէն ուշ լինէր։

Շնորհակալութիւն մեր պատրիարքի
Արիւնածարաւ բընաւորութեան։
Ես սարսափում եմ մի գործիք լինել
Այն մարդու ձեռին։

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ։ Դու դեռ ինձ մօտ
Ջեկած՝ գընացիր պատրիարքի մո՞տ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ինձ յափշտակեց կիրքը, ինձ շփոթեց
Տարակուսանքը։—Ների՛ր ինձ, սուլթան։—
Ես վախենում եմ, որ այսուհետև
Էլ չես գտնելու իմ մէջ նմանութիւն
Քո Ասադի հետ.

ՍԱԼԱԴԻՆ

Այդ երկիւղի մէջ
Ես գտնում եմ։ Կարծում եմ, գիտեմ
Ի՞նչ սխալմունքներից ծրլում ծագում է
Առաքինութիւնն։ Այսուհետև էլ
Հեռեւի՛ր նորան և սխալմունքներդ
Շատ չեն վընասի քեզ ինձ մօտ։—Հիմա
Գընա՛, որոնի՛ր Նաթանին, ինչպէս
Մինչև հիմա նա որոնում էր քեզ.
Եւ բե՛ր նորան այստեղ։ Պէտք է երկուսիդ
Համաձայնեցնեմ։—Եթէ դու սրտանց
Աշխատում ես այն աղջկայ համար,
Հանգիստ կաց, քոնն է։ Նաթանին նոյնպէս
Մենք կը հասկացնենք, որ յանդգնել է
Նա մի քրիստոնեայ մանուկ մեծացնել
Առանց խոզի մսի։—Դէ՛հ, հիմա գընա՛։

(Տաճարականը դուրս է գնում և Զիտտան թողնում է բազմոցը։)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՍԱԼԱԴԻՆ և ԶԻՏՏԱ

ԶԻՏՏԱ

Զարմանալի է։

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ կասես, Զիտտա,
Միթէ դեղեցիկ երիտասարդ չէ՞ր
Ասադ եղբայրս։

ԶԻՏՏԱ

Թէ նա այդպէս էր,
Եւ այս պատկերը նորանն է և ոչ
Տաճարականի։— Ի՞նչպէս մոռացար
Հարցնել, ով էին նորա ծնողները

ՍԱԼԱԴԻՆ

Մանաւանդ թէ ով էր նորա մայրը։
Արդեօք եղել է երբէք նա այստեղ։—
Այնպէս չէ՞։

ԶԻՏՏԱ

Լաւն ես։

ՍԱԼԱԴԻՆ

Շատ կարելի է։—
Ասադ եղբայրս շատ սիրելի էր
Բրիստոնեայ կանանց և ինքն էլ այնքան
Սիրում էր նոցա, որ մինչև անգամ
Խօսք կար երբեմն։—Սակայն հերիք է։
Ինձ անախորժ է խօսել այդ մասին։—
Նա նորից իմն է—իմը կը լինի
Իւր սխալանքներով, իւր փոփուխ տրի
Հաճոյքներով։— Նաթանը պէտք է,
Աղջկան ասայ նորան։ Դու ի՞նչ ես կարծում։

ԶԻՏՏԱ

Տա՛յ։ Պէտք է թողնէ։

ՍԱԼԱԴԻՆ

Անպատճառ։ Եթէ
Նաթանը իրաւ նորա հայրը չէ,
Էլ ի՞նչ իրաւունք ունի նորա վրայ։
Ով որ պահպանեց աղջկայ կեանքը
Ունի աւելի իրաւունք նրա վրայ,
Քան թէ նա, ով որ կեանք տուեց նորան։

ԶԻՏՏԱ

Բայց ի՞նչ ես կարծում, Սալադին, արդեօք
Լաւ չէ՞, որ իսկոյն իւր ապօրինի
Տիրոջ ձեռքից խլես աղջկան
Եւ բերես այստեղ։

ՍԱԼԱԴԻՆ

Մի՞թէ անպատճառ
Հարկաւոր է այդ։

ԶԻՏՏԱ

Ա՛ռ այժմ դեռ ոչ։—
Հետաքրքրութիւնն է ինձ միայն ստիպում,
Որ տալիս եմ քեզ ես այս խորհուրդը։
Կան մարդիկ, որոնց մասին ես սաստիկ
Հետաքրքիր եմ շուտով իմանալ,
Թէ արդեօք նոքա ի՞նչպիսի աղջիկ
Կարող են սիրել։

ՍԱԼԱԴԻՆ

Ուրեմն ուղարկիր,
Բերել տուր նորան։

ԶԻՏՏԱ

Կարող եմ, եղբայր։

ՍԱԼԱԴԻՆ

Միայն խընայիր Նաթանին, Զիտտա։
Թող նա չըկարծէ, թէ մենք ուզում ենք

Աղջկան բռնի հեռացնել նրանից։

ԶԻՏՏԱ

Միամիտ եղեր։

ՍԱԼԱԴԻՆ

Ես էլ այժմ ինքս
կերթամ իմանալ, ո՞ւր է Ալ-Հաֆին։

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

Ղաթանի տան քակը, արմատևիների կողմը, ինչպէս առաջին գործողութեան առաջին երեւոյթում։

Ապրանքների մի մասը հանած դարսած է այնտեղ և խօսքը նորա մասին է։

ՆԱԹԱՆ և ԴԱՑԱ

ԴԱՑԱ

Շատ գեղեցիկ է, հիանալի է,
Բոլորն էլ լաւ է։—Միայն դուք զիտէք
Այդպէս ընծայել։ Այս արծաթաթել
Կերպասը արդեօք ի՞նչտեղ են շինում։
Որքա՞ն արժէ սա։—Ա՛յ, իմ կարծիքով
Պըսակի հալաւ։ Ոչ մի թագուհի
Պահանջելու չէ սորանից լաւը։

ՆԱԹԱՆ

Պըսակի հալա՞ւ, ինչի՞ անպատճառ
Պըսակի հալաւ։

ԴԱՑԱ

Ի հարկէ որ դուք
Չէիք մըտածում այդ մասին, երբ որ
Առնում էիք այդ։ Այս կտորը, Նաթան,
Իսկ և իսկ հարսի հալաւացու է։
Կարծես գիտութեամբ գործել է տուած.

Տեղը լոյս սպիտակ—պատկերացնում է
Անմեղութիւնը և նորա վերայ
Ամեն կողմ ձգուող ոսկէ շերտերը—
Հարստութիւնը։ Հիանալի է,
Նաթան, մի տեսէք։

ՆԱԹԱՆ

Ինչի՞ ես խօսում։
Ո՞վ է այդ հարսը, որի հալաւը
Այդպէս զարդարում ես իմաստութեամբ
Այդ նշաններով։ Մի՞թէ հարս ես դու։

ԴԱՑԱ

Ե՞ս, ես։

ՆԱԹԱՆ

Ապա ո՞վ

ԴԱՑԱ

Ե՞ս։—Տէր Աստուա՞ծ, ես։

ՆԱԹԱՆ

Ապա ուրիշ ո՞վ։ Ո՞ր հարսնացուի
Պսակի հալաւի մասին ես խօսում։
Այս բոլորը միայն քեզ է պատկանում
Եւ ոչ ուրիշին։

ԴԱՑԱ

Ի՞նձ է պատկանում.
Բոլորը ի՞մն է։ Ապա Ռէխայլի՞ն։

ՆԱԹԱՆ

Ռէխայի համար բերած բաները
Տեղաւորել եմ ուրիշ հակի մէջ։
Դէհ, Դայա, վեր առ տար քո գանձերը։

ԴԱՑԱ

Ո՛վ փորձիչ։—Ո՛չ, ո՛չ։ Թէև տայիք ինձ
Բոլոր աշխարհի հարստութիւնը,
Ես ձեռը չեմ տայ, մինչև որ իսկոյն
Չերդուէք, ինձ, Նաթան, որ օգտուելու էք

Դուք այդ դիպուածից, որի նմանը
Էլ երկրորդ անգամ չէ տայ երկինքը:

ՆԱԹԱՆ

Օգտուիլ, ի՞նչ բանից: Այդ ի՞նչ դիպուած է:

ԴԱՑԱ

Ո՛հ, մի՛ անտեղեակ ձևանաք այդպէս:—
Ի՞նչ երկարացնեմ: Տաճարականը
Րէխայլին սիրումէ, տուէք նորան:
Այդպէս կը քաւէք, Նաթան, ձեր մեղքը,
Որ էլ աւելի չեմ կարող ծածկել:
Այդպէս աղջկան կը վերադարձնէք
Քրիստոնեաներին, և նա կը լինի
Ինչ որ էր և է. եւ այն ժամանակ
Դուք ձեր բարութեամբ, որի համար մենք
Պարտական ենք ձեզ, ժողովելու չէք ձեր գլխին
Միայն վառած ածուխներ

ՆԱԹԱՆ

Էլի հին երգը—
Նոր եղանակով, բայց վախենումեմ
Ներդաշնակութիւնը չը խանգարուի:

ԴԱՑԱ

Այդ ի՞նչպէս, Նաթան:

ՆԱԹԱՆ

Ինձ շատ յարմար է
Տաճարականը, միմիայն նորան
Ամբողջ աշխարհում յօժար էի տալ
Ես իմ Ռէխայլին.... Միայն համբերիր:

ԴԱՑԱ

Էլի համբերիր:—Ահա այդ էլ ձեր
Մշտական երգն է:

ՆԱԹԱՆ

Միայն քանի մի օր
Էլի համբերիր.... Տես, ո՞վ է գալիս:

Վանական եղբայր: Հարցրու, իմացիր,
Ի՞նչ է ուզում նա:

ԴԱՑԱ

Ի՞նչ պիտի ուզէ:
(Դայան մօտենում է վանականին:)

ՆԱԹԱՆ

Դեռ չը խնդրած, տուր:
(Ինքն իրան.)
Ինչպէս մօտենամ
Տաճարականին, առանց ասելու
Նորան պատճառն իմ հետաքրքրութեան:
Բայց եթէ ասեմ և իմ կասկածը
Անհիմն դուրս գայ, այն ժամանակը
Ի զուր կը խառնեմ հօրն այս գործի մէջ
(Դայային:)
Հը՞, ինչ է ասում:

ԴԱՑԱ

Նա ձեզ է ուզում:

ՆԱԹԱՆ

Թող ներս գայ. իսկ դու առ այժմ գընա:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՆԱԹԱՆ և ՎԱՆԱԿԱՆ

ՆԱԹԱՆ (Ինքն իրան.)

Ի՞նչպէս ուզումեմ ես դարձեալ մընալ
Ռէխայլի հայրը:—Բայց մի՞թէ էլի
Չեմ կարող հայր մնալ, թէև չը կրեմ
Էլ այդ անունը: Բայց նա, նա էլի
Ինձ հայր կանուանէ, երբ որ կիմանայ,
Թէ ի՞նչպէս սրտով ուզումեմ լինել
Ես նորա հայրը:
(Վանականին:)
Բարեպաշտ եղբայր,

Ինչո՞վ կարող եմ ես ձեզ ծառայել։

ՎԱՆԱԿԱՆ

Շատ փոքր բանով։—Անչափ ուրախ եմ
Ես, պարոն Նաթան, որ ձեզ տեսնում եմ
Առողջ անվնաս։

ՆԱԹԱՆ

Ուրեմն, եղբայր,
Ճանաչում էք ինձ։

ՎԱՆԱԿԱՆ

Ո՞վ չէ ճանաչում։
Արդէն շատերի ձեռին դրոշմել էք
Դուք ձեր անունը։ Դա արդէն վաղուց
Ծանօթ է և ինձ։

ՆԱԹԱՆ (քսակը հանելով.)

Ուրեմն եկէք
Նորոգենք մեր հին ծանօթութիւնը։

ՎԱՆԱԿԱՆ

Շատ շնորհակալ եմ։ Ոչինչ չեմ առնի։
Ինչի՞ զողանամ աղքատներից։—
Իրաւունք տուէք, որ ես զարթեցնեմ
Ձեր յիշողութեան մէջ իմ անունը։
Ես էլ կարող եմ պարծենալ, որ ձեր
Ձեռին դրել եմ այնպիսի մի բան,
Որ դուք ընդունել չարհամարհեցիք։

ՆԱԹԱՆ

Ներեցէք, եղբայր—ես ամաչում եմ։
Ասացէք ի՞նչ է—և եօթնապատիկ
Առէք ինձանից տուածի փոխարէն։

ՎԱՆԱԿԱՆ

Առաջ լսեցէք, թէ ինչպէս ինքս
Այսօր յիշեցի իմ ձեզ պահ տուած
Աւանդի մասին։

ՆԱԹԱՆ

Աւա՜նդ, ձեզանի՞ց

Եւ ինձ պահ տուած։

ՎԱՆԱԿԱՆ

Շատ ժամանակ չէ
Ճգնում էի ես Կարանտանայում
Երիքոնի մօտ։ Ցանկարծ աւազակ
Արաբներն եկան, քանդեցին խուցս ու
Աղօթարանս և ինձ իրանց հետ
Քշեցին տարան։ Բաղդաւորաբար
Ազատուեցայ ես և եկայ այստեղ
Պատրիարքի մօտ, որ խնդրեմ նրանից
Ինձ մի ուրիշ տեղ, ուր կարողանամ
Առանձնանալով ծառայել Աստծուն
Մինչև երկաւոր կեանքիս վախճանը։

ՆԱԹԱՆ

Մի՛ տանջէք, եղբայր։ Կարծես թէ վառուած
Ածուխների վրայ լինեմ ես կանգնած.
Մի՛ երկարացնէք. Աւանդը, որ դուք
Ինձ պահ էք տուել։

ՎԱՆԱԿԱՆ

Խոսքն կասեմ ձեզ։—
Պատրիարքը ինձ խոստացաւ մի խուց
Թափոր լերան վրայ հէնց որ մէկն այնտեղ
Դատարկ կը լինի. և առ ժամանակ
Պահեց ինձ վանքում իբրև սպասաւոր.
Եւ ահա այսպէս մընացի այստեղ,
Եւ օր չի անցնի, որ հաղար անգամ
Չը քաշէ սիրտս ինձ դէպի Թափոր։
Պատրիարքը ինձ յանձնում է այստեղ
Այնպիսի գործեր, որոնք ինձ համար
Շատ զզուելի են։ Ահա՛ օրինակ....

ՆԱԹԱՆ

Եղբայր, վերջացրէք, ապաչում եմ ձեզ։

ՎԱՆԱԿԱՆ

Այդ տեղ եմ գալիս։—Մէկ ով որ այսօր
Ծածուկ հասցրել է Նորա ականջին,
Իբր ապրում է այստեղ մի հրէայ,

Որ իւր տան մէջ մի քրիստոնեայ մանուկ
Մեծացնում է նա իբրև իւր դուստր:

ՆԱԹԱՆ

Ի՞նչպէս:

ՎԱՆԱԿԱՆ

Լսեցէք:—Եւ մի այդպիսի
Սրբապղծութեան վերայ զայրացած,
Սրբապղծութիւն, որ նա իսկական
Մեղք է համարում Սուրբ Հոգու առաջ—
Դա է այն մեղքը, որ մեղքերի մէջ
Ամենամեծն է, թէև, փառք Աստծոյ,
Ինքներս անգամ ուղիղ չը գիտենք,
Թէ ինչ բանի մէջ է այդտեղ մեղքը—
Հրամայեց, որ ես, ինչտեղ և լինի,
Իսկոյն գտնեմ այն հրէայի հետքը:
Այդտեղ զարթեցաւ յանկարծ իմ խիղճը
Եւ ես յիշեցի, որ ինքս երբեմն
Առիթ եմ տուել այդ աններելի
Մեղքը գործելու:—Ասացէք, արդեօք
Տասնեւութ տարի սորանից առաջ
Չը բերե՞ց ձեզ մի ձիաւոր ղենուոր
Մի փոքրիկ աղջիկ քանի մի շաբաթուան.

ՆԱԹԱՆ

Բայց ի՞նչ.—ի հարկէ—իրաւ այդպէս է:—

ՎԱՆԱԿԱՆ

Ուրեմն մի լաւ նայեցէք դուք ինձ:—
Այդ ձիաւորը ես ինքս եմ

ՆԱԹԱՆ

Դո՞ւք էք:

ՎԱՆԱԿԱՆ

Եւ այն պարոնը, որ երեխային
Ուղարկեց ձեզ մօտ—որքան յիշում եմ—
Պարոն Ֆիլնէկն էր—Պարոն Վոլֆ Ֆիլնէկ:

ՆԱԹԱՆ

Այո՛, այդպէս է:

ՎԱՆԱԿԱՆ

Մայրն այդ միջոցին
Նոր էր վախճանել, և հայրը պէտք է—
Եթէ չեմ սխալվում—շտապով գնար Գացցա,
Ուր երեխային չէր կարող տանել,
Եւ այդ պատճառով ձեզ մօտ ուղարկեց:
Կարծեմ Դարանում հանդիպեցայ ձեզ:

ՆԱԹԱՆ

Այո՛, Դարանում:

ՎԱՆԱԿԱՆ

Զարմանալի չէ,
Որ ինձ սխալեցնէ յիշողութիւնս:
Ես քաջ պարոններ շատ եմ ունեցել,
Բայց դորան շատ կարճ ժամանակ միայն
Ծառայեցի ես: Շուտով նա ընկաւ
Ճակատամարտում Ասկալոնի մօտ.
Բայց պէտք է ասել, շատ լաւ պարոն էր:

ՆԱԹԱՆ

Այո՛, շատ լաւն էր: Եւ նորան անչափ
Շատ եմ պարտական: Եւ քանի անգամ
Ազատել է նա ինձ սրի տակից:

ՎԱՆԱԿԱՆ

Շատ գեղեցիկ է: Ուրեմն ի հարկէ
Աւելի սիրով կը խօսնամէիք
Դուք նորա աղջկան:

ՆԱԹԱՆ

Ի՞նչ ասել կուզէ:

ՎԱՆԱԿԱՆ

Բայց այժմ ո՞ւր է նա: Անշուշտ մեռել չէ:—
Ո՛չ, ո՛չ, լաւ է որ մեռած չը լինի:—

Եթէ չը գիտէ ոչ ոք այդ բանը,
Միամիտ եղէք։

ՆԱԹԱՆ

Ճշմարիտ։

ՎԱՆԱԿԱՆ

Նաթան,
Հաւատացէք ինձ։ Տեսէք, ես ահա
Այսպէս եմ կարծում։ Երբ մտադիր եմ
Ես մի այնպիսի բարի գործ գործել,
Որին շատ մօտիկ սահմանակից է
Մի սատիկ վատը, լաւ է չեմ գործի
Այն բարի գործը. որովհետև մենք
Վատը բաւական լաւ ճանաչում ենք,
Բայց բարին — դժուար։— Շատ բնական է,
Որ եթէ դուք այն քրիստոնեայ աղջկան
Պէտք է տայիք լաւ դաստիարակութիւն,
Ապա անպատճառ պիտի կրթէիք
Նորան իբրև ձեր հարազատ աղջկան։—
Այո՛, արել էք դուք այդ մեծ սիրով,
Հաւատարմութեամբ, և հիմա այսպէս
Պիտի վարձատրուիք։ Ես չեմ հասկանում։
Ինչ ասել կուզէ, խոհեմութիւն էր
Ձեր կողմից եթէ քրիստոնեայ աղջկան
Իբրև քրիստոնեայ մեծացնել տայիք
Ուրիշի ձեռով։ Բայց այն ժամանակ—
Հասկանալի է—էլ չէիք սիրի
Դուք երեխային ձեր բարեկամի։
Երեխաներին քնքոյշ հասակում
Հարկաւոր է սէր, թէև վայրենի
Գազանի մի սէր, աւելի քան թէ
Քրիստոնէութիւն։ Այդ բանի համար
Դեռ ժամանակ կայ։ Եթէ աղջկան
Մեծացրել էք դուք ձեր աչքի տակը
Առողջ, երկիւղած, ապա Աստուծոյ
Աչքի առաջ նա նոյնն է, ինչ որ էր։

Եւ մի՞թէ բոլոր քրիստոնէութիւնն
Հրէութեան վերայ չէ հիմնած։ Ցաւախ
Նեղացել եմ ես և շատ արտասուել,
Որ մոռանում են քրիստոնեաները,
Որ մեր Փրկիչը ինքն էլ հրէայ էր։

ՆԱԹԱՆ

Դուք, բարի եղբայր, պիտի բարեխօս
Լինիք ինձ համար, երբ իմ դէմ կանգնին
Այդ բանի համար ատելութիւնն ու
Կեղծաւորութիւնն։— Այդ բանը պէտք է
Միայն դուք իմանաք, բայց պէտք է ձեզ հետ
Գերեզման տանիք։ Դեռ ևս երբէք
Մնապարծութենից ստիպուած պատմել չեմ
Ես այդ ուրիշին։ Միայն ձեզ եմ պատմում,
Միայն ձեր երկիւղած պարզմտութեանը,
Որովհետև միայն դա կը հասկանայ,
Թէ ինչ մեծ գործեր կարող է անել
Մի մարդ, որ Աստծուն է ապաւինել։

ՎԱՆԱԿԱՆ

Նաթան, շարժուած էք և լաց էք լինում։

ՆԱԹԱՆ

Դուք ինձ Դարանում տուիք այն երեխան.
Բայց դուք ի հարկէ գուցէ չը գիտէք,
Որ քանի մի օր նորանից առաջ
Քրիստոնեաները սպանեցին Գաթում
Բոլոր հրէաներին առանց խնայելու
Ոչ կանանց, ոչ էլ երեխաներին։
Անշուշտ չը գիտէք որև իմ կինը
Եւ ծաղկափթիթ եօթը որդիքս
Նոցա մէջ էին. նոցա իմ եղբօր
Տանն էի պահել, ուր և այրեցին
Բոլորին մէկտեղ

ՎԱՆԱԿԱՆ

Ո՛վ արդար Աստուած։

ՆԱԹԱՆ

Երբ որ դուք եկաք, ամբողջ երեք օր
Ընկած էի ես մոխրում ու փոշում
Աստուծոյ առաջ և լալիս էի։—
Ի՞նչ, լալիս էի։ Ես Աստծոյ վերայ
Գանգատումէի, բարկանումէի,
Կատաղումէի, ինձ և աշխարհը
Անիծումէի։ Երդուեցի լինել
Անհաշտ թշնամի քրիստոնէութեան։

ՎԱՆԱԿԱՆ

Ա՛խ, հաւատումեմ։

ՆԱԹԱՆ

Բայց կամաց կամաց
Խելքս գլուխս եկաւ և հեզիկ ձայնով
Ասաց ինձ այսպէս. «Էլի կայ Աստուած,
Եւ այդ բոլորը նորա վճիռն էր։
Ապա ուրեմն ինչ արա, ինչ որ
Վաղուց է արդէն որ հասկացել ես.
Ինչ որ աւելի դժուար չէ անել
Անկասկած, քան թէ խելքով ըմբռնել։
Վեր կաց։»—Վեր կացայ և բարձր ձայնով
Կանչեցի Աստծուն. ես կամենումեմ,
Երբ որ քո կամքն է, որ ես կամենամ։—
Եւ այդ միջոցին դուք ձիուց իջաք
Եւ ինձ յանձնեցիք փոքր երեխային,
Որ ծածկել էիք ձեր վերարկուով։
Թէ ինչ ասացիք ինձ այն ժամանակ,
Կամ ինչ ասացի ես ձեզ, միտս չէ։
Այսքան միայն գիտեմ, որ երեխային
Առայ ձեր ձեռից, տարայ իմ տունը,
Համբուրումէի, և ծունկ խոնարհած
Լալիս, հեկեկում։ Աստուած իմ, Աստուած,
Աղաղակեցի, ահա իմ կորցրած
Եօթը զաւակից այս մէկին կրկին
Վերադարձրիր ինձ։

ՎԱՆԱԿԱՆ

Նաթա՛ն, ո՛վ Նաթան,
Դուք քրիստոնեայ էք։—Վրկայ է Աստուած
Դուք քրիստոնեայ էք, ձեզանից լաւը
Երբէք չէ եղել։

ՆԱԹԱՆ

Այո՛, երկուսս էլ
Մենք երջանիկ ենք։ Որովհետև այն,
Ինչով ձեզ համար ես քրիստոնեայ եմ,
Նոյնով ինձ համար դուք մի հրէայ էք։—
Բայց հերիք շարժենք իրար սրտերը։
Այժմ պէտք է գործ։ Եւ թէպէտ արդէն
Ես եօթնապատիկ սիրով կապուած եմ
Այս մէկ հատ և ինձ օտար աղջկայ հետ,
Թէպէտ ինձ համար մահ է այն միտքը,
Որ ես նորա մէջ կրկին պիտի կորցնեմ
Եօթը որդիքս,—բայց եթէ նորան
Ինձանից կրկին յետ կը պահանջէ
Նախախնամութիւնն—ես կը հնազանդիմ։

ՎԱՆԱԿԱՆ

Այժմ կատարեալ քրիստոնեայ էք դուք։—
Իսկոյն ես ինքս ուզումէի ձեզ
Այդ խորհուրդը տալ. բայց արդէն տուել է
Ձեզ այդ խորհուրդը ձեր բարի հոգին։

ՆԱԹԱՆ

Միայն ի հարկէ երբէք թոյլ չեմ տայ,
Որ նորան ինձանից խլէ ով և լինի։

ՎԱՆԱԿԱՆ

Ի հարկէ որ ոչ։

ՆԱԹԱՆ

Ով որ ինձանից
Մեծ իրաւունքներ չունի նորա վրայ.
Գոնեա աւելի հին իրաւունքներ։—

ՎԱՆԱԿԱՆ

Այո՛, անպատճառ։

ՆԱԹԱՆ

Իրաւունք բնութեան,
Արենակցութեան։

ՎԱՆԱԿԱՆ

Ես համաձայն եմ
Ձեր կարծիքի հետ։

ՆԱԹԱՆ

Ուրեմն շուտով
Ասացէք, եղբայր, ո՞վ է այն մարդը
Որ Նորան եղբայր է, կամ հօրեղբայր,
Կամ որ և իցէ կերպով ազգական,
Եւ ես յետ կըտամ Նորան Ըէխային,
Որ այնպէս ստեղծուած և մեծացրած է,
Որ կարող է զարդ լինել ամեն տան
Եւ ամեն կրօնի։—Ես յոյս ունիմ, որ
Ինձնից աւելի լաւ էք ճանաչում
Դուք ձեր պարոնի ազգականներին։

ՎԱՆԱԿԱՆ

Ո՛չ, բարի Նաթան, դժուար թէ ձեզնից
Լաւ ճանաչեմ ես։—Ինչպէս ասացի,
Նորան կարճ միջոց ծառայեցի ես։

ՆԱԹԱՆ

Գոնէ չը գիտէք մայրն ինչ ազգից էր,
Արդեօք Շտաուֆէն չէր։

ՎԱՆԱԿԱՆ

Շատ կարելի է։

Այո՛, կարծեմ որ։

ՆԱԹԱՆ

Կօնրադ Ֆօն Շտաուֆէն

Չէ՞ր կոչվում արդեօք Նորա եղբայրը —
Մի տաճարական։

ՎԱՆԱԿԱՆ

Թէ չեմ սխալվում։
Սպասեցէք, ահա՛, լաւ միտս եկաւ։
Ես իմ հանգուցեալ պարոնից ունիմ
Մի փոքրիկ գրքոյկ, որ Նորա ծոցից
Հանեցի, երբ որ Ասկալօնի մօտ
Թաղում էինք նրան։

ՆԱԹԱՆ

Ցետոյ։

ՎԱՆԱԿԱՆ

Այդ գիրքը
Բովանդակում է իւր մէջ աղօթքներ,
Եւ մենք ասում ենք դորան ժամագիրք։—
Մտածեցի, որ քրիստոնեայ մարդուն
Հարկաւոր գիրք է։—Ինձ ի հարկէ, ոչ—
Որովհետև ես կարդալ չը գիտեմ։—

ՆԱԹԱՆ

Այդ ոչինչ, ոչինչ։ Շարունակեցէք։

ՎԱՆԱԿԱՆ

Ահա այդ գրքի սկզբի և վերջին
Երեսների վրայ, ինչպէս ասացին,
Պարոնս ինքը իւր ձեռով գրել է
Թէ իւր, թէ կընոջ ազգականներին։

ՆԱԹԱՆ

Ո՛հ, ինչ ուրախ եմ։ Գնացէք, շուտ բերէք
Ինձ մօտ այն գիրքը։—Շուտ բերէք գիրքը
Ես Նորա քաշը ոսկի կը տամ ձեզ։
Եւ հազար անգամ շնորհակալութիւն
Կանեմ։ Շտապեցէք։

ՎԱՆԱԿԱՆ

Մեծ ուրախութեամբ։
Բայց պէտք է ասեմ, որ իմ պարոնը
Արաբերէն է գրել Նորա մէջ։

(Դուրս է գնում։)

ՆԱԹԱՆ

Այդ մի և նոյն է, միայն թէ բերէք։
Աստուած իմ, եթէ էլի հնար լինէր
Պահել աղջկան և մի այդպիսի
Փեսայ գընէի ես ինձ նորանով։—
Դժուար։—Թող լինի, ինչ որ ուզում է
Բայց պատրիարքին ո՞վ է ասել այդ։
Այդ բանը պէտք է որ ես իմանամ։
Ո՛վ գիտէ, գուցէ և Դայան լինի։

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՐԵԽՈՅԹ

ԴԱՑԱ և ՆԱԹԱՆ

ԴԱՑԱ (շտապով և չփոթուած.)

Նաթա՛ն։

ՆԱԹԱՆ

Հը՛, ի՞նչ է։

ԴԱՑԱ

Խե՛ղճ Ըէխան, ինչպէս
Սաստիկ վախեցաւ։ Մարդ է ուղարկել....

ՆԱԹԱՆ

Ո՞վ, պատրիարքը։

ԴԱՑԱ

Սուլթանի քոյրը.....

ՆԱԹԱՆ

Ոչ պատրիարքը՞....

ԴԱՑԱ

Ո՛չ, Իշխանուհի
Զիտտան — լսո՞ւմ է.ք — ինքն Իշխանուհին։
Մարդ է ուղարկել և կամենում է
Ըէխային տանել։

ՆԱԹԱՆ

Ո՞վ է կամենում
Ըէխային տանել։ — Զիտտան, ասում ես—
Հա եթէ միայն նա է կանչողը,
Ոչ պատրիարքը....

ԴԱՑԱ

Ո՞րտեղից յանկարծ

Ցիշեցիք նորան։

ՆԱԹԱՆ

Ուրեմն, Դա՛յա,
Ոչինչ չե՞ս լսել դու նորա մասին,
Կամ ինքդ ոչինչ չե՞ս ասել նորան։

ԴԱՑԱ

Ես նորա՞ն։

ՆԱԹԱՆ

Ո՞ւր են եկած մարդիկը։

ԴԱՑԱ

Այնտեղ են, դուրսը։

ՆԱԹԱՆ

Զգուշութեան համար
Ես ինքս պէտք է խօսիմ նոցա հետ.—
Ով գիտէ, գուցէ և պատրիարքը
Խառն է այս բանում։

(Դուրս է գնում։)

ԴԱՑԱ

Ես վախենում եմ
Մի ուրիշ բանից։ Պատրաստ եմ գրաղ գալ,
Որ մուսուլմանի համար էլ վատ չէ
Այսպիսի հարուստ հրէայի միակ
Համարած դուստրը։—Տաճարականը
Մի ակնթարթում կը կորցնէ նորան։
Կը կորցնէ նորան, եթէ որ չանեմ
Ես մի երկրորդ քայլ, եթէ չը յայտնեմ
Իրան Ըէխային, թէ ինքը ով է։—
Համարձակ, Դա՛յա։ Այդ բանի համար
Ես կը գործածեմ առաջին րոպէն,
Երբ ես նորա հետ մենակ կը լինիմ.—
Գուցէ հիմա իսկ, երբ հետը կերթամ։
Այսպէս մի նշան տալ ճանապարհին,
Կարծում եմ, ոչինչ վընաս չի բերի։
Ապա համարձակ։ Ա՛յժմ, կամ երբէ՞ք։

(Դուրս է գնում Նաթանի ետևից։)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

այն սենեակը Սալադինի պալատում, ուր բերուեցան փողով պարկերը եւ դեռ դարսած են այնտեղ:

ՍԱԼԱԴԻՆ, *փոքրից յետոյ* ՄԱՄԵԼԻԿՆԵՐ

ՍԱԼԱԴԻՆ (*ներս մտնելով.*)

Ահա, դեռ ես այստեղ է փողը
Եւ մարդ չը գիտէ, ուր է դէրվիշը,
Որ անշուշտ մի տեղ շախէ խաղում այժմ,
Եւ միտքը այնպէս տուել է խաղին,
Որ մոռացել է անգամ իւր գլուխը—
Ի՞նչ զարմանք, որ ինձ մոռացած լինի:—
Լաւ, կը համբերեմ. ի՞նչ ունիս, ասա:

ՄԱՄԵԼԻԿ

Ցանկալի լուր եմ բերել քեզ, սուլթան,
Եւ ուրախութիւն: Ահա անվնաս
Հասաւ կարաւանը Գահիրէից
Եւ իւր հետ բերեց հարուստ նեղոսի
Եօթը տարեկան բոլոր հարկերը:

ՍԱԼԱԴԻՆ

Ապրիս, Իբրահիմ: Իրաւ ցանկալի
Համբաւաբեր ես:—Վերջապէս եկաւ:
Շատ շնորհակալ եմ. լաւ համբաւ բերիր:

ՄԱՄԵԼԻԿ

(*Սպասելով, ինքն իրան.*)

Ցետոյ, վերջացրու:

ՍԱԼԱԴԻՆ

Եւ ի՞նչ ես սպասում:
Կարող ես գընալ:

ՄԱՄԵԼԻԿ

Եւ ուրիշ ոչի՞նչ,
Սուլթան, ցանկալի համբաւաբերին:

ՍԱԼԱԴԻՆ

Եւ ի՞նչ:

ՄԱՄԵԼԻԿ

Ինձ պէս լաւ համբաւաբերին
Ոչ էլ հացի փող:—Այսպէս ուրեմն
Ես առաջինն եմ, որի վրայ ահա
Սուլթան Սալադինը սովորում է
Դատարկ բառերով միայն վարձատրել:—
Այդ էլ պարծանք է—ես առաջինն եմ,
Որի հետ այսպէս կծծի է վարվում:

ՍԱԼԱԴԻՆ

Ուրեմն առ քեզ ահա մի քըսակ:

ՄԱՄԵԼԻԿ

Ոչ, էլ չեմ ուզում, թէև բոլորը
Ինձ ընծայէիր:

ՍԱԼԱԴԻՆ

Կամակոր—ահա,
Ե՛կ, առ երկուսը:—Իրաւ, գընում է:
Ինձնից վեհանձն է:—Անշուշտ, պէտք է որ
Աւելի ծանր լինի նորա համար
Զընդունել, քան թէ ինձ համար տալը:—
Իբրահիմ:—Ինչի՞ յանկարծ իմ կեանքի
Վերջին օրերին ես բոլորովին
Ուզեցի փոխուիլ:—Մի՞թէ չէ ուզում

Սալադինն իբրև Սալադին մեռնիլ։—
Ուրեմն պէտք է, որ և չէր ապրել
Իբրև Սալադին։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄԷԼԻԿ

Սուլթան....

ՍԱԼԱԴԻՆ

Եթէ դու
Գալիս ես յայտնել.....

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄԷԼԻԿ

Որ Եգիպտոսից
Կարաւանն արդէն հասաւ վերջապէս։

ՍԱԼԱԴԻՆ

Ես արդէն գիտեմ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄԷԼԻԿ

Ուրեմն ուշացայ։

ՍԱԼԱԴԻՆ

Ո՛չ, չես ուշացել։—Ա՛ռ քեզ քո բարի
Ցանկութեան համար մէկ կամ երկու քսակ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄԷԼԻԿ

Այդ երեք կանէ։

ՍԱԼԱԴԻՆ

Լա՛ւ, ա՛ռ, եթէ դու
Կարող ես համրել։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄԷԼԻԿ

Երրորդն էլ կը գայ—
Եթէ միայն նա գալ կարողանայ։

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչպէս։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄԷԼԻԿ

Նա անշուշտ վիզը կոտրել է,
Որովհետև երբ հաստատ իմացանք,
Որ կարաւանը արդէն հասել է,
Իսկոյն երեքս ձիաների վրայ
Թռանք այս կողմը։ Առաջինը շուտ
Վայր ընկաւ ձիուց և այդպէս ինքս

Ես առաջ անցայ և առաջ մնայի
Մինչև քաղաքը, բայց այդտեղ արդէն
Իբրահիմը իմ առաջը անցաւ,
Ինձնից աւելի ծանօթ լինելով
Քաղաքի բոլոր փողոցների հետ։

ՍԱԼԱԴԻՆ

Բայց նա, բարեկամ, որ ձիուց ընկաւ։—
Գնա, շտապիր նորան դիմաւորելու։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄԷԼԻԿ

Ահա գընում եմ։—Եւ թէ դեռ ևս
Կենդանի է նա, այս քըսակների
Կէսը կը ստանայ։

(Դուրս է գնում։)

ՍԱԼԱԴԻՆ

Տես, թէ ինչ բարի,
Ազնիւ տղայ է։—Ապա ո՞վ ունի
Մամելուքներիս պէս կարիճ մարդիկ։
Միթէ իրաւունք չունի՞մ ես կարծել,
Որ իմ օրինակն է նոցա կրթել։—
Ուրեմն հեռու ինձնից այն միտքը,
Վերջին օրերում մի այլ օրինակ
Տալ նոցա։

ԵՐՐՈՐԴ ՄԱՄԷԼԻԿ

Սուլթան։

ՍԱԼԱԴԻՆ

Արդեօք նա՞ ես դու,
Որ ձիուց ընկաւ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՄԷԼԻԿ

Ո՛չ, ես գալիս եմ
Ցայտնել, որ իսկոյն ձիուց իջնում է
Էմիր Մանզորը, որ կարաւանը
Առաջնորդում էր։

ՍԱԼԱԴԻՆ

Շուտ գնա և ինձ մօտ
Հրաւիրիր նորան։—Ահա՛ նա ինքը։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ԷՄԻՐ ՄԱՆԶՕՐ և ՍԱԼԱԴԻՆ

ՍԱԼԱԴԻՆ

Բարով, իմ Էմիր։—Ի՞նչ համբաւ ունիս։
Մանզօր, շատ երկար սպասեցինք մենք քեզ։

ՄԱՆԶՕՐ

Այս նամակից դու կը տեղեկանաս,
Ինչ խռովութիւններ նախ պիտի զսպէր
Աբուլկասէմը Թէբայում, մինչև
Համարձակեցանք ճանապարհ ընկնիլ։
Ապա շտապեցի, որքան հընար էր։

ՍԱԼԱԴԻՆ

Հաւատում եմ քեզ։—Սիրելի Մանզօր.
Առ իսկոյն, իսկոյն.... Բայց միայն պէտք է
Սիրով անես այդ.... իսկոյն առ քեզ հետ
Պահապան մի գունդ։ Դու պէտք է իսկոյն
Ճանապարհ ընկնիս և այդ փողերի
Մեծ մասը հօրս տանես Լիբանան։

ՄԱՆԶՕՐ

Պատրաստ եմ սիրով և յօժարութեամբ։

ՍԱԼԱԴԻՆ

Բայց տես, որ գունդը փոքր չըլինի։
Լիբանանի մօտ էլ առաջուայ պէս
Ապահով չէ այժմ։ Արդեօք լսե՞լ ես։
Տաճարականներն էլի սկսել են
Առաջ գալ։ Զգո՛յշ կաց։—Եկ գընանք, ցոյց տուր
Ինձ կարաւանը։ Ես կամենում եմ
Ինքս ամեն բան կարգադրել։—Յետոյ
Այնտեղից կերթամ Զիտտա քրոջս մօտ։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

Արմաւենիները Ղաթանի տան առաջ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

(Մենակ մտնէ գալիս յետ ու առաջ։)

Ո՛չ, տուն չեմ մտնի։—Անշուշտ վերջապէս
Ինքը դուրս կը գայ։—Երբեմն այնպէս շուտ
Եւ յօժարութեամբ նկատում էին
Ինձ այստեղ։—Գուցէ բանն այնտեղ հասնի,
Որ նա արգելէ ինձ այսպէս շուտ շուտ
Գալ իւր տան առաջ։—Հը՛մ։—Ես չափից դուրս
Նեղսիրտ եմ և չար։—Ինչի՞ նորա վրայ
Այսքան բարկացայ։—Չէ՞ որ նա ասաց,
Որ դեռ չէ մերժում նա իմ խնդիրքը։
Եւ Սալադինը յանձն առաւ նորան
Համաձայնեցնել։—Ի՞նչ. միթէ իրաւ
Աւելի յամառ քրիստոնեայ եմ ես,
Քան թէ նա հրէայ։—Ո՞վ, արդեօք իրան
Լաւ է ճանաչում։ Թէ չէ ինչի՞ ես
Զուզեցի ներել նորա այն փոքր
Ցափշտակութիւնն, որ նա արել է
Քրիստոնեաներից։—Ի հարկէ չէ փոքր
Ցափշտակութիւն այդ արարածը։—
Բայց ո՞ւմ արարած։—Անշուշտ ոչ սորկի,
Որ անտաշ քարը ձգել է կեանքի
Դատարկ, ամայի ծովափի վերայ
Եւ ինքը գնացել, այլ այն վարպետի,
Որ այն դէն ձգած քարին կերպարանք
Տուեց աստուածային։—Թող քրիստոնեայի
Ծնունդ լինի Ռէխան, բայց էլի նորա
Ճշմարիտ հայրը է և յաւիտեան
Կը լինի հրէան։—Եթէ Ռէխային
Չամարեմ միայն քրիստոնեայ աղջիկ

Առանց այն բոլոր բաների, ինչ որ
Սորա պէս հրէան կարողէր տալ նրան.
Սիրտ, իմ սիրտ, ասա՛, ի՞նչ կայ նորա մէջ,
Որ քեզ գրրաւէր: Ոչինչ. եւ նոյն իսկ
Նորա ժըպիտը, թէև դա լինէր
Գեղեցիկ, քնքոյշ ցնցուցին նորա
Մկանունքների, թէև այն, ինչ որ
Ժպտեցնում է նրան, լինէր անարժան
Այն չքնաղութեան, որ զարդարում է
Նորա ժպիտը.—ո՛չ, մինչև անգամ
Նոյն իսկ ժպիտը չէր կարող գրաւել:
Ո՛չ, ևս աւելի գեղեցիկ ժպիտ
Շատ եմ տեսել ես ծաղրող, կատակող
Եւ շողոքորթող հեշտասէր կանանց
Շրթունքների վերայ:—Մի՞թէ այդ բանը
Կախարդել է ինձ: Մի՞թէ զգացել եմ
Երբէք ցանկութիւն յաւիտեան ապրել
Այդ ժպիտի պայծառ ճառագայթներում:
Ո՛չ, ես չեմ յիշում: Եւ հիմա ինքս
Անբաւական եմ այն մարդուց, որ այդ
Մեծ արժանիքը տուել է նորան:—
Բայց ի՞նչպէս, ինչի՞:—Բայց ինչ, եթէ որ
Իրաւ արժանի եմ ես այն ծաղրին,
Որով արձակեց ինձ Սալադինը:
Արդէն շատ վատ է, որ Սալադինը
Այդպիսի կարծիք ունի իմ մասին:
Ո՛հ, ինչպէս ստոր և արհամարհելի
Պիտի երևիմ ես նորա աչքին:—
Եւ այդ բոլորը մի աղջկայ համար:—
Կո՛ւրդ, կո՛ւրդ, այդ լաւ չէ: Ցեռ դաւիր: Գուցէ
Շատախօս Դայան ասաց ինձ մի բան,
Որ անհնար է ապացուցանել:—
Ահա՛, վերջապէս դուրս եկաւ տանից:
Այն ո՞վ է հետը: Ո՞ւմ հետ է խօսում:
Վա՛հ, Վանականն է:—Անկասկած արդէն
Բոլորը գիտէ, և պատրիարքին

Արդէն մատնուած է:—Ո՛վ խելագարս,
Այս ի՞նչ արի ես:—Ո՛հ, ինչպէս այրեց
Այս կրքի մի հատ կայծը ուղեղս:—
Պէտք է շուտ վճռեմ իմ անելիքը:
Այստեղ մի կողմը կը սպասեմ նորան,
Մինչև վանականը կը հեռանայ:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

ՆԱԹԱՆ և ՎԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՑՐ

ՆԱԹԱՆ (մօտենալով նորան.)

Ո՛վ բարի եղբայր, էլի մի անգամ
Ցայտնում եմ ձեզ իմ շնորհակալութիւնն:

ՎԱՆԱԿԱՆ

Ես էլ նմանապէս:

ՆԱԹԱՆ

Դուք էլ նմանապէս:
Ի՞նչ բանի համար: Որ յամառութեամբ
Ստիպում էի ձեզ ընդունել, ինչ որ
Հարկաւոր չէ ձեզ:—Այո՛, եթէ որ
Համաձայնէիք. եթէ բռնութեամբ
Չը կամենայիք աւելի հարուստ
Լինել, քան թէ ես:

ՎԱՆԱԿԱՆ

Առանց դորան էլ
Չէ որ այն գիրքը ինձ չէ պատկանում,
Այլ այն աղջկան, և է իւր հօրից
Մընացած բոլոր ժառանգութիւնը:—
Բայց ոչինչ: Այժմ ձեզ պէս հայր ունի:—
Միայն Աստուած տայ երբէք չափսոսաք,
Ինչ որ արել էք դուք նորա համար:

ՆԱԹԱՆ

Ի՞նչպէս կարող եմ ափսոսալ: Երբէք:
Միամիտ եղէք:

ՎԱՆԱԿԱՆ

Բայց պատրիարքը,

Տաճարականը....

ՆԱԹԱՆ

Երբէք չեն կարող
Նոքա ինձ անել այնքան չարու թիւն,
Որ ես ափսոսամ իմ արածները։—
Ուրեմն հաստատ գիտէք, որ իմ դէմ
Այդպէս գրգռումէ պատրիարքին
Մի տաճարական։

ՎԱՆԱԿԱՆ

Ուրիշը—դժուար։
Ինձանից առաջ հետը խօսումէր
Մի տաճարական, և իմ լսածը
Համարեա այդ էր։

ՆԱԹԱՆ

Բայց այժմ այստեղ
Երուսաղէմում միմիայն մէկ հատ
Տաճարական կայ։ Դորան ես ինքս
Լաւ եմ ճանաչում. իմ բարեկամն է,
Աղնիւ և անկեղծ մի երիտասարդ։

ՎԱՆԱԿԱՆ

Իսկ ձեր ասածն է։—Բայց ինչ որ մարդն է
Եւ ինչ որ պիտի լինի աշխարհում,
Այդ երկու բանը միշտ չեն յարմարվում։

ՆԱԹԱՆ

Ափսոս, այդպէս է։—Ուրեմն թող ով
Եւ կուզէ լինի, անէ իւր ուզած
Զարը կամ բարին. ձեր գիրքը ձեռիս,
Եղբայր, ոչ ոքից էլ չեմ վախենում
Եւ այն հետս առած՝ ահա ես իսկոյն
Ուղղակի գընումեմ սուլթանի մօտ։

ՎԱՆԱԿԱՆ

Աստուած տայ ձեզ բաղդ և յաջողութիւն։
Հիմա գնաք բարով։

ՆԱԹԱՆ

Դուք մինչև անգամ

Զը տեսաք աղջկան։—Բայց շուտ շուտ եկէք,
Եթէ միայն այսօր ոչինչ չիմանայ
Ձեր պատրիարքը։—Բայց ի՞նչ։ Այսօր իսկ
Ասացէք Նորան, եթէ ուզումէք։

ՎԱՆԱԿԱՆ

Ո՛չ, ես չեմ ասի։ Մընացէք բարով։
(Դուրս է գնում։)

ՆԱԹԱՆ

Զը մոռանաք մեզ, եղբայր։—Աստուած իմ,
Ինչի՞ ես իսկոյն չեմ կարող այստեղ
Բաց երկնքի տակ ծնկներիս վերայ
Ընկնել քո առաջ։ Ի՞նչպէս ինքն իրան
Ահա լուծվումէ այժմ կնճիռը,
Որ այնքան յաճախ վախեցնումէր ինձ։—
Տէր Աստուած, ի՞նչպէս թեթև է սիրտս,
Որ այսուհետև ստիպուած չեմ ոչինչ
Ծածկել աշխարհից, որ այսուհետև
Նոյնպէս համարձակ կարող եմ քայլել
Ես մարդկանց առաջ, ինչպէս քո առաջ։—
Դու միայն, ով Աստուած, երբէք չես դատում
Քո ստեղծած մարդուն իւր գործերովը,
Որոնք շատ հաղիւ նորա գործերն են։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՆԱԹԱՆ և ՏԱՃԱՐԱԿԱՆ, որ մօտենում է Նորան մի կողմից։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Սպասեցէք, Նաթան, առէք ինձ ձեզ հետ։

ՆԱԹԱՆ

Ո՞վ է կանչում ինձ։—Այդ դո՞ւք էք, ասպետ։
Ո՞ւր էիք գնացել, որ սուլթանի մօտ
Զը տեսայ ես ձեզ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Գնալիս մենք իրար
Զը հանդիպեցանք։ Մի ցաւիք։

ՆԱԹԱՆ

Ես ոչ,
Բայց Սալադինը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Դուք նորա մօտից
Նոր էլք գնացել....

ՆԱԹԱՆ

Ուրեմն տեսաք
Նորան, խօսեցաք։ Շատ լաւ է։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց նա
Երկուսիս մէկտեղ ուզում է տեսնել։

ՆԱԹԱՆ

Այդ աւելի լաւ։ Ուրեմն գընանք։
Առանց դորան էլ ես գընում էի
Այժմ նորա մօտ։—

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Կարողեմ հարցնել,
Նաթան, այն ովէր, որ իսկոյն ահա
Հեռացաւ ձեզնից։

ՆԱԹԱՆ

Անկասկած նորան
Զէք ճանաչում դուք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Արդեօք բարեսիրտ
Վանականը չէր, որին իբր լսես
Ծառայեցնում է մեր պատրիարքը։

ՆԱԹԱՆ

Շատ կարելի է։ Նա ծառայում է
Պատրիարքի մօտ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Վատ միտք չէ սկսել
Իւր հար գործերը նրա պէս պարզամիտ
Մի մարդու ձեռով։

ՆԱԹԱՆ

Ցիմար պարզամիտ—
Բայց ոչ բարեպաշտ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ոչ մի պատրիարք
Երբէք հաւատում չէ բարեպաշտին։

ՆԱԹԱՆ

Այս եղբօր համար երաշխաւոր եմ։
Ոչ մի անվայել գործում չի օգնի
Նա պատրիարքին։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Գոնեա այդպէս
Երևում է նա։—Բայց նա ձեզ ոչինչ
Զասաց իմ մասին։

ՆԱԹԱՆ

Ձեր մասի՞ն։ Ոչինչ։
Դժուար թէ գիտէ նա ձեր անունը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Դժուար թէ գիտէ։

ՆԱԹԱՆ

Այո՛, ի հարկէ,
Մի տաճարական ասպետի մասին
Խօսում էր ինձ հետ....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ ի՞նչ էր ասում։

ՆԱԹԱՆ

Բայց չեմ կարծում, որ ձեզ էր ակնարկում։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ով գիտէ, Նաթան։ Ասացէք տեսնեմ։

ՆԱԹԱՆ

Իբր թէ ինձ վրայ մի տաճարական
Գանգատ է արել պատրիարքի մօտ....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Գանգատ է արել ձեզ վրայ։—Այդ սուտ է—
Լսեցէք, Նաթան։—Ես այն մարդը չեմ,
Որ կարողանամ արածս ուրանալ։
Ինչ որ արել եմ, կասեմ արել եմ։
Բայց երբէք բոլոր իմ արածները
Ես չեմ պաշտպանի իբրև բարի գործ։
Ինչի՞ ամաչեմ ես իմ սխալմունքից,
Երբ որ պատրաստ եմ սխալմունքս ուղղել։
Եւ ես լաւ գիտեմ, թէ ո՛ւր կարող է
Հասցընել մարդուն այդ ցանկութիւնը.—
Լսեցէք, Նաթան։—Իրաւ ես եմ այն
Տաճարականը, որ վանականի
Ասելով, մատնեց ձեզ պատրիարքին։—
Դուք գիտէք, ինչից վրդովեցայ ես,
Ինչից արիւնս եռաց իմ բոլոր
Երակների մէջ։ Ո՛վ խելագարս—
Ես եկայ ձեզ մօտ, որ հոգւով մարմնով
Ընկնեմ ձեր գիրկը։ Բայց ի՞նչպէս արդեօք
Ընդունեցիք ինձ.—ցուրտ—և անտարբեր.
Բայց լաւ էր, թէ ցուրտ, քան թէ անտարբեր։
Դուք ուզում էիք ազատուիլ ինձնից,
Անտեղի հարցեր առաջարկելով։
Այժմ էլ չեմ կարող յիշել այդ բանը
Եւ չվրդովիլ։—Լսեցէք, Նաթան։—
Եւ երբ ես այդպէս վրդոված էի,
Ցանկարծ գողի պէս մօտեցաւ Դայան
Եւ ուղեղիս մէջ ձգեց մի գաղտնիք,
Որ, իմ կարծիքով, բացատրում էր ձեր
Անհասկանալի վարմունքը ինձ հետ։

ՆԱԹԱՆ

Այդ ի՞նչպէս։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Թողէք, խօսքս վերջացնեմ։—
Ես կարծում էի, թէ դուք չէք ուզում

Կրկին յետ դարձնել մի քրիստոնեային,
Ինչ որ մի անգամ արդէն խլել էիք
Քրիստոնեաներից։ Եւ այդպէս ահա
Վճռեցի առանց այլևայլութեան,
Լաւ համարեցի դանակի ծայրը
Ուղղել ձեր կուրծքին։

ՆԱԹԱՆ

Լաւ համարեցիք։—
Ի՞նչն է այդտեղ լաւ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Լսեցէք, Նաթան։—
Անշուշտ լաւ չարի։ Դուք մեղաւոր չէք։
Այն անմիտ Դայան, ինքն էլ չը գիտէ,
Թէ ինչ է խօսում։ Նա ձեզ ատում է—
Եւ այդ պատճառով ուզում է ձգել
Ձեզ փորձանքի մէջ։—Շատ կարելի է։—
Ես թեթևամիտ երիտասարդ եմ,
Ցափշտակվում եմ ծայրահեղութեամբ.
Կամ շատ ջերմեռանդ եմ, կամ անտարբեր։
Ի հարկէ այդ էլ կարող է լինել։
Ներեցէք, Նաթան։

ՆԱԹԱՆ

Ի՞հարկէ, երբ որ
Այդպէս էք խօսում....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Կարծ ասեմ, գնացի
Պատրիարքի մօտ,—բայց ձեր անունը
Չասացի նորան։ Ինչպէս ասացի,
Սուտ են ասել ձեզ։ Ես միայն պատմեցի
Նորան դիպուածը, ինչ է իմանամ
Նորա կարծիքը։—Ի հարկէ այդ էլ
Շատ աւելորդ էր, որովհետև ես
Արդէն գիտէի, որ պատրիարքը
Անպիտան մարդ է։ Մի՞թէ չէի կարող
Ուղղակի ձեզ հետ խօսել այդ մասին։

Ի՞նչ հարկաւոր էր ենթարկել աղջկան
Ձեզ պէս մի հօրից զրկուելու վտանգին։—
Բայց այստեղ ի՞նչ կայ։ Մեր պատրիարքի
Անպիտանութիւնն, որ միշտ մընում է
Անփոփոխ, կրկին ուշքի բերեց ինձ։—
Լսեցէք, Նաթան, ասեմ բոլորը։—
Դիցուք, թէ գիտէ նա ձեր անունը.
Աւելի էլ ի՞նչ։ էլ ի՞նչ աւելի—
Նա կարող է խլել աղջկան ձեզանից
Եթէ նա ձերն է, ոչ ուրիշինը։
Կարող է միայն հանել ձեր տանից
Եւ վանքը տանել։—Ուրեմն տուէք
Նորան ինձ, տուէք, ապա թող գայ նա։
Տեսնենք, թէ ի՞նչպէս կը համարձակի
Խլել կրնոջս։—Տուէք ինձ նորան,
Տուէք ինձ, Նաթան։—Թող նա ձեր դուստրը
Լինի, չը լինի, թող հրէայ լինի,
Կամ թէ քրիստոնեայ և կամ ոչ մէկը,
Այդ բոլորովին նոյն է ինձ համար։
Ես ձեզ այդ մասին չեմ հարցնի ոչ այժմ,
Ոչ ուրիշ անգամ երբէք իմ կեանքում։
Թող լինի, ինչպէս որ լինելու է։

ՆԱԹԱՆ

Գուցէ կարծում էք, թէ հարկաւոր է
Ինձ համար ծածկել ճշմարտութիւնը։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Թող լինի, ինչպէս որ լինելու է։

ՆԱԹԱՆ

Ես ոչ ձեր, ոչ էլ ուրիշի առաջ—
Որին այդ բանը պէտք է գիտենալ—
Երբէք չեմ ժխտել, թէ քրիստոնեայ է
Բէխան, և թէ նա իմ որդեգիրն է
Եւ ոչ թէ դուստրը։—Բայց որ չեմ յայտնում
Նորան այդ բանը, այդ մասին պէտք է
Ինձ արդարացնեմ միայն նորա առաջ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ո՛չ, հարկաւոր չէ ձեզ արդարանալ
Եւ նորա առաջ։ Թողէք, որ նա ձեզ
Երբէք չը նայէ ուրիշ աչքերով։
Ոչինչ մի յայտնէք։—Այլև դեռ ևս
Դուք էք նրա տէրը։ Տուէք ինձ նորան.
Նաթա՛ն, խնդրում եմ, տուէք ինձ։ Միայն ես
Եւ երկրորդ անգամ կարող եմ փրկել
Նորան ձեզ համար։

ՆԱԹԱՆ

Դուք կարող էիք։—
Բայց այժմ էլ ոչ։ Այժմ արդէն ուշ է։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչպէս թէ ուշ է։

ՆԱԹԱՆ

Շատ շնորհակալ եմ
Ես պատրիարքից։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Դուք շնորհակա՞լ էք
Նորանից։ Արդեօք ի՞նչ բանի համար։

ՆԱԹԱՆ

Որ այժմ գիտենք ո՞վ են Բէխայի
Ազգականները, որ այժմ գիտենք,
Թէ ո՞ւմ կարող ենք ապահով կերպով
Յանձնել մենք նորան։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Թող դորա համար
Շնորհակալ լինի նորանից, ով որ
Այլ բանի համար պարտական է նրան։

ՆԱԹԱՆ

Եւ դուք Բէխային պիտի նոցանից
Ստանաք, ոչ ինձնից։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Խեղճ Բէխա—ինչքո՞ր

Զը փորձեցիր դու։—Այն, ինչ որ ուրիշ
Որբերի համար բաղդաւորութիւն
Պիտի համարուի, քեզ համար միայն
Անբաղտութիւն է։—Նաթան—ասացէ՛ք,
Ո՞ւր են Ռէխայի ազգականները

ՆԱԹԱՆ

Ո՞ւր են։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եւ ո՞վ են։

ՆԱԹԱՆ

Առ այժմ միայն
Եղբայրն է յայտնի։ Նորանից պիտի
Խնդրէք Ռէխային։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եղբա՞յր։ Ո՞վ է նա,
Զինուոր է նա, թէ հոգևորական։—
Ի՞նչ յոյս կարող եմ ունենալ նրանից։

ՆԱԹԱՆ

Ես կարծում եմ, որ նա ոչ մէկն էլ չէ
Կամ՞ երկուսն էլ է։ Դեռ ևս նորան
Լաւ չեմ ճանաչում։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց ընդհանրապէ՞ս։

ՆԱԹԱՆ

Նա աղնիւ մարդ է։ Ռէխային նրա մօտ
Վատ չէ լինելու։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բայց քրիստոնեայ է։—
Նաթան, երբեմն չեմ հասկանում ձեզ—
Խնդրում եմ ինձ վրայ չը նեղանաք դուք—
Մի՞թէ չի՞ ստիպուի ինքն էլ քրիստոնեայ
Ձևանալ Ռէխան, երբ որ քրիստոնեայ
Ազգականների հետ կեանք կը վարէ։

Մի՞թէ վերջապէս չի դառնայ նա այն,
Ինչ որ ձևանում էր երկար միջոց
Մի՞թէ վերջապէս անպիտան խոտը
Չի խեղդի ցորենը, որ ցանել է՛ք։—
Եւ դորա մասին այնքան անհոգ է՛ք,
Որ ինձ ասում է՛ք, թէ վատ չի ապրի
Ռէխան եղբօր հետ։

ՆԱԹԱՆ

Այդպէս եմ կարծում,
Այդպէս յոյս ունիմ։—Եթէ նորա մօտ
Նա մի բանի մէջ կարիք կունենայ,
Չէ՞ որ ձեզ և ինձ էլի ունի նա։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ կարիք պիտի զգայ նա նորա մօտ
Մի՞թէ չի հոգայ իւր քրոջ համար
Եղբայրը առատ կերակուր, հանդերձ,
Միրգ և զարդարանք։ Քրոջը էլ ուրիշ
Ի՞նչ է հարկաւոր։—Իրաւ է, նորան
Էլի հարկաւոր է մի ամուսին—
Եղբայրը այդ էլ արդէն կը ճարէ
Իւր ժամանակին—մի լաւ քրիստոնեայ։—
Ո՛վ Նաթան, ինչպէս գեղեցիկ է ձեր
Ստեղծած հրեշտակը և ինչպէս այժմ
Պիտ՝ ապականեն նրան ուրիշները։

ՆԱԹԱՆ

Վնաս չունի։ Նա միշտ էլի մեր սիրոյ
Արժանի կլինի։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Իմ սիրոյ մասին
Մի ասէ՛ք այդպէս։ Որովհետև նա
Թոյլ չի տայ խօսել իրանից ոչինչ,
Թէև դա լինէր շատ չնչին մի բան,
Թէև դա լինէր միայն լոկ անունը։—
Սպասեցէ՞ք.—Արդեօք կասկած չէ տանում
Ռէխան, թէ ի՞նչ է պատահում իրան։

ՆԱԹԱՆ

Շատ կարելի է թէև չը գիտեմ
Արդեօք ի՞նչ տեղից։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես էլ չը գիտեմ։—
Բայց ինչ և իցէ պէտք է անպատճառ
Իմանայ Ռէխան, թէ ինչ է սպառնում
Նորան իւր բաղդը, և այդ նախ ինձնից
Պիտի իմանայ։ Ես միտք ունէի
Զը տեսնել Նորան, հետը չը խօսել
Մինչև ես Նորան իմը անուանել
Զը կարողանամ։ Այժմ այդ միտքը
Թողի։ Շտապումեմ։

ՆԱԹԱՆ

Կացէ՛ք, ո՞ւր էք գնում։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Նորա մօտ։ Տեսնեմ արդեօք այդ աղջկայ
Հոգին բաւական քաջութիւն ունի՞,
Որ անէ միակ վճռական քայլը,
Իրան արժանի։

ՆԱԹԱՆ

Այդ ո՞րն է։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այն է,
Եվ այսուհետև ոչ ձեզ և ոչ էլ
Եղբօրը հարցնել—

ՆԱԹԱՆ

Ե՞ւ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Հետևիլ ինձ.
Թէև այդպիսով ստիպուէր նա դառնալ
Մուսուլմանի կին։

ՆԱԹԱՆ

Կացէ՛ք։ Դուք Նորան

Տանը չէք գտնի։ Նա սուլթանի քոյր
Զիտտայի մօտ է։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Շատ ժամանակ է՞։
Եւ ինչի՞ համար։

ՆԱԹԱՆ

Եւ թէ ուզում էք
Նորա եղբօրն էլ այնտեղ հանդիպել,
Գընանք միասին։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Եղբօրը, ո՞րի։
Զիտտայի՞ արդեօք, թէ Ռէխայինը։

ՆԱԹԱՆ

Շատ կարելի է և երկուսինը։
Եկէք գնանք, գընանք, խնդրումեմ ես ձեզ։
(Նա դուրս է տանում Նորան։)

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵԻՈՅԹ

Զիտտայի հարեմիսանեն։

ԶԻՏՏԱ և ՌԷԽԱ, խօսում են միմեանց հետ։

ԶԻՏՏԱ

Ի՞նչպէս ուրախ եմ, ով քաղցր աղջիկ,
Որ քեզ տեսնումեմ։ Միայն թէ մի՛ լինիր
Տխուր և երկչոտ։—Ուրախ կաց, խօսի՛ր
Բաց ինձ քո սիրտը։

ՌԷԽԱ

Ո՛վ իշխանուհի։

ԶԻՏՏԱ

Ռէխա, մի կանչիր ինձ իշխանուհի,
Ոչ, Զիտտա կանչիր—բարեկամ և քոյր։—
Մայր կանչիր։—Անշուշտ ես կարող էի
Քո մայրը լինել։—Դու այդպէս մատաղ,

Խելք և պարկեշտ։ Ի՞նչ, չը գիտես դու
Ի՞նչ չես կարդացել։

ՐԷԽԱ

Ինչ չեմ կարդացել։—
Զիտտա, ծաղրումես փոքր և յիմար
Քրոջդ։ Ես հաղիւ կարող եմ կարդալ։

ՁԻՏՏԱ

Հաղի՞ւ կարող ես, ո՛վ դու սըտախօս։

ՐԷԽԱ

Փոքր ինչ կարդումեմ հօրս գրքածը.
Ես կարծումէի գրքերի մասին
Է խօսքդ, Զիտտա։

ՁԻՏՏԱ

Այո՛, իմ խօսքն է
Գրքերի մասին։

ՐԷԽԱ

Գրքեր կարդալը
Շատ դժուար է ինձ։

ՁԻՏՏԱ

Ճշմարիտ։

ՐԷԽԱ

Այո՛։
Հայրս այնքան շատ չէ սիրում սառը
Գրագիտութիւնը, որ իւր անկենդան
Նշաններովը ճնշումէ միայն
Մարդու ուղեղը։

ՁԻՏՏԱ

Այդ ի՞նչ ես ասում։—
Բայց և մի կողմից իրաւունք ունի։—
Իսկ ինչ որ գիտես....

ՐԷԽԱ

Նորա բերանից
Միայն լսել եմ։ Շատ բանի մասին

Կարող եմ ասել, թէ ի՞նչպէս, ի՞նչտեղ
Եւ ինչի՞ համար ինձ սովրեցրել է։

ՁԻՏՏԱ

Այդպէս ի հարկէ մարդ սովորածը
Լաւ է ըմբռնում։ Այդպէս սովրումէ
Մարդ բոլոր հոգւով և միանգամայն։

ՐԷԽԱ

Անշուշտ և Զիտտան շատ չէ կարդացել,
Կամ գուցէ ոչինչ էլ չէ կարդացել։

ՁԻՏՏԱ

Բայց ինչի՞ այդպէս։—Ես չեմ պարծենում
Գիտնականութեամբ։—Միայն ինչի՞ այդպէս։
Ասա՛ պատճառը, ասա՛ համարձակ։

ՐԷԽԱ

Նա այնպէս պարզ է և արդարամիտ
Այնպէս անկեղծ է, այնպէս բընական.

ՁԻՏՏԱ

Լեռոյ, վերջացրո՛ւ։

ՐԷԽԱ

Հայրս ասումէ,
Որ միշտ այդպէս չէ շատ կարդացողը։

ՁԻՏՏԱ

Ո՛հ, ի՞նչ պատուական մարդ է քո հայրը։

ՐԷԽԱ

Այնպէս չէ՞ միթէ։

ՁԻՏՏԱ

Ի՞նչպէս գիտէ նա
Ուղղակի հասնել իւր նպատակին։

ՐԷԽԱ

Շատ ճշմարիտ է։—Եւ ես այդ հօրը—

ՁԻՏՏԱ

Բայց ի՞նչ եղաւ քեզ, սիրելի Ռէխա։

ՐԷԽԱ

Եւ ես այդ հօրը—

ԶԻՏՏԱ

Ինչի՞ ես լալիս։

ՐԷԽԱ

Եւ ես այդ հօրը—Ո՛հ, պէտք է՞ասեմ—
Օդ, օդ է ուզում իմ սիրտը....
(Արտասուալից աչքերով ընկնում է նորա առաջ։)

ԶԻՏՏԱ

Րէխա,
Սիրելի՛ քոյր իմ, ի՞նչ պատահեցաւ։

ՐԷԽԱ

Եւ ես այդ հօրը պիտի կորցնեմ։

ԶԻՏՏԱ

Պիտի կորցնե՞ս։ Ի՞նչպէս։—Հանգիստ կաց։—
Ոչ երբէք։—Վեր կաց։

ՐԷԽԱ

Ի զուր չասացիր,
Որ դու իմ քոյրն ես, իմ բարեկամն ես։

ԶԻՏՏԱ

Այո՛, քո քոյրն եմ, քո բարեկամն եմ։—
Բայց միայն վեր կաց, թէ չէ ստիպուած եմ
Օգնութիւն կանչել։

ՐԷԽԱ

(Սիրտ առնելով վեր է կենում։)
Ա՛խ, ների՛ր, ների՛ր—
Ցաւից մոռացայ քո ով լինելը։
Զիտտայի առաջ չը պէտք է ողբալ
Եւ յուսահատուիլ։ Զիտտայի վերայ
Կարող է ազդել միայն սառն, անվրդով
Բանականութիւնն։ Եւ ում գործը որ
Սա է պաշտպանում Զիտտայի առաջ
Նա պիտի յաղթէ։

ԶԻՏՏԱ

Ասա՛, ի՞նչ բան է։

ՐԷԽԱ

Ո՛վ իմ բարեկամ, իմ քոյր, մի՛ թոյլ տայ,

Երբէք մի՛ թոյլ տայ, որ մի ուրիշ հայր
Փաթաթեն վզիս։

ԶԻՏՏԱ

Ուրիշ հա՞յր, Րէխա՛,
Փաթաթեն վզի՞դ։ Այդ ո՞վ կարող է,
Ո՞վ է այդ ուզում։

ՐԷԽԱ

Իմ բարի և չար
Դայան է ուզում։—Դու չես ճանաչում,
Զիտտա՛, այդ բարի և չար Դայային։
Թող Աստուած ներէ նորան, թող Աստուած
Վարձատրէ նորան. նա ինձ արել է
Շատ լաւութիւն և շատ էլ վատութիւն։

ԶԻՏՏԱ

Վատութիւն, և քեզ—ուրեմն դժուար
Բարի լինի նա։

ՐԷԽԱ

Ո՛չ, շատ բարի է։

ԶԻՏՏԱ

Ո՞վ է այդ Դայան։

ՐԷԽԱ

Քրիստոնեայ կին է,
Որ մանկու թենից մեծացրել է ինձ,
Ա՛յնպէս մեծացրել։—Դու չես հաւատում։—
Նա միշտ ինձ համար եղել է իբրև
Հարազատ մի մայր։—Աստուած, թող Աստուած
Վարձատրէ նորան—Բայց նա ինձ նոյնպէս
Շատ է վախեցրել, շատ է չարչարել։

ԶԻՏՏԱ

Ինչո՞վ և ինչի՞։

ՐԷԽԱ

Ա՛խ այդ խեղճ կինը—
Ինչպէս ասացի—մի քրիստոնեայ է—
Նա ինձ սիրելով ստիպուած է տանջել։—
Նա այն ցնորասէր կանանցից մինն է,

Որոնք կարծումեն, թէ գիտեն ուղիղ
Միակ, ընդհանուր այն ճանապարհը,
Որ մարդուն տանում է Աստուծոյ մօտ։

ԶԻՏՏԱ

Հիմա հասկացայ։

ՐԷԽԱ

Նոքա ըզգումեն
Կարևորութիւն, որ ամեն մէկին,
Ով որ չէ գընում այդ ճանապարհով,
Տանել նորա վրայ։—Այլ և չեն կարող
Ուրիշ կերպ վարուիլ։ Թէ ճշմարիտ է,
Որ միակ ուղիղ ճանապարհն է այդ,
Ի՞նչպէս կարող են անտարբեր մընալ
Նոքա, երբ իրանց բարեկամներին
Տեսնումեն ուրիշ ճանապարհի վրայ—
Որ նոցա դէպի յաւիտենական
Կորուստն է տանում։ Անկարելի է
Մի և նոյն մարդուն ատել և սիրել։—
Բայց այդ չէ, որ ինձ այժմ ստիպումէ
Բարձրաձայն գանգատ յայտնել նորա վրայ։
Ես ուրախութեամբ այսու հետև էլ
Կը համբերէի նորա խրատներին,
Հառաչանքներին, սպառնալիքներին
Եւ աղօթքներին. այդ բանը ինձ միշտ
Առիթ էր տալիս բարի, օգտակար
Խորհրդածութեան։ Իսկապէս ասել,
Ո՞ւմ ցանկալի չէ զգալ իրան այնքան
Թանգ և սիրելի ուրիշի համար,
Որ մինչև անգամ անտանելի է
Նորան մրտածել, որ նա յաւիտեան
Պիտի կորցնէ մեզ։

ԶԻՏՏԱ

Շատ ճշմարիտ է։

ՐԷԽԱ

Բայց չափը անցաւ. և զորան դէմ դնել
Չեմ կարող ես ոչ խորհրդածութիւն,

Ոչ համբերութիւն, ոչինչ։

ԶԻՏՏԱ

Ի՞նչ բանին։

ՐԷԽԱ

Ինչ որ նա Իսկոյն յայտնեց իբր գաղտնիք։

ԶԻՏՏԱ

Յայտնե՞ց և Իսկոյն։

ՐԷԽԱ

Այո՛, հէնց հիմա։
Մենք այստեղ գալիս ճանապարհի վրայ
Պատահեցանք մի քրիստոնէական
Քանդուած տաճարին։ Յանկարծ կանգնեց նա.
Կարծես ինքն իւր հետ պատերազմումէր.
Եւ թաց աչքերով նայումէր մէկ ինձ.
Մէկ դէպի երկինք։ «Ե՛կ», «ասաց նա ինձ»,
«Ե՛կ այս տաճարի միջով անց կենանք։»
Նա մտաւ, նորան հետևումեմ ես,
Եւ սարսափելով նայումեմ իմ շուրջ
Աւերակներին։ Նորից կանգնեց նա,
Եւ ես տեսնումեմ ինձ մի կիսաւեր
Սեղանի առաջ։ Երևակայիր
Իմ դիրութիւնը, երբ որ նա յանկարծ
Ձեռները կցած և արտասուելով
Ընկաւ իմ առաջ։

ԶԻՏՏԱ

Բարեսիրտ մանուկ։

ՐԷԽԱ

Եւ աստուածութեան անուամբ, որ այնտեղ
Անշուշտ լսել է շատ ջերմ աղօթքներ,
Անշուշտ գործել է պէսպէս հրաշքներ,
Երդուեցնումէ ինձ—ջերմ կարեկցութեամբ
Երդուեցնումէ ինձ, խղճալ իմ անձը.
Գոնեա ներել, որ պէտք է յայտնէ,
Թէ ինչ իրաւունք ունի ինձ վերայ

Իւր եկեղեցին։

ԶԻՏՏԱ (ինքն իրան.)

Խնդմ աղջիկ։— Ես այդ
Գուշակումէի։

ՐԷԽԱ

Նա ասաց, որ ես
Քրիստոնեայ եմ ծնել և մկրտուած եմ,
Որ ես Նաթանի դուստրը չեմ, որ նա,
Նա իմ հայրը չէ։— Աստուած իմ, Աստուած,
Նա իմ հայրը չէ։— Զիտտա, ով Զիտտա,
Ահա ես կրկին քո ոտն եմ ընկնում....

ԶԻՏՏԱ

Ռէխա, մի՛ այդպէս, վեր կաց, շուտ վեր կաց։—
Ահա եղբայրս գալիս է,— վեր կաց։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ

ՍԱԼԱԴԻՆ և ԱՌԱՋԻՆՆԵՐԸ

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ է պատահել, Զիտտա։

ԶԻՏՏԱ

Աստուած իմ,
Ուշքը վերան չէ։

ՍԱԼԱԴԻՆ

Ո՞վ է։

ԶԻՏՏԱ

Դու գիտես....

ՍԱԼԱԴԻՆ

Նաթանի դուստրը։ Ի՞նչ է պատահել։

ԶԻՏՏԱ

Ուշքի եկ, սրդեակ,— Ահա սուլթանը....

ՐԷԽԱ

(Ծունկերի վերայ սողալով և կորագլուխ մօտենում է Սալադինին։)

Ես չեմ վեր կենայ— ես չեմ նայելու
Սուլթանի դէմքին— ես չեմ գնայելու
Նորա աչքերի, նորա ճակատի
Թէ բարութեան և թէ արդարութեան
Արտափայլութեամբ....

ՍԱԼԱԴԻՆ

Վեր կաց....

ՐԷԽԱ

Մինչև որ,
Զը խոստանայ ինձ։

ՍԱԼԱԴԻՆ

Լա՛ւ է, լաւ, վեր կաց....
Ինչ կուզէ լինի խոստանում եմ քեզ։

ՐԷԽԱ

Խնդիրքս այս է, որ չը բաժանեն
Հօրս ինձանից և ինձ իմ հօրից։—
Ես դեռ չը գիտեմ, ո՞վ է այն մարդը,
Որ կամենում է իմ հայրը լինել—
Ոչ էլ ուզում եմ ես այդ գիտենալ։
Միթէ արիւնը, միայն արիւնն է
Մարդուն հայր շինում։

ՍԱԼԱԴԻՆ (բարձրացնում է նորան.)

Ես հասկանում եմ—
Բայց ո՞վ էր արդեօք այնքան խստասիրտ,
Որ և քո գլխում ձգեց այդ միտքը։—
Միթէ այդ արդէն տպագրուած է։

ՐԷԽԱ

Երևի։ Դայան ասաց ինձ, որ նա
Այդ բանը լսել է իմ ծծմօրից։

ՍԱԼԱԴԻՆ

Ծծմօրից։

ՐԷԽԱ

Այո։ Նա հոգին տալիս

Պարտք է համարել յայտնել նորան այդ։

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ, հոգին տալի՞ս և ոչ ցնորուելի՞ս։—
Դիցուք ուղիղ է։ Ի հարկէ միայն
Արիւնը դեռ ևս տալիս չէ մարդուն
Հօր իրաւունքը, հաղիւ երբեմն
Միայն անասունին։ Շատ, շատ, արիւնը
Տալիս է միայն իրաւունք ստանալ
Մեզ այդ անունը։—Դու մի՛ վախենար։—
Գիտես ինչ կանես, երբ որ երկու հայր
Սկսեն իրար հետ քեզ համար կռուել—
Երկուսին էլ թող, երրորդին հայր ա՝ —
Ինձ, ինձ առ քեզ հայր։

ԶԻՏՏԱ

Ո՛հ, այդպէս՞ արա՛։

ՍԱԼԱԴԻՆ

Ես շատ բարի հայր կը լինիմ քեզ համար։—
Բայց կա՛ց, աւելի լաւ բան միտս եկաւ։—
Ինչ հարկաւոր են, ասա՛, քեզ հայրեր.
Բայց եթէ մեռնին։ Լաւ է վաղօրոք
Որոնես մէկին, որ պիտի ապրի
Քեզ հետ մինչև վերջ։ Զուն՞ես այդպիսին....

ԶԻՏՏԱ

Մի՛ կարմրեցնի։

ՍԱԼԱԴԻՆ

Ընդհակառակը

Ուզում եմ կարմրի։ Կարմրիլը ազնուին
Գեղեցկացնում է, ոբքան աւելի
Կը գեղեցկացնէ մի սիրուն աղջկան։—
Մարդ եմ ուզարկել, որ կանչեն ինձ մօտ
Քո հայր Նաթանին և մի ուրիշին։
Գուշակում չե՞ս դու, ով է ուրիշը =

Իրաւունք կը տա՞ս ինձ, Զիտտա։

ԶԻՏՏԱ

Եղբա՛յր։

ՍԱԼԱԴԻՆ

Ահա՛, սիրելի՛, Նորա առաջը
Պիտի շատ կարմրիս։

ՐԷԽԱ

Ո՞ւմ առաջ կարմրիմ....

ՍԱԼԱԴԻՆ

Խորամանկ աղջիկ։ Ուրեմն դեղնիր,
Եթէ ուզում ես.—

(Մտնում է մի սորկուհի և խօսում է Զիտտայի հետ։)

Արդէն եկել են։

ԶԻՏՏԱ

Լա՛ւ։ Ասա՛, թող գան։—Նոքա են, եղբա՛յր։

ՎԵՐՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ

ՆԱԹԱՆ, ՏԱՃԱՐԱԿԱՆ և ԱՌԱՋԻՆՆԵՐԸ

ՍԱԼԱԴԻՆ

Բարով էք եկել, իմ բարեկամներ։—
Քեզ, Նաթա՛ն, պէտք է ամենից առաջ
Յայտնեմ, որ հիմա, երբ որ կամենաս,
Կարող ես փոխդ յետ ստանալ։

ՆԱԹԱՆ

Սուլթա՛ն։

ՍԱԼԱԴԻՆ

Հիմա ինքս քեզ կարող եմ փոխ տալ։

ՆԱԹԱՆ

Սուլթա՛ն։

ՍԱԼԱԴԻՆ

Կարսուանն արդէն եկել է։

Հիմա ես նորից այնպէս հարուստ եմ,
Ինչպէս վաղուց է, որ էլ չեմ եղել։—
Ասա ինձ, որքան հարկաւոր է քեզ,
Որ մեծ գործ սկսես։ Ես գիտեմ, որ և
Վաճառականը միշտ պատրաստ չունի
Ցեռին մեծ դումար։

ՆԱԹԱՆ

Ի՞նչ հարկաւոր է
Առաջ այդ չնչին բանի վրայ խօսիլ։—
Այստեղ տեսնում եմ արտասուող մի աչք,
Որ ցամաքեցնել այժմ ամեն բանից
Աւելի ես հարկաւոր է ինձ։

(Նա մօտենում է Ռէխային)

Դու լա՞յց ես եղել։ Ի՞նչ է պատահել։—
Չէ՞ որ դեռ ես դու իմ դուստրն ես։

ՌԷԽԱ

Հայր իմ։

ՆԱԹԱՆ

Մենք իրար լաւ ենք հասկանում։
Հերիք է, որդեակ, ուրախ, հանգիստ կաց։
Եթէ որ սիրող դեռ ես քոնն է
Եթէ չէ սպառնում նորան այլ կորուստ—
Հօրդ չես կորցնի։

ՌԷԽԱ

Ո՛չ, ամենևին։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ամենևին ո՞չ։—Ապա սխալուած եմ։
Ինչ բան որ կորցնել մարդ չէ վախենում,
Երբէք չէ կարծել, թէ ունեցել է,
Ոչ էլ ցանկացել է այն ունենալ։—
Շատ լաւ։—Այժմ, Նաթան, բանը փոխուեցաւ։—
Սալադին, մենք քո հրամանով եկանք։
Բայց ես քեզ իզուր խառնեցի գործում,
Էլ մի՛ աշխատիր։

ՍԱԼԱԴԻՆ

Էլի շտապեցար

Ո՛վ երիտասարդ։—Մի՞թէ ամեն բան
Պէտք է անպատճառ քո կամքով լինի,
Ցանկութիւնդ միշտ նախագուշակուի։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ահա լսում ես, տեսնում ես, սուլթան։

ՍԱԼԱԴԻՆ

Ի հարկէ—վատ է, որ դու աւելի
Հաւատի չէիր քո գործի մասին։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այժմ հաւատի եմ։

ՍԱԼԱԴԻՆ

Ո՛վ որ այդպէս շատ
Պնդում է արած լաւութեան վերայ,
Նա այն լաւութիւնը յետ է առնում։
Փրկածդ չէ քո սեփականութիւն.
Թէ այդպէս լինէր, ամեն աւազակ,
Որ կրակն է ընկնում ագահութենից,
Քեզ պէս հերոս է։

(Մօտենում է Ռէխային, որ ամենի նորան տաճարականի մօտ։)

Ե՛կ, իմ սիրելի,
Ե՛կ, մի՛ այդպէս խիստ լինիր նորա հետ։
Եթէ նա այդպէս չը լինէր, այդպէս
Ջերմարիւն, հրպարտ, նա քեզ չէր փրկի.
Մէկը միւսի տեղ պիտի ընդունես։—
Ե՛կ, ամաչեցրու նորան, արա այն,
Ինչ որ նա ինքը պէտք է արել էր
Ե՛կ, խոստովանիր նորան քո սէրը
Եւ առաջարկիր քո սիրտն ու ձեռը.
Եւ եթէ նա քեզ կամերժէ, եթէ
Կը մոռանայ նա, ինչպէս այդ քայլով
Դու անհամեմատ շատ բան ես անում
Նորա համար, քան թէ նա քեզ համար....
Բայց ինչ է արել քեզ համար։ Փոքր ինչ
Ծուխ է կրել տուել, մե՛ծ բան է արել—
Այն ժամանակը ոչինչ նմանութիւն

Զը կայ նորա և իմ Ասադի մէջ.
Նա նորա դիմակն է միայն կըրում,
Ոչ նորա սիրտը։ Ե՛կ, իմ սիրելի....

ԶԻՏՏԱ

Գնա՛, գնա՛, սիրելի։ Աւելի մեծ է
Երախտիքը քան շնորհակալութիւնդ։

ՆԱԹԱՆ

Ո՛չ։ Կա՛ց, Սալադին, կա՛ց, Զիտտա։

ՍԱԼԱԴԻՆ

Դու էլ։

ՆԱԹԱՆ

Այստեղ և մէկը նոյնպէս ձայն ունի։

ՍԱԼԱԴԻՆ

Ո՞վ է ուրանում։—Խօսք չըկայ, Նաթան,
Որ բարերարը այստեղ ձայն ունի,
Եւ թէ ուզում ես—առաջին ձայնը։
Տեսնում ես, Նաթան, բոլորը գիտեմ։

ՆԱԹԱՆ

Ո՛չ, դեռ չը գիտես։ Խօսքս իմ մասին չէր։
Կայ մի ուրիշը, որին պէտք է նախ
Լսես, Սալադին։

ՍԱԼԱԴԻՆ

Ո՞վ է։

ՆԱԹԱՆ

Ըէխայի

Եղբայրը։

ՍԱԼԱԴԻՆ

Նորա եղբա՞յրը։

ՆԱԹԱՆ

Այո՛։

ՐԷԽԱ

Եղբա՞յրս։ Ուրեմն ես եղբայր ունի՞մ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

(Ցանկարծ տաքանալով սթափում է իւր անուշադրութիւնից։)
Ո՞ւր է, ո՞ւր է նա։ Դեռ ևս այստեղ չէ՞։
Չէ՞ որ նա այստեղ պիտի հանդիպէր։

ՆԱԹԱՆ

Համբերութիւն։

ՏԱՃԱՐԱԿԱՆ (սաստիկ դառնութեամբ.)

Նա Ըէխայի համար
Հայր գտաւ.—ինչի՞ եղբայր չի գտնի։

ՍԱԼԱԴԻՆ

Գլխաւը լըսացաւ։ Քրիստոնեա՛յ, երբէք
Ասադ եղբօրս բերնից չէր դուրս գայ
Այդ ստոր կասկածը։—Լա՛ռ, շարունակիր։

ՆԱԹԱՆ

Ներիր—իմ կողմից ներում եմ նորան։
Ո՞վ գիտէ, թէ ինչ կը մտածէինք,
Եթէ լինէինք մենք նորա տեղը,
Նորա հասակում։
(Բարեկամաբար մօտենում է տաճարականին։)
Ի հարկէ, ասպետ—
Կասկածն է ծնունդ անվստահութեան
Եթէ դուք իսկոյն ինձ ձեր իսկական
Անունն ասէիք....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ։

ՆԱԹԱՆ

Դուք Շտաուֆէն չէք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ապա ո՞վ եմ ես։

ՆԱԹԱՆ

Կուրդ ֆօն Շտաուֆէն է

Ձեր անունն.

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ապա ի՞նչ է անունս։

ՆԱԹԱՆ

Լէօ ֆօն Ֆիլնէկ։

ՏԱՃԱՐԱԿՆՆ

Ի՞նչ։

ՆԱԹԱՆ

Զարմանո՞ւմ էք։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Իրաւունք ունիմ: Այդ ո՞վ է ասում:

ՆԱԹԱՆ

Ես, որ կարող եմ աւելի լաւ
Շատ բան ասել ձեզ, թէև չեմ ասում,
Թէ սուտ էք խօսում:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ձէ՞ք ասում:

ՆԱԹԱՆ

Գուցէ
Ես այդ անունը պատկանում է ձեզ:—

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես այդ կարծում եմ:—

(Ինքն իրան.)

Աստուած է սորան
Այսպէս խօսեցնում:

ՆԱԹԱՆ

Ձեր մայրը ինքը
Ազգով Շտաուֆֆէն էր: Իսկ ձեզ մեծացրեց
Նորա եղբայրը, այն է ձեր քեռին,
Որին յանձնեցին ձեզ ձեր ծնողները,
Երբ կոշտ կլիմայի պատճառով իրանք
Թողին Գերմանիան և եկան այստեղ:—
Կուրդ ֆօն Շտաուֆֆէն էր նորա անունը:
Շատ կարելի է, որ Հոգէորդի
Ընդունեց նա ձեզ:—Վաղուց է, ինչ որ
Եկաք նորա հետ դուք այս կողմերը

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ ասեմ, Նաթան:—Բոլորն ուղիղ է,
Նա մեռաւ: Ինքս նոր հասայ այստեղ
Մեր ասպետներին օգնութիւն եկած
Վերջին գնդի հետ:—Բայց, բայց, ասացէք
Արդեօք Ռէխայի եղբայրը ի՞նչ գործ
Ունի սորա հետ:

ՆԱԹԱՆ

Ասացէ՛ք, ձեր հայրը....

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ի՞նչ, դուք նորան էլ ճանաչում էիք:

ՆԱԹԱՆ

Իմ բարեկամն էր:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ձեր բարեկա՞մն էր:
Մի՞թէ....

ՆԱԹԱՆ

Կոչվում էր Վոլֆ Ֆիլնէկ. բայց նա
Գերմանացի չէր:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Այդ է՞լ գիտէք դուք:

ՆԱԹԱՆ

Նորա կինը միայն գերմանացի էր:
Նա Գերմանիա ուղևորուել էր
Ձեր մօր հետ միայն կարճ ժամանակով:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Էլ ոչինչ, Նաթան, խնդրում եմ ես ձեզ:—
Ո՞վ է Ռէխայի եղբայրը:

ՆԱԹԱՆ

Դուք:

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ե՞ս:

ՌԷԽԱ

Սա իմ եղբա՞յրը:

ԶԻՏՏԱ

Քոյր ու եղբայր են:

ՍԱԼԱԴԻՆ

Քոյր ու եղբայր են:

ՌԷԽԱ

(Ուզում է վազել տաճարականի մօտ.)

Սիրելի եղբա՛յր:

ՏԱՃԱՐԱԿԱՆ (յետ քաշուելով.)

Ե՛ս սորա եղբայր:

ՌԷԽԱ

(Կանգնում է և դառնում է Նաթանին.)

Անկարելի է.
Նա այդ չէ ըզգում:—Աստուած իմ, Աստուած

Մենք խաբեբայ ենք։

ՍԱԼԱԴԻՆ (տաճարականին.)

Խաբեբա՞յ։ Այդպէ՞ս

Մտածումես դու։ Ինքդ ես խաբեբայ։
Քո մէջ ամեն բան կեղծ է. պատկերդ,
Ձայնդ, շարժուածքդ—բոլորը կեղծ է։
Այսպիսի քրոջն ուրանա՞լ։ Դընա։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

(Զոնարհութեամբ մօտենում է Նորան.)

Սուլթան, մի՛ այդպէս վատ մեկնիր և դու
Իմ ափշութիւնը։ Մի վայրկեանի մէջ
Մի՛ ուրանար դու ինձ ու Ասպին,
Որին դժուար թէ երբէք տեսել ես
Իմ դերութեան մէջ։

(Մօտենալով Նաթանին.)

Դուք ինձ տալիս էք,
Նաթան, շատ բան և շատ էլ առնումէք։
Ո՛չ, դուք աւելի շատ էք տալիս ինձ,
Քան թէ առնումէք։ Անչափ աւելի։—

(Գրկելով Բէխային.)

Իմ սիրելի՛ քոյր։

ՆԱԹԱՆ

Բլանդա Ֆօն Ֆիլնէկ։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Բլանդա։—Ոչ Բէխա։ Տէր Աստուած, մի՞թէ
Էլ ձեր Բէխան չէ։—Մերժումէք Նորան.
Քրիստոնէական անունը տալով,
Դուք իմ պատճառով մերժումէք Նորան.
Նաթան, Նաթան, ի՞նչ մեղաւոր է նա։

ՆԱԹԱՆ

Այժմ երկուսդ էլ իմ զաւակներն էք.
Մի՞թէ իմ աղջկայ եղբայրը նոյնպէս
Որդիս չէ—երբ որ ինքը կամենայ։

(Այն ինչ նա գրկախառնում է Բէխային և տաճարականին, Սալադինը անհանգիստ և զարմացած մօտենում է իւր քրոջը։)

ՍԱԼԱԴԻՆ

Քոյր, ի՞նչ ես ասում։

ԶԻՏՏԱ

Սիրտս յուզուած է։

ՍԱԼԱԴԻՆ

Իսկ ես դողումեմ մի աւելի մեծ
Յուզմունքի առաջ։ Լաւ պատրաստ եղիր
Այդ բանին, Զիտտա, որքան կարող ես։

ԶԻՏՏԱ

Ի՞նչպէս։

ՍԱԼԱԴԻՆ

Այստեղ ե՞կ, Նաթան, խօսք ունիմ։

(Նաթանը մօտենում է Նորան, իսկ Զիտտան քրոջը և եղբօրը, որ յայտնէ նոցա իւր համակրութիւնը։ Սալադինը և Նաթանը կամաց խօսում են.)

Նաթան, նոր իսկոյն չասացի՞ր դու....

ՆԱԹԱՆ

Ի՞նչ։

ՍԱԼԱԴԻՆ

Որ գերմանացի չէր սոցա Հայրը։
Ապա ո՞վ էր նա։

ՆԱԹԱՆ

Նա ինձ այդ մասին
Ոչինչ չէ ասել։

ՍԱԼԱԴԻՆ

Բայց ընդհանրապէս
Արևմուտցի չէր, Ֆրանկ չէր։

ՆԱԹԱՆ

Որ Ֆրանկ չէր
Նա այդ չէր ծածկում։—Նորա ամենից
Սիրելի լեզուն էր պարսկերէնը։

ՍԱԼԱԴԻՆ

Ի՞նչ, պարսկերէ՞նը.—Էլ ի՞նչ եմ ուզում։—
Այդ նա է, նա է...

ՆԱԹԱՆ

Ո՞վ։

ՍԱԼԱԴԻՆ

Իմ եղբայրը.
Աստ եղբայրս։

ՆԱԹԱՆ

Երբ որ այդ բանը
Ինքդ իմացար, ահա ապացոյցն

Այս գրքի մեջ է։

(Տալիս է Նորան ժամագիրքը։)

ՍԱԼԱԴԻՆ (չուտ բաց է անում գիրքը։)

Վա՛հ, Նորա ձեռքը...

ՆԱԹԱՆ

Նոքա դեռ ևս ոչինչ չը գիտեն

Քեզնից կիմանան որքան որ պէտք է

ՍԱԼԱԴԻՆ (գիրքը թերթելուց յետոյ։)

Ի՞նչ, չը ճանաչեմ ես իմ հարազատ

Եղբօր որդկերանց. ապա քի՞զ թողնեմ։

(բարձր ձայնով։)

Նոքա են, նոքա, Զիատա, նոքա են,

Քո և իմ եղբօր որդիքն են սոքա։

(Շտապում է գրկել նոցա։)

ԶԻՏՏԱ (հետևում է Նորան։)

Ա՛հ, ինչ եմ լսում։—Մի՞թէ ուրիշ կերպ

Կարող էր լինել։

ՍԱԼԱԴԻՆ (տաճարականին։)

Հիմա, կամակի՛ր,

Հիմա ակամայ պիտի ինձ սիրես։

(Րէխային։)

Ուզում ես, թէ չէ, հիմա քո հայրն եմ։

ԶԻՏՏԱ

Ես էլ քո մայրն եմ։

ՍԱԼԱԴԻՆ (դարձեալ տաճարականին։)

Որդի՛, իմ Ա՛սադ, Ասադիս որդի։

ՏԱՃԱՐԱԿԱՆ

Ես քո արիւնն իմ։—Այսպէս ուրեմն

Երեխայութեան իմ երազները

Բոլորովին էլ երազներ չէին։

(Ընկնում է Նորա առաջ։)

ՍԱԼԱԴԻՆ

Ցե՛ս չարագործին։ Սա արդէն գիտէր

Այս մասին մի բան, և էլի ինձ իւր

Սպանողն էր շինում։ Սպասի՛ր, սպասի՛ր դու։

(Այն ինչ նոքա կրկին ընկնում են իրար գիրկը, վարագոյրը իջնում է։)

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՀՍՍՌ Գրա.ՀՍՍՌ

15R.

Ärztliches Institut Spulmeyer Bautzen

1380

2013